# Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 48 (1648) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 28, 2013
VOLUME 33, NO. 48 (1648) SATURDAY, DECEMBER 28, 2013

MASSIS Weekly
1060 N. Allan Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Հայաստանցիներու 66 Տոկոսը Բացասական Կը Գնահատէ Խորհրդային Միութեան Փլուզումը

Ամերիկեան «Կալոփ» ընկերութեան կողմէ կատարուած հանրային կարծիքի հարցախոյզի արդիւնքներուն համաձայն նախկին Խորհրդային Միութեան երկիրներուն մէջ ԽՍՀՄ-ի փլուզման համար ամենաշատ ափսոսանք յայտնած են հայաստանցիները:

«Կալոփ»-ի հարցախոյզը կատարուած է ԱՊՀ անդամ 11 երկիրներուն եւ Վրաստանի մէջ անցնող ամռան ամիսներու, իսկ արդիւնքները հրապարակուեցան Դեկտեմբեր 23-ին:

1991-ի անկախութեան հանրաքուէի ընթացքին արձանագրուած գրեթէ 100 տոկոս «այո»-էն 22 տարի ետք՝ հայաստանցիներուն երկու երրորդը՝ 66 տոկոսը, համոզուած է որ Խորհրդային Միութեան փլուզումը Հայաստանին վնաս էր:

Հայաստանի բնակիչներու միայն 12 տոկոսը ներկայիս կը կարծէ, որ ԽՍՀՄ-ի փլուզման հետեւանքով Հայաստան որպէս պետութիւն շահած է: Հայաստանցիներուն 10 տոկոսի կարծիքով՝ Խորհրդային Միութեան փլուզումը հայերու համար ոչ լաւ էր եւ ոչ էլ վատ:

Ըստ «Կալոփ»-ի, խորհրդային կարօտախտի ցուցանիշներով Հայաստանին կը զիջին նոյնիսկ Ռուսաստանն ու Պելառուսը: Ռուսաստանի մէջ Խորհրդային Միութեան փլուզումին համար ցաւ յայտնած են մասնակիցներու միայն 55 տոկոսը: Ռուսաստանցիներու 19 տոկոսի համոզմամբ՝ ԽՍՀՄ-ի փլուզումը Ռուսաստանի Դաշնութեան օգուտ էր: Պելառուսի մէջ, ուր մինչ օրս կ'օգտագործուին խորհրդային ժամանակաշրջանի

Շար.ը էջ 4

## Հաստատուած է Մաքսային Միութեան Հայաստանի Անդամակցութեան «Ճանապարհային Քարտէզը»



Վլատիմիր Փութին կը ստորագրէ Մաքսային Միութեան Հայաստանի Անդամակցութեան »Ճանապարհային Քարտէզը«

Դեկտեմբեր 24-ին Մոսկուայի մէջ կայացած Եւրասիական Տնտեսական Բարձրագոյն Խորհուրդի նիստի ընթացքին, Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահները յայտարարութիւն ստորագրած են Մաքսային Միութեան եւ Բելառուսի Հանրապետութեան, Ղազախստանի Հանրապետութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետութեան միանալու միջոցառումներու ծրագրի կապակցութեամբ: Այս մասին պաշտօնապէս յայտարարած է Ռուսաստանի Նախագահ Վլատիմիր Փութին:

Զարմանալիօրէն սակայն, կողմերէն մէկը՝ Ղազախստան Նախագահ Նուրսուլթան Նազարպաեւ յայտարարած է որ, իր երկիրը պատրաստ է ստորագրել Մաքսային Միութեան Հայաստանի անդամակցութեան «ճանապարհային քար-

Շար.ը էջ 5

## Հայաստանի Մէջ Ծնողներուն 23 Տոկոսը Կ'ապրի իր երկիրէն դուրս

Ամերիկեան «ՓԻՈՒ» հետազօտական կենտրոնը հրապարակած է աշխարհի տարածքին գաղթականներու վերաբերեալ զեկոյց մը, որուն մէջ տեղ գտած է նաեւ Հայաստանը, որ արտագաղթի ծաւալներով աշխարհի առաջատարներէն մէկն է: Ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ 1990-2013 թուականները:

Ըստ զեկոյցի՝ մարդիկ Հայաստանէն կը հեռանան գործազրկութեան բարձր մակարդակի, ընկերային փոքրամասնութիւններու նկատմամբ անհանդուրժողականութեան, ինչպէս նաեւ երկրէն ներս հեռանկարներ չտեսնելու պատճառներով:

Զեկոյցի համաձայն աճած է գաղթականներու հոսքը դէպի Մերձաւոր Արեւելք, Հիւսիսային Ամերիկա, ինչպէս նաեւ որոշ արեւմտեան եւրոպական երկրներ: Հակառակ տեղի ունեցած փոփոխութիւններուն, մէկ բան կը մնայ անփոփոխ. Միացեալ Նահանգները կը շարունակէ մնալ այն երկիրը, որն ամենաշատ ներգաղթեալներ ունի: Այստեղ գաղթականներու թիւը 23 տարուայ ընթացքում կրկնապատկուած է՝ հասնելով շուրջ 46 միլիոնի: Աշխարհի գաղթականներու 10-էն 6-ը այնպիսի երկիրներէն են, ուր մէկ շունչին տարեկան եկամուտը կը կազմէ 1036-իէն մինչեւ 12615 տոլար:

Զեկոյցին մէջ անդրադարձ կայ նաեւ այն գաղթականներու, որոնք իրենց երկիրը լքած են ազգային սահմաններու փոփոխութեան պատճառով: Այս կը վերաբերի նաեւ նախկին Խորհրդային Միութեան մէջ ապրող միլիոնաւոր մարդոց, որոնցմէ շատերը բռնեցին արտագաղթի ճամբան, երբ ԽՍՀՄ փլուզումէն յետոյ գրեթէ ամէն անկիւն ունեցաւ իր սահմանը:

Ռուսաստանի տնտեսական աճը ներքաշած է յատկապէս նախկին ԽՍՀՄ երկիրներու բնակիչներուն, որոնց շնորհիւ Ռուսաստանը այսօր ունի շուրջ 11 միլիոն գաղթական:

## Ֆրանսահայ Համայնքը Խիստ Դժգոհ է Եւրոպական Դատարանի որոշումով

Ֆրանսահայ համայնքին մօտ զայրոյթ յառաջացուց անցեալ շաբաթ Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի այն վճիռը, որ եկաւ արդարացնելու Զուիցերիական դատարանի կողմէ դատապարտուած Թուրք ազգայնականին:

Դեկտեմբերի 17-ին Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանը արդարացուց Թուրք քաղաքական գործիչ, Բանուորական կուսակցութեան ղեկավար Տողու Պերինչեքին, որուն Զուիցերիոյ դատարանը 2007-ին մեղաւոր հռչակած էր Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար եւ որու նկատմամբ 12 հազար զուիցերիական ֆրանք տուգանքի որոշում կայացուցած էր:

Ֆրանսահայ համայնքը, որ տարիներ շարունակ կը պայքարի ժխտումը քրէականացնող օրէնքի ընդունման համար, եկաւ ընդվզումով ընդունելու Եւրոպական Դատարանի այս որոշումը: Հայկական կազմակերպութիւններուն միացան նաեւ Ֆրանսայի Խորհրդարանի բազմաթիւ պատգամաւորներ, որոնց շարքին Վալերի Պուայէ եւ Ռընէ Ռուքէ:

Վալերի Պուայէ, որ 2011 թուականի Դեկտեմբերին Ֆրանսայի Ազգային Ժողովին ներկայացուցած էր Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծ մը եւ արժանացած վաւերացումի, սակայն հետագային Սահմանադրական Խորհուրդի կողմէ մերժուած էր, տարածեց հաղորդագրութիւն մը դատապարտելով այն տխուր փաստը, որ մինչ այժմ նախագահ Ֆրանսուա Օլանտ չէ իրականացուցած իր խոստումը՝ ժխտողականութեան դէմ օրէնք ընդունելու մասին, եւ այն, որ հայկական պատուիրակութեան հետ Օլանտի՝ Դեկտեմբերի 16-ին ունեցած հանդիպումէն յետոյ հրա-

Շար.ը էջ 4

## Մայր Աթոռը 100 Հազար Տոլար Տրամադրած է Սուրիոյ հայկական Դպրոցներուն

Սուրբ Ծննդեան տօներու առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 100 հազար տոլար գումար փոխանցած է Դամասկոսի Հայոց Թեմին՝ Սուրիոյ հայկական դպրոցներու կարիքներուն համար: Այս մասին հաղորդեց Մայր Աթոռի տեղեկատուական համակարգը:

«Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուշադրութեան կենտրոնում շարունակում է մնալ Սիրիայում տիրող իրավիճակը եւ սիրիահայութեան ծանր կացութիւնը: Հայ Առաքելական Եկեղեցու աշխարհասփիւռ թեմերը Մայր Աթոռի միջոցով պարբերաբար աջակցութիւն են ցուցաբերում սիրիահայութեանը՝ յաղթահարելու դժուարին պայմանները», - ըսուած է հաղորդագրութիւնում:


## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Կաթողիկէ համայնքի Ս. Ծնունդի տօնին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ հայ Կաթողիկէ համայնքը, մաղթելով յաջողութիւն, բարօրութիւն եւ բարգաւաճ տարի մը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# 1996-ից մնացած «մասունքը» Սահմանադրական Դատարանում

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*ՀՀԿ-ն պայմանագիր է վաւերացրել օրէնքի խախտումով, ընդդիմադիր կուսակցութիւնները որոշել են դիմել Սահմանադրական դատարան: 1996 թուականից սկսած, Հայաստանի Հանրապետութեան նախագահի թեկնածուները եւ նրանց թիմերը ՍԴ են դիմում օրէնքի խախտումով իրականացուած ընտրութիւնն անվաւեր ճանաչելու համար: ՍԴ-ն ճանաչում է, բայց ոչ թէ ընտրութիւնը անվաւեր, այլ կեղծիքով ընտրուած իշխանութեան թեկնածուին:*

1996 թուականից ի վեր Հայաստանի Սահմանադրական դատարան կոչուող կառոյցը Գինեսի գրքի միանձնեայ ռեկորդակիր է պետութեան եւ հասարակութեան դէմ գործած յանցագործութիւնները հաստատելու հարցում:

Հիմա չորս կուսակցութիւն, որից առնուազն երեքի ներկայացուցիչները նախորդ տարիներին մի քանի անգամ ապարդիւն թակել են ՍԴ դռները, կրկին թակում են դրանք, որ վիճարկեն ՀՀԿ-ի հերթական պետական յանցագործութիւնը: ՍԴ-ն այդպիսով դարձել է արդէն ոչ միայն Հայաստանում իշխող քաղաքական ուժերի յանցագործութիւնները հաստատող կառոյց, այլ նաեւ Հայաստանի ոչ իշխանական քաղաքական ուժերի ադեկվատութեան չափորոշիչ:

Իսկ ինչ անել, եթէ չդիմել ՍԴ: Դեկտեմբերի 23-ին ԱԺ դարպասների մօտ հաւաքուած մի քանի հարիւր քաղաքացիները խորհրդարանի ոչ իշխանական ուժերից պահանջել են վայր դնել մանդատը: Ի պատասխան հնչել է, թէ դուք մեզ մի սովորոցրէք ինչպէս վարել քաղաքական պայքարը: Իսկապէս, սովորեցնել պէտք չէ, քանի որ իմաստ չունի, միեւնոյն է սովորող չկայ: Բանն այն է, որ քաղաքական ուժերը սխալ չեն անում, որ ճիշդը սովորեն: Նրանք լաւ էլ գիտեն, թէ ինչ են անում. անում են այն, ինչի հնարաւորութիւնը նրանց տրուած է հայ-ռուսական «գազային» պայմանագրով:

> 1996 թուականից ի վեր Հայաստանի Սահմանադրական դատարան կոչուող կառոյցը Գինեսի գրքի միանձնեայ ռեկորդակիր է պետութեան եւ հասարակութեան դէմ գործած յանցագործութիւնները հաստատելու հարցում

Փութինը հիմար չէ, որ Հայաստանում իշխանութեանը պարտադրի անասելի ստրկական պայմաններ, մինչ այդ չապահովելով այդ գործընթացի ընդդիմադիր «թիկունքը»: Հայաստանի բոլոր հիմնական կուսակցութիւններն այս կամ այն կերպ ընդունել են նրա խաղի կանոնները: Նրանցից միայն Ժառանգութիւնն է, որ յստակ դէմ է արտայայտուել Մաքսային միութեանը: Բայց, Ժառանգութիւնն է միակը, որն ուղղակի կամ անուղղակի չի պատասխանել հանրութեանը յուզող մի հարցի՝ ինչու Րաֆֆի Յովհաննիսեանը յետընտրական պայքարի ամենաթեժ պահին գնաց Մոսկուա: ՀԱԿ-ը յայտարարել է, որ կատարուած փաստերի դէմ չի պայքարում, ՀՅԴ-ն յայտարարել է, որ անվտանգութեան նկատառումներով ընդունում է Մաքսայինը, իսկ ԲՀԿ-ն յամառօրէն հրաժարւում է կարծիք յայտնել ՄՄ-ի մասին, յայտարարելով, թէ չգիտէ դա ինչ է:

Ճիշդ են անում նրանք, թէ սխալ, արդարացուած է նրանց հաշուարկը, թէ ոչ, ազնիւ են հանրութեան հետ, թէ խորամանկ, լրիւ այլ հարց է: Ակնյայտ է, որ նրանք գիտեն, թէ ինչ են անում, եւ եթէ այդ քաղաքական ուժերը գիտեն, թէ ինչ են անում եւ ինչի համար, ի՞նչ իմաստ ունի փորձել նրանց որեւէ բան սովորեցնել: Հասարակութիւնը պէտք է սովորի ինքը: Պէտք է սովորի ոչ թէ սովորեցնել, այլ թելադրել քաղաքական ուժերին: Այդ առումով, որեւէ նշանակութիւն չունի իհարկէ, թէ տուեալ քաղաքական ուժն արտաքին կողմնորոշման ինչ ծիրում է կամ արտաքին կենտրոնների հետ յարաբերութեան ինչ մակարդակում: Այսինքն, Հայաստանի ներքին քաղաքականութեան վրայ արտաքին որեւէ ազդեցութիւն չէզոքացնելու մէկ տարբերակ կայ այլեւս՝ հասարակութիւնը պէտք է սովորի, այսինքն պէտք է գտնի քաղաքական ուժերին թելադրելու մեխանիզմները:

Եթէ քաղաքական ուժը գործում է հասարակութեան թելադրանքով, ապա արդէն որեւէ նշանակութիւն չունի, թէ «ինչամէտ» ուժ է:

Իհարկէ, մինչ քաղաքական ուժերին թելադրելու մեխանիզմին հասնելը, հանրութիւնը դեռ պէտք է հասնի ներկայիս պայքարի հայեցակարգային առանցքի մշակմանը՝ ինչ է այդ պայքարը, ինչի համար, որն է պայքարի ելակէտը, առաջնային թիրախները, որն է գերակայ խնդիրը եւ պատճառահետեւանքային միջավայրը, մետաստազները: Բայց, այդ առանցքի կմախքը կարծես թէ զգալիօրէն որոշակի է՝ սեղանին Հայաստանի ինքնիշխանութեան, անկախութեան հարցն է: Առայժմ սակայն, այդ հարցի հանրային հետապնդման գործընթացում աւելի շատ են էմոցիաները, որոնց շարքին կարելի է դասել նաեւ անհատապաշտութեան եւ դաւադրապաշտութեան զանազան դրսեւորումները:

Այդ ամէնը խանգարում է արդիւնաւէտութեանը, այն դէպքում, երբ եղած ռեսուրսը բաւարար է շատ աւելիի համար:

Քաղաքական ուժերը թող պարզեն իրենց հարցերը ՍԴ-ում: Եթէ նրանց պէտք է հանրային աջակցութիւն, ապա նրանք ունեն բաւարար կուսակցական ռեսուրս, աւտոբուսներով այդ աջակցութիւնը ՍԴ դիմաց ապահովելու համար:

Իսկ հանրութեանը բացարձակապէս հետաքրքիր չէ, թէ ինչ է արել ՀՀԿ-ն՝ օրէնքով, թէ ապօրինի է վաւերացրել համաձայնագիրը, այսինքն օրէնքո՛վ, թէ ապօրինի է յանձնում պետութիւնը: Ի՞նչ կապ ունի՝ գողը բնակարանը թալանում է տիրոջը համոզելով, թէ նրանից թաքուն: Ի՞նչ կապ ունի ՀՀԿ-ի քուէարկութեան օրինականութիւնը կամ սահմանադրականութիւնը պետութեան ճակատագրին սպառնացող բուն խնդրի հետ: Այդ խնդրի հետ կապ ունի թերեւս այն, թէ ինչքան շուտ ակտիւ հանրութեանը կը յաջողուի մշակել ինքնիշխանութեան համար պայքարի հայեցակարգային ընդհանուր առանցք եւ գտնել քաղաքական ուժերին յետագայ գործողութիւններ թելադրելու մեխանիզմ:

«ԼՐԱԳԻՐ»

# Հայաստանը Կապիտուլիացուեց Միաձայն

Խորհրդարանը 72 կողմ, 0 դէմ ձայների յարաբերակցութեամբ վաւերացրեց Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարութիւնների միջեւ Դեկտեմբերի 2-ին ստորագրուած միջկառավարական համաձայնագիրը, որով, բացի «Հայ-Ռուսգազարդում» Հայաստանի կառավարութեան ունեցած 20 տոկոսանոց բաժնեմասից, ռուսական «Գազպրոմ» ընկերութիւնը ստանում է առաջիկայ 30 տարում Հայաստանում գործելու անսահմանափակ լիազօրութիւններ: «Ստորացուցիչ», «նուաստացուցիչ», «խայտառակ», «վասալային» եւ այլ որակումների արժանացած այդ համաձայնագրի քուէարկութիւնը տեղի է ունեցել ոչ էլեկտրոնային տարբերակով. պատգամաւորները քուէարկել են ձեռքերը վեր բարձրացնելու միջոցով, քանի որ նիստի ընդմիջման ընթացքում «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Զարուհի Փոստանջեանը հանել էր քուէարկութեան համար նախատեսուած՝ ՀՀԿ-ական պատգամաւորների քարտերը: Իսկ առանց այդ քարտերի պատգամաւորները չէին կարող քուէարկել: Խորհրդարանական ոչ իշխանական խմբակցութիւնները չեն մասնակցել քուէարկութեանը՝ դուրս գալով ԱԺ նիստերի դահլիճից: Բոյկոտն այս խմբակցութիւնների համար սեփական դէմքը փրկելու լաւագոյն լուծումն էր: Նրանք այս համաձայնագրին դէմ այնքան էին խօսել, որ պէտք է միայն դէմ քուէարկէին: Սակայն, բացառութեամբ մի քանի պատգամաւորների, դէմ չէին կարող քուէարկել, քանի որ դէմ քուէարկել այս համաձայնագրի վաւերացմանը, կը նշանակէր՝ դէմ քուէարկել Ռուսաստանին: Ընդդիմութիւնը կարողացել է յարմար պահը գտնել եւ դուրս գալ դահլիճից, երբ ՀՀԿ եւ ՕԵԿ անդամ պատգամաւորները կողմ էին քուէարկում: Այս՝ «0 դէմ» օպերացիայի հեղինակները, թերեւս, առաջնորդուել են այն յոյսով, որ Ռուսաստանի համար բաւարար կը լինի հետեւեալ պարզաբանումը. իրենք չէին կարող կողմ քուէարկել համաձայնագրին, քանի որ ընդդիմութիւն են, բայց դէմ էլ չեն քուէարկել, քանի որ անմնացորդ սիրով են լցուած դէպի Ռուսաստանը: Բնականաբար, ոչ իշխանական պատգամաւորները տեղի ունեցածը որակում են՝ որպէս յաղթանակ, յայտարարում են, որ քուէարկութիւնն ապօրինի է, պատրաստւում են այդ հարցով դիմել Սահմանադրական դատարան (նոյն այն Սահմանադրական դատարան, որն ընդամէնը մէկ շաբաթ առաջ ընդամէնը մէկ րոպէում այս խայտառակ համաձայնագիրը ճանաչեց՝ որպէս ՀՀ Սահմանադրութեանը համապատասխանող), եւ այլն: Սակայն հասկանալի է, որ դա բացի որոշակի ներքին աղմուկից, որեւէ այլ արդիւնք չի ունենալու: Փոխարէնը, երեկուայ հիմնական արդիւնքը համարուելու է այն, որ Հայաստանի ինքիշխանութեան վերջին նշոյլները Ռուսաստանին յանձնող այս համաձայնագիրը ՀՀ ԱԺ-ում վաւերացուել է 72 կողմ եւ 0 դէմ ձայների յարաբերակցութեամբ: Մինչդեռ, եթէ բոլոր ոչ իշխանական պատգամաւորները մասնակցէին քուէարկութեանը, պատկերը կը լինէր 72 կողմ, 54 դէմ, ինչը գոնէ ապագայ սերունդներին հնարաւորութիւն կտար պնդելու, որ Հայաստանի կապիտուլիացիայի ակտն ընդունուել է ոչ թէ միաձայն, այլ լրջագոյն դիմադրութեամբ:

> Համաձայնագրին դէմ այնքան էին խօսել, որ պէտք է միայն դէմ քուէարկէին: Սակայն, դէմ չէին կարող քուէարկել, քանի որ դէմ քուէարկել այս համաձայնագրի վաւերացմանը, կը նշանակէր՝ դէմ քուէարկել Ռուսաստանին

«168 ԺԱՄ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Նիկոլ Փաշինեան. «Հասել Ենք Այն Արդիւնքին, Որ Հետապնդել Ենք»

«Ազգային ժողովը հայ - ռուսական համաձայնագրերի փաթեթը վաւերացնելու մասին որոշում չի կայացրել», -«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամաւոր, Հայ ազգային կոնգրէս խմբակցութեան անդամ Նիկոլ Փաշինեանը՝ մեկնաբանելով խորհրդարանում անցկացուած քուէարկութիւնը:



ՀԱԿ խմբակցութեան անդամ Նիկոլ Փաշինեան

«Այսինքն՝ այդ համաձայնագրերը Ազգային ժողովում չեն վաւերացուել, այսինքն՝ մենք չունենք որեւէ փաստաթուղթ՝ կանոնակարգով սահմանուած կարգով ընդունուած, որը կը փաստի, որ կողմ է քուէարկել այսքան պատգամաւոր, դէմ է քուէարկել այսքան պատգամաւոր, ձեռնպահ է քուէարկել այսքան պատգամաւոր, էդպիսի փաստաթուղթ գոյութիւն չունի», - ասաց Փաշինեանը՝ շարունակելով. - «Եթէ չկայ փաստաթուղթ, նշանակում է՝ չկան քուէարկութեան արդիւնքներ, եթէ չկան քուէարկութեան արդիւնքներ, նշանակում է՝ չկայ որոշում, եթէ չկայ որոշում, նշանակում է՝ համաձայնագրերի փաթեթը չի վաւերացուել, այսինքն՝ դրանք իրաւական ուժ չունեն»:

Ոչ իշխանական պատգամաւորների կողմից Սահմանադրական դատարան դիմելու հնարաւորութեան առնչութեամբ ընդդիմադիր խորհրդարանականը ասաց. - «Գիտէք, դա իրաւական վերլուծութեան խնդիր է, բայց իմ նախնական գնահատականը հետեւեալն է: Սահմանադրական դատարանում պէտք է վիճարկել ինչ-որ մի արդիւնք, որից, ասենք, դժգոհ ես կամ չես ընդունում: Ես, անկեղծ ասած, կարծում եմ, որ մենք հասել ենք այն արդիւնքին, որ հետապնդել ենք, այսինքն՝ համաձայնագրերը վաւերացում չեն անցել, «ՀայՌուսգազարդ»-ի 20 տոկոսը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետութեան սեփականութիւն, եւ այս փաստը վիճարկելու անհրաժեշտութիւն ես չեմ տեսնում»:

## ՀՀԿ Ժպտում Է Իշխանական Ուժերի Պահուածքի Վրայ

ՀՀԿ-ն ընդամէնը ժպտում է Դեկտեմբերի 23-ին ԱԺ-ում ոչ իշխանական ուժերի պահուածքի վրայ, քանի որ չկարողացան համախմբուել. լրագրողների հետ հանդիպմանն ասաց ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը:

Ինչ վերաբերում է ոչ իշխանական ուժերի մանդատները վայր դնել-չդնելու հարցին, ապա պարոն Սահակեանը համոզուած է՝ չեն դնի. «Դա պոռթկումով յայտարարութիւն էր. մանդատները խաղալիք չեն, ովքեր պրոֆեսիոնալ են, հասկացան, որ պէտք չէ դա անել ու նաեւ՝ ԱԺ-ում միայն ՀՀԿ չի կարող լինել: Այդպէս արտայայտւում են նրանք, որոնք շատ յուզական են վերաբերւում քաղաքականութեանը: Մանդատը տուել է ժողովուրդը, նա էլ ետ է վերցնելու»:

Նա հասարակութեանը խաբկանքի տանող ճանապարհ համարեց ոչ իշխանական ուժերի այն յայտարարութիւնները, թէ համաձայնագրերի վաւերացումն օրինական չէ, քանի որ հաշուիչ ժամանակաւոր յանձնաժողովը լիարժէք կազմով չի աշխատել. «Հաշուիչ յանձնաժողովն ընդամէնը ժամանակաւոր է ու կատարում է տեխնիկական աշխատանք, մանաւանդ տեղի է ունեցել բաց քուէարկութիւն, հետեւաբար՝ խնդիր չի առաջանում, թէ քւորում չի եղել՝ ՀՀԿ-ն ապահովել է քուէարկութիւնն ու քւորումը:

Դրսի կանգնած այդ 200-300 հոգին (Նկատի ունի ԱԺ դարպասների մօտ բողոքի ակցիա անցկացնող քաղաքացիներին-խմբ.) դա չեն հասկանում»:

Ըստ նրա՝ ընդդիմութեան հիստերիան այնտեղից սկսուեց, երբ իրենց պահանջը չկատարուեց, թէ հաշուիչ յանձնաժողովը պէտք է նիստ գումարէր. «Դա ԱԺ նախագահի լիազօրութիւնների շրջանակներում է եւ վերաբերում էր փակ, գաղտնի քուէարկութեանը: Յանձնաժողովի բոլոր անդամներն էլ եղել են նիստերի դահլիճում ու կարող էին փառահեղ կատարել հաշուարկը: Իսկ լուսնոտային ձեւով քարտերը տանելուց յետոյ ստիպուած եղանք ձեռքերով քուէարկութիւն կատարել»:

Գալուստ Սահակեանը չի զղջում, որ ԱԺ ամբիոնից ոչ իշխանական պատգամաւորների որոշ ելոյթներից յետոյ նրանց անուանել էր ճիւաղ. «Եթէ մարդ մէկը միւսին դաւաճան է համարում, ուրեմն ճիւաղ է»:

## «Հայաստանը Դարձել Է Ռուսաստանի Կայսրութեան Մի Մասը».- Դաւիթ Շահնազարեան

Սեպտեմբերի 3-ից սկսած Հայաստանը դարձել է Ռուսաստանի կայսրութեան մի մասը՝ կարծում է քաղաքագէտ Դաւիթ Շահնազարեանը: Անդրադառնալով եւրասիական տնտեսական բարձրագոյն խորհրդի ընթացքում Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետութեան միանալու միջոցառումների ծրագրի հաստատման փաստին՝ քաղաքագէտը ընդգծեց, որ դրանով վաւերացուեց երկրորդ հակասահմանադրական փաստաթուղթը:

Առաջինն, ըստ նրա, գազային համաձայնագրերն էին. «Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները, որպէս այդպիսին, գոյութիւն չունեն եւ ներկայացնում են ռուսական կայսրութեան շահերը: Հայաստանի տնտեսութիւնը ամբողջապէս կապուած է Կրեմլին: 2013թ.-ը մենք փակում ենք նաեւ խորը բարոյահոգեբանական ճգնաժամով, որ առկայ է մեր հասարակութեան մէջ»,- ասաց պարոն Շահնազարեանը:

Կանխատեսումներ անելով յաջորդ տարուայ համար՝ քաղաքագէտը նշեց, որ 2014թ.-ին կարող է կայանալ միասնական քաղաքական օրակարգը:

## Հայաստանի Խորհրդարանը Վաւերացրեց Գազային Համաձայնագրերը



Խումբ մը ցուցարարներ կը բողոքեն Ազգային Ժողովի մուտքին

Հայաստանի Ազգային ժողովը բաց քուէարկութեամբ վաւերացրեց Ռուսաստանի հետ գազային երեք համաձայնագրերը, որոնք ստորագրուել են Դեկտեմբերի 2-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի Երեւան կատարած այցի ժամանակ:

Վիճայարոյց փաստաթղթերի վաւերացման օգտին քուէարկեցին 77 պատգամաւորներ՝ իշխող կոալիցիայի ներկայացուցիչները, դէմ եւ ձեռնպահ քուէարկողներ չեղան, քանի որ ոչ իշխանական խմբակցութիւնների պատգամաւորները քուէարկութեան ժամանակ լքեցին խորհրդարանի նիստերի դահլիճը:

Խորհրդարանական ոչ իշխանական չորս ուժերը՝ «Բարգաւաճ Հայաստան»-ը, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն ու «Ժառանգութիւն»-ը կարծում են, որ փաստաթղթերը չեն վաւերացուել, քանի որ կոպտօրէն խախտուել է «ԱԺ կանոնակարգ» օրէնքը:

«Ռուսաստանի Դաշնութիւնը, աշխարհը պէտք է իմանայ, որ այս համաձայնագիրը չի վաւերացուել», - ասաց Հայ ազգային կոնգրէս խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը՝ շարունակելով. - «Եթէ չվաւերացուած արձանագրութեան հիման վրայ որեւէ մէկը Հայաստանի Հանրապետութեան սեփականութիւնը կը փոխանցի ուրիշին, ուրեմն՝ այդ ուրիշի հետ մենք կ'ունենանք խօսակցութիւն արդէն սահմանուած կարգով»:

Քուէարկութիւնը տապալելու նպատակով գործի անցան ընդդիմադիրները: Զարուհի Փոստանջեանը («Ժառանգութիւն»), օգտուելով քուէարկութիւնից առաջ յայտարարուած 20 րոպէ ընդմիջումից, հաւաքեց որոշ հանրապետականների էլեկտրոնային քուէարկութեան քարտերը՝ անհնար դարձնելով էլեկտրոնային քուէարկութիւնը: «Ուրիշ արդիւնաւէտ տարբերակ՝ կանխելու այս խայտառակ համաձայնագրի քուէարկութիւնը, չկար», - ասաց նա:

Ազգային ժողովի նիստը ուղեկցւում էր խորհրդարանի շէնքի մօտ անցկացուող բողոքի ակցիայով, որի մասնակիցները խորհրդարանականներից պահանջում էին չվաւերացնել այդ համաձայնագրերը, քանի որ այդ փաստաթղթերով, նրանց համոզմամբ, Հայաստան կորցնում է իր էներգետիկ անկախութիւնը:

## «Իշխանութիւնները Նոր Ուժ Են Բացայայտել»,- Ուրիխանեան

ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Ուրիխանեանը շատ երկար պէտք է մտածի, որպէսզի այս տարուայ ընթացքում իշխանութիւնների 3 ձեռքբերում նշի:



ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Ուրիխանեան

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա նշեց՝ իշխանութիւնները իրենց համար բացայայտել են այն ակտիւ ուժը՝ Հանրապետութեան գործունակ ակտիւ, գիտակից ու գործունակ քաղաքացիներին եւ նրանց շահերը առաջնորդող քաղաքական ուժերին, որոնց հետ անհրաժեշտ է հաշուի նստել: Պարոն Ուրիխանեանը սա համարում է ձեռքբերում, սակայն չի կարող կանխատեսել՝ արդեօ՞ք այդպէս են մտածում իշխանութիւնները:

Տարուայ բացթողումները նշելու համար ԲՀԿ խօսնակին կրկին երկար ժամանակ է անհրաժեշտ:

Այնուամենայնիւ, անդրադառնալով ԱԺ-ում տեղի ունեցած իրադարձութիւններին, պարոն Ուրիխանեանը նշեց, որ լրագրողների վարքագծում որեւէ անիրաւաչափ գործողութիւն չի տեսել: Ու ամէն լրագրող ինքն է որոշում իր անելիքները:

ԱԺ պատգամաւորը նաեւ տեղեկացրեց, որ գազային պայմանագրի շուրջ իրականացուած քուէարկութիւնը եւ հաշուարկը ապօրինութիւն էր, ինչը որակել են իր բազմաթիւ գործընկերները, ուստի հարցը պէտք է վիճարկուի ՍԴ-ում:

Նրա խօսքերով՝ ԱԺ հաշուիչ յանձնաժողովը կոլեգիալ մարմին է, եւ կոլեգիալ որոշում պէտք է կայացնէր:

ԲՀԿ պատգամաւորը վստահեցրեց, որ ԲՀԿ-ն 2014 թ. շարունակելու է նոյն քաղաքական կուրսը իրականացնել:

# ԼՈՒՐԵՐ

## «Դուռը Դէպի Եւրոպա Փակուած Է, Բայց Կողպուած Չէ». Ռիչարդ Կիրակոսեան

«Սեպտեմբերի 3-ի որոշումը փակեց դուռը դէպի Եւրոպա, բայց, բարեբախտաբար, դուռը կողպուած չէ»-.Դեկտեմբերի 24-ին լրագրողների հետ հանդիպմանն ասաց «Տարածաշրջանի հետազօտութիւնների կենտրոնի» տնօրէն Ռիչարդ Կիրակոսեանը:

Նա նշեց, որ նոր փորձեր են արւում յարաբերութիւնների նոր սահմաններ մշակելու Հայաստանի եւ Եւրոպայի միջեւ, նոր իրաւական փաստաթուղթ է պատրաստւում: Բայց Ռիչարդ Կիրակոսեանը առանձնացրեց երկու մարտահրաւէր, նախ այն, որ Եւրոպական միութիւնը այլեւս Հայաստանին այլ կերպ է դիտում, «Սեպտեմբերի 3-ի արդիւնքն այն էր, որ Հայաստանն աւելի շատ կեղծաւոր է դարձել եւ ոչ մրցունակ, ոչ թէ որոշման պատճառով, այլ այն ձեւով, թէ ինչպէս այդ որոշումը կայացուեց»: Երկրորդ մարտահրաւէրը այն է, որ Եւրոպական միութիւնը փոխւում է, շատերը ԵՄ-ի մէջ ասում են, որ Հայաստանը եւ Արեւելեան գործընկերութեան որոշ երկրներ չարժեն այն քաղաքական կապիտալին, որ ներդրւում է իրենց համար, հետաքրքրութիւնները փոխւում են դէպի Միջին արեւելք Միջերկրածովեան տարածաշրջան: Ռիչարդ Կիրակոսեանը շեշտեց, որ Հայաստանը պէտք է համոզի ԵՄ-ին եւ ցոյց տայ իր մարտունակութիւնը:

Խօսելով գալիք տարուայ Հայաստանի առաջ ծառացած միւս արտաքին մարտահրաւէրների մասին՝ վերլուծաբանն ասաց, որ ոչ մի փոփոխութիւն չի ակնկալւում տարածքների հետ կապուած եւ իրական մարտահրաւէրը այն է, որ



Քաղաքագէտ
Ռիչարդ Կիրակոսեան

Ադրբեջանը պէտք է իր մարտահրաւէրը եւ վերաբերմունքը փոխի, ոչ թէ Հայաստանը: Ինչ վերաբերում է հայ-թուրքական յարաբերութիւններին, ապա այստեղ եւս 2014թ շատ բան պէտք չէ ակնկալել, «Թուրքական կողմը կը փորձի նոյն կերպ վարել կեղծաւոր քաղաքականութիւն, անկեղծ չլինել Հայաստանի հետ եւ քաղաքական թատրոն նախաձեռնել»: «Թուրքական կառավարութիւնը պէտք է ինքը որոշի, թէ ինչ կերպ պէտք է յարաբերութիւնները զարգացնի եւ ինչ պէտք է անի: Հայաստանի քաղաքականութիւնը Թուրքիայի հետ աւելի ուժեղ է: Թուրքիայում տեղի ունեցաւ կոռուպցիոն սկանդալ, այս առումով Թուրքիայի իշխանութիւնը թուլացել է: Հայ-թուրքական յարաբերութիւնների առումով Թուրքիան դեռեւս մնում է Ադրբեջանի պատանդը»,- ասաց Ռիչարդ Կիրակոսեանը:

## Տէր-Պետրոսեանը Ներկայացրել Է «Հայկական Մայդանի« Չկայացման Իր Բացատրութիւնը

Հայ ազգային կոնգրէս կուսակցութեան (ՀԱԿ) ղեկավար, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը կարծում է, որ եւրաասոցացումից հրաժարումը Հայաստանում հասարակական մեծ ընդվզում չառաջացրեց, քանի որ այստեղ «հակառուսականութիւն, որպէս երեւոյթ, երբեւէ գոյութիւն չի ունեցել եւ հիմա էլ գոյութիւն չունի»:

ՀԱԿ հանրապետական խորհրդի նիստում Տէր-Պետրոսեանը իր ելոյթում անդրադարձել է այն հարցին, թէ ինչո՞ւ Հայաստանում մայդան տեղի չունեցաւ եւ հայ ժողովուրդն, ի տարբերութիւն ուկրաինացիների, չընդվզեց Ասոցացման պայմանագրից հրաժարուելու եւ Մաքսային միութեանը միանալու անակնկալ որոշման դէմ: Նա դէպքերի այսպիսի զարգացման համար նշել է երեք հիմնական պատճառ:

«Անհնար է ժխտել, որ վերջիվերջոյ հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնն ապահովուել եւ հայոց պետականութիւնը վերականգնուել է Մեծ Հայքի ռուսական տիրապետութեան տակ յայտնուած տարածքում: Հետեւաբար, անհնար է նաեւ այս իրողութիւնը ջնջել հայ ժողովրդի պատմական յիշողութիւնից՝ վերածուած գրեթէ կենսագոյութեան բնոյթի ենթագիտակցութեան, ինչը յատուկ է մանաւանդ ցեղասպանութեան ենթարկուած ազգերին»,- հակառուսական տրամադրութիւնների բացակայութիւնը այսպէս է բացատրել առաջին նախագահը:

Ըստ Տէր-Պետրոսեանի՝ յաջորդ պատճառը նոյնպէս առնչւում է պատմութեանը, բայց պատմական դասերի առումով:

«Դասերից ամենադառն, անշուշտ, 1920 թուականի ողբերգութիւնն է, երբ Արեւմուտքի վրայ անհաշուենկատ խաղադրոյք կատարելու եւ, ըստ էութեան, հակառուսական դիրքորոշում որդեգրելու հետեւանքով, մեր երկրի ժամանակի իշխանութիւնները ոչ միայն չկարողացան համնել Արեւմտահայաստանի ազատագրման նպատակին, այլեւ կորցրին առաջին հանրապետութեան de facto եւ de jure տարածքի ուղիղ կէսը (Ղարսի նահանգը, Սուրմալուի գաւառը եւ Նախիջեւանը), անկախութիւնն էլ վրադիր: Միւս դասերը մեր աչքի առաջ են: Նորանկախ Մոլդովայի, Վրաստանի եւ Ադրբեջանի իշխանութիւնները, կորցնելով իրականութեան զգացողութիւնը, առաջին իսկ օրուանից որդեգրեցին կոշտ հակառուսական դիրքորոշում, ինչի պատճառով ունեցան պետականութեան կայացման հետ կապուած լրջագոյն խնդիրներ՝ ուղեկցուած զգալի տարածքային կորուստներով: Ի տարբերութիւն այդ պետութիւնների, 1990-ական թուականներին Հայաստանը ոչ միայն խուսափեց նրանց բաժին ընկած ճակատագրից, այլեւ խոհեմութիւն ունենալով հակասովետական պայքարը չվերածելու հակառուսականի, կարողացաւ պահպանել թէ՛ իր տարածքային ամբողջականութիւնը, եւ թէ՛ էապէս նպաստել Արցախի ազատագրման գործին»,- ասել է Տէր- Պետրոսեանը:

Եւ վերջապէս Հայաստանում



Հայաստանի առաջին նախագահ
Լեւոն Տէր-Պետրոսեան

մայդանի չկայացման երրորդ պատճառը, ըստ Տէր-Պետրոսեանի, հայ ժողովրդի խորը հիասթափութիւնն է Արեւմուտքից ու նրա կիրառած երկակի ստանդարտներից:

«Երբ 2008 թուականին Հայաստանում մայդանից աւելի հզօր բողոքի ալիք գոյութիւն ունէր, Արեւմուտքը, բացառապէս աշխարհաքաղաքական նկատառումներով, ոչ միայն չնկատելու տուեց համաժողովրդական այդ ընդվզումը, այլեւ անվերապահօրէն թիկունք կանգնելով տասը զոհերի եւ հարիւրաւոր քաղբանտարկեալների գնով իշխանութիւնը բռնազաւթած Սերժ Սարգսեանին ու նրա աւազակախմբին, աչք փակեց ինչպէս այդ, այնպէս էլ նրանց բազմաթիւ այլ յանցագործութիւնների վրայ: Աւելին, վեց տարի շարունակ չզլացաւ նաեւ գովեստներ շռայլել Սերժ Սարգսեանի հասցէին՝ նրան կոչելով հայ ժողովրդին արժանի առաջնորդ ու հրաշալի նախագահ, դրանով ամրապնդելով նրա յանցաւոր իշխանութիւնը եւ ճանապարհ հարթելով բոլոր յաջորդ ընտրութիւնների կեղծման եւ ժողովրդավարութեան ու մարդու իրաւունքների հետագայ ոտնահարման համար»:

2008-ին տեղի ունեցած ընտրութիւնները վիճարկած նախագահի նախկին թեկնածուն կարծում է, որ եթէ Արեւմուտքը Հայաստանի պարագայում անէր Ուկրաինայի ընթացիկ իրադարձութիւնների առթիւ կատարած քայլերի թէկուզ մէկ տոկոսը, այն է՝ 2008-ի փետրուարեան շուրջօրեայ ցոյցերի ժամանակ Հայաստանի իշխանութիւններին ընդամէնը զգուշացնէր խաղաղ ցուցարարների նկատմամբ ուժի կիրառման անթոյլատրելիութեան մասին, ապա Հայաստանում այսօր իրավիճակը բոլորովին այլ կը լինէր, եւ «ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Եւրամիութիւնը չէին կանգնի ներկայիս քաղաքական ֆիասկոյի առջեւ»:

«Եթէ Արեւմուտքն այժմ դժգոհում է Արեւելեան գործընկերութեան երկրների վրայ Ռուսաստանի գործադրած ճնշումներից, դրանում նախեւառաջ թող իրեն մեղադրի, որ այդ գործօնը ի սկզբանէ հաշուի չէր առել: Աւելին, հիմքեր կան պնդելու, որ Եւրամիութիւնն իր անհաշուենկատ քաղաքականութեամբ որոշ առումով նոյնիսկ սադրեց առկայ հանգուցալուծումը: Մինչեւ եւրաասոցացման գաղափարի նախաձեռնումը Ռուսաստանը Ուկրաինայի եւ Հայաստանի առջեւ Մաքսային միութեանը միանալու կոնկրետ պահանջ չէր դրել, բայց երբ տեսաւ, որ բացէիբաց փորձ է արւում այդ երկրները դուրս բերել իր ազդեցութեան գօտուց, հանդէս եկաւ կտրուկ դիրքորոշմամբ»,- ասել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

## Հայաստանցիներու 66 Տոկոսը

Շարունակուածէջ 1-էն

պետական խորհրդանիշերը, իսկ խորհրդային տօնացոյցի զգալի մասը դեռ ուժի մէջ է, ԽՍՀՄ-ի փլուզումը որպէս բացասական երեւոյթ բնութագրած է ժողովուրդի միայն 38 տոկոսը:

Նախկին խորհրդային երրորդ սլաւոնական հանրապետութեան՝ Ուքրանիոյ մէջ, բնակչութեան 56 տոկոսը այսօր բացասաբար կը գնահատէ Խորհրդային Միութեան փլուզման փաստը:

Ինչ կը վերաբերուի Հայաստանի դրացի երկիրներուն, ապա թէ Վրաստանի, եւ թէ Ատրպէյճանի մէջ Խորհրդային Միութեան փլուզումը բացասաբար գնահատողներու թիւը շատ աւելի փոքր է, քան Հայաստանի մէջ: Այսպէս, Վրաստանի բնակիչներու 37 տոկոսը համոզուած է, որ Խորհրդային Միութեան փլուզման արդիւնքով իրենց երկիրը շահել է, վրացիներու 33 տոկոսի կարծիքով ալ՝ երկիրը խորհրդային կայսրութեան վերանալէն ետք լուրջ վնասներ կրած է:

Ատրպէյճանի անկախութեան առաջին երկու տասնամեակները դրականօրէն գնահատողներու թիւը Հարաւային Կովկասի մէջ ամենաբարձրն է: Ատրպէյճանցիներու 44 տոկոսը կը կարծէ, որ Խորհրդային Միութեան փլուզումը Ատրպէյճանի համար դրական երեւոյթ էր:

## Ֆրանսահայ Համայնքը Խիստ Դժգոհ Է

Շարունակուածէջ 1-էն

պարկուած պաշտօնական մամուլի հաղորդագրութիւնը, ոչ մէկ խօսք կ՚ըսէ Հայոց ցեղասպանութեան ժխտման քրէականացման օրինագիծի մասին:

Իսկ Ռենէ Ռուքէ, որ Ազգային Ժողովի Ֆրանսա-Հայաստան բարեկամութեան խումբի նախագահն է, ինչպէս նաեւ Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Ժողովի Ֆրանսայի պատուիրակութեան նախագահն է, յատուկ յայտարարութեամբ մը եկաւ յայտնելու թէ, Եւրոպայի Դատարանի որոշումը վերջնական չէ, քանի որ Զուիցերիան կրնայ պահանջել, որ հարցը ուղարկուի Եւրոպայի Դատարանի բարձրագոյն ատեան:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Հայ Եւրոպական Խորհուրդ Թուրքիոյ Մէջ Հերթական Անգամ կը Ոտնահարուի Մտքի Ազատութիւնը

*Մեծ դժգոհութեամբ եւ ընդվզումով իմացանք, ազատախոհ մտաւորական Սեւան Նշանեանի դէմ արձակուած, «ապօրինի շինարարութեան համար» երկու տարուայ ազատազրկման Թրքական «արդարադատութեան» որոշումը:*

*Մենք վստահ ենք, որ այդ որոշումը ունի զաղտնի քաղաքական ծալքեր: «Շիրինճէ»-ի մէջ Նշանեանի կատարած շինարարական աշխատանքները պատճառ չէն կրնար ըլլալ նման դատական վճիռի մը: Եղածը Թուրքիոյ մէջ ազատ մտածողութեան սահմանափակում է եւ յանցագործութիւն կաղապարուած գաղափարներու դէմ պայքարի, լայնախոհութեան, նորարարութեան եւ հրապարակայնութեան դէմ:*

*Հայ Եւրոպական Խորհուրդը խստիւ կը դատապարտէ եւ անընդունելի կը նկատէ, «Այշէ Նուր Զարագոլու»-ի անուան մարդկային իրաւանց մրցանակ տացած, Սեւան Նշանեանի ազատազրկման կասկածելի դատավճիռը:*

*Մեր ձայնը կը միացնենք Թուրքիոյ մէջ թէ դուրս- բոլոր անոնց, որոնք կը հաւատանժողովրդավարացման, խօսքի ազատութեան, մարդու իրաւունքներու գերակայութեան եւ ճշմարիտ արդարութեան:*

*Նշանեանի խօսքերով. «Եղածը մեծ պատերազմի մը մէջ փոքր ճակատամարտ մը կորսնցնելու կը նմանի»:*

*Հայ-Եւրոպական Խորհուրդ*
*23/12/2013*

# Պոլսահայ Սեւան Նիշանեանը Պատիժը Կրելու Համար Ներկայացել է Դատախազութիւն



*Ստամբուլահայ յայտնի լեզուաբան, «Թարաֆ» պարբերականի նախկին լրագրող Սեւան Նիշանեանը ներկայացել է Իզմիր նահանգի Սելչուքի շրջանի դատախազութիւն՝ յայտնելով, որ պատրաստ է պատիժը կրելու համար բանտ նստել:*

*Սեւան Նիշանեանը Twitter-ի իր էջից տեղեկացրել է, որ ներկայացել է Սելչուքի դատախազութիւն: «Այսօր պաշտօնապէս ներկայացայ դատախազութիւն: Յունուարի 2-ին Թորբալըի բանտ եմ մտնելու: Ենթադրաբար 2 տարի եմ այնտեղ անցկացնելու»,-գրել է Սեւան Նիշանեանը:*

*Նշենք, որ օրեր առաջ վճռաբեկ դատարանը հաստատել էր դեռեւս 2008-ին Իզմիրի Սելչուքի շրջանի քաղաքացիական գործերով դատարանի կայացրած վճիռը Սեւան Նիշանեանի նկատմամբ*

*Սեւան Նիշանեանը, անդրադառնալով իր դէմ կայացրած վճռին, ասել է, թէ իրեն դատել են իր սեփականութիւն հանդիսացող շինութեան մէջ փոքրիկ խորդանոց կառուցելու համար:*

*Նշենք, որ Սեւան Նիշանեանը Հայոց ցեղասպանութեան մասին մշտապէս բարձրաձայնել է Թուրքիայում եւ աչքի է ընկել իր անվախ պահուածքով:*

# Հաստատուած է Մաքսային Միութեան Հայաստանի Անդամակցութիւնը

*Շարունակուած էջ 1-էն*

*տէզը», բայց ղարաբաղեան հիմնախնդրի հարցով պարզաբանումներ կը պահանջէ:*

*Եւրասիական տնտեսական բարձրագոյն խորհուրդի նիստին Ղազախստանի նախագահը ըսած է որ, Հայաստանի մասով «ճանապարհային քարտէզը» ընդհանուր առմամբ համաձայնեցուած է, եւ կը կարծեմ, կարելի է զայն ընդունիլ: «Միաժամանակ հարց կը ծագի Մաքսային Միութեան սահմանի հետ կապուած: Ուրկէ պիտի անցնի այն՝ նկատի առնելով ղարաբաղեան հակամարտութիւնը, այս հարցը կը մնայ բաց: Հետեւաբար մենք գործընկերներու հետ «ճանապարհային քարտէզներ» կը ստորագրենք, բայց յատուկ կարծիքով, որ կը զեկուցուի»,- ըսած է Նազարպաեւ:*

*Նազարպաեւ նաեւ յոյս յայտնած է, որ փաստաթուղթի համաձայնեցման ընթացքին փորձագէտները կը գտնեն այս հարցի լուծումը:*

*Հայաստանի իշխող Հանրապետական Կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեան «անընդունելի» որակեց Նազարբաեւի այս կեցուածքը, յայտարարելով որ, Հայաստան Մաքսային Միութիւն մուտք պիտի գործէ Արցախի հետ միասին:*

*Հայաստանեան քաղաքագէտներ կը շարունակեն կասկածով մօտենան Ռուսաստանի իսկական նպատակին՝ Հայաստանի Մաքսային Միութեան լիիրաւ անդամ տեսնելու հարցով:*

*«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին, Կովկասի ինստիտուտի տնօրէն Ալեքսանդր Իսկանդարեան յայտնած է, որ «ճանապարհային քարտէզը» բոլոր հարցերու պատասխանը չի տար եւ բանակցութիւնները դեռ յառաջիկային են, իսկ թէ այդ բանակցութիւններու արդիւնքով Հայաստանն ու Ռուսաստանը ինչպիսի համաձայնութեան կու գան, տակաւին յստակ չէ:*

*«Գոյութիւն չունի Եւրասիական Միութիւն: Դա նախագիծ է: Գոյութիւն չունի նաեւ Միացեալ տնտեսական տարածութիւն, դա նոյնպէս նախագիծ է: Մաքսային Միութեան վերաբերեալ առաջին փաստաթղթերը, եթէ չեմ սխալւում, ստորագրուեցին դեռ 1996 թուականին: Այն ժամանակ այդ միութեան մաս պէտք է կազմէին Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղըզստանը, Ուզբեկստանը եւ Տաջիկստանը: Այսօր իր ելոյթում Փութինն ասաց, որ պէտք է կողմնորոշուենք այն բացառութիւնների հետ կապուած, որոնք կը լինեն Հայաստանի ու Ղրղըզստանի հետ յարաբերութիւններում: «Բացառութիւններ» բառը այստեղ առանցքային նշանակութիւն ունի: Սեպտեմբերի 3-ին ընդամէնը քաղաքական որոշում կայացուեց, եւ այդ որոշումը այն մասին էր, որ Հայաստանը Եւրոպային Միութեան հետ չի ստորագրելու Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գօտու մասին համաձայնագիրը: Եւ ոչ թէ որոշում էր Մաքսային Միութեանը միանալու մասին, եւ այդ որոշումը վերաբերում էր աւելի շատ Ուկրաինային ու, ի դէպ, Բելառուսին եւս, քան Հայաստանին», - ըսած է Ալեքսանդր Իսկանդարեան:*

*Տարածաշրջանային Հետազօտութիւններու կեդրոնի տնօրէն Ռիչըրտ Կիրակոսեան իր կարգին յիշեցուցած է, Դեկտեմբեր 2-ին Երեւանի մէջ Փութինի այն խօսքերը, որ չի կրնար յստակ ժամկէտ նշել, թէ երբ Հայաստան կը դառնայ Մաքսային Միութեան լիիրաւ անդամ:*

*«Վստահ չեմ, որ Ռուսաստանը իրօք մտադիր է հարկադրել Հայաստանին, որպէսզի այն դառնայ Մաքսային Միութեան անդամ, որովհետեւ խոչընդոտները զգալի են, որպէսզի Ռուսաստանը, այսպէս ասած, լուրջ ջանքեր գործադրի՝ համնելու միութեանը Հայաստանի լիիրաւ անդամակցութեանը: Աւելի շուտ Հայաստանի իշխանութիւնները, պաշտպանական նկատառումներից ելնելով, ձգտում են, որքան հնարաւոր է արագ ու հեռու գնալ այդ ճանապարհով», - աւելցուցած է Կիրակոսեան:*



# ԱՒԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ. ԻՍԼԱՄԱՑՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՄԵՐ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻՆ

*ՍԱԳՕ ԱՐԵԱՆ*



*Մեր հրատապ նիւթը*

*Թուրքիոյ մէջ ապրող իսլամացուած հայերու օրակարգը այսօր դարձած է հրատապ: Այն ճանապարհը, որմէ անցան անոնք, լեցուն էր տառապանքով, հալածանքով եւ ահով: Իսլամը ընդունեցին՝ շարունակելու համար իրենց կեանքը՝ իրենց նախահայրերու հողերուն վրայ: Գրկեցին պատմութեան խոշոր փորձառութիւնը եւ երբեւէ մոռնալով ըսին՝ մտնենք պատմութեան ծալքերուն մէջ ու հոն սպաննենք ժամանակը: Այդպէս ալ եղաւ: Նոր գարուններու սպասումով հասունցած անոնց երազները վառ ու կրակոտ խօսքերու վերածուեցան: Մեր գրոյցներուն, յաճախ մեր նեղ ու սեղմ օղակի խօսակցութիւններուն ընթացքին թերեւս մենք ինչ միամտութեամբ ու ապաշնորհութեամբ խօսեցանք ու դեռ կը շարունակենք խօսիլ այս նիւթերուն մասին: Կը մոռնանք նաեւ, որ Իսլամն ու Իսլամութիւնը մեր ժողովուրդի կարեւոր մէկ հատուածին համար փրկութեան ովասիսներ ստեղծեցին, երբ անոնք Ատանայէն, Տիգրանակերտէն, Մուշէն, Վանէն, Կիլիկիոյ բոլոր շէներէն աքսորի գողգոթայէն անցնելով, հասան Տէր Զօր, Ռաս Իւլ Այն, Ռաքքա, Հալէպ, Ջահլէ եւ ապա Պէյրութ: Իսլամը յատկապէս մեզի համար անծանօթ մը չդարձաւ: Ռատիքալ, ծայրայեղական, այլամերժ ու արիւնարբու կերպար մը չէր այն Իսլամը, որ մեզի տեղ տուաւ, տուաւ հաց, ջուր եւ ապաստարան: Վերջին տարիներուն արեւմտեան մասսայական մամուլը կը փորձէ Իսլամը գորշ գոյներով նկարագրել ու ներկայացնել: Բայց իրականութիւնը այլ է: Իսլամին հետ մենք հաց կիսած ենք, անցած ենք երկար ճանապարհ, անոր մինարէներուն աղօթքներուն եւ բարեխղճութեան վրայ հիմնուած աւանդոյթներուն հետ մենք ալ շաղկապուած ենք պահելով մեր ինքնութիւնը եւ կերտելով հայուն աշխատասէր, պարկեշտ, կամեցող եւ հաւատարիմ կերպարը: Այսօր ալ նոյնն է պարագան Արաբական ծոցի երկիրներէն մինչեւ Յորդանան, Գահիրէ, Պէյրութ ու Թեհրան (նաեւ Հալէպ) մեր հարեւանները եւ անմիջական գործակիցները իսլամներ են: Մենք հակակրանք ունենալու պատճառներ չունինք անոնց հանդէպ: Ու վստահ եմ որ փոփոխական այս ժամանակներէն ետք, երբ բոլոր ալիքները մեղմանան Իսլամի իրական պատկերը պիտի ուրուագծուի ու վերադառնայ իր պայծառ հունին եւ էութեան:*

*Խօսելով Թուրքիա բնակող իսլամացուած հայերուն մասին՝ կարելի է ըսել, թէ տակաւին կը պակսին պաշտօնական տուեալեր անոնց իսկական թիւերուն մասին, բայց միով բանիւ յստակ է, որ Թուրքիոյ տարբեր հատուածներուն մէջ ապրող իսլամացած հայերուն թիւը կը հատէ միլիոնները: Այո՛*

*Միլիոնները: Շատ նուրբ խնդրի մը առջեւ ենք կանգնած ու հարկաւոր է, որ յարգանքով մօտենանք այս խնդրին ու անոր պատմական հոլովոյթին:*

*Իրօք փորձենք հասկնալ մեր ողբերգութեան հետեւանքով իսլամը ընդունած հայերուն ոդիսականը : Ու կարեւորագոյնն այն է , որ ինչպէս խօսակիցս՝ Աւետիս Հաճեանը կ՚ըսէ, խուսափինք քարոզչական մօտեցումներ ցուցաբերելէ, այլ թոյլ տանք, որ կեանքի բնական հունով կատարուին այդ դրական փոփոխութիւնները եւ այդ հայորդիները իրենք որոշեն իրենց պատկանելիութիւնն ու ճակատագիրը:*

*Աւետիս Հաճեան (ծնած է 1968-ին՝ Հալէպ) Նիւ Եորք հաստատուած լրագրող է. կ՚աշխատակցի քանի մը ամերիկեան թերթերու որոնցմէ յիշեմ՝ The Wall Street Journal եւ International Business Times պարբերականները եւ յատուկ նիւթեր պատրաստած Bloomberg News-ին եւ CNN- ին համար:*

*Ան զաւակն է սփիւռքահայ գրող Պետրոս Հաճեանին:Ստորեւ կը ներկայացնեմ զրոյցը Հաճեանին հետ՝ փորձելով առաւելագոյնս ներկայացնել Թուրքիոյ մէջ ապրող իսլամացուած հայերու նիւթը՝ քաջ գիտնալով որ այս նիւթն անսպառ է ու տակաւին շատ բան կայ գրելիք եւ ընելիք այս ուղղութեամբ:*

*Գիրք Իսլամացուած հայերուն մասին*

- Յայտնուած ես Պոլիս եւ ի՞նչու:

***- Պոլիս եկայ Թուրքիոյ մէջ ապրող թաքուն կամ թաքնուած հայերուն մասին գիրք մը գրելու: Բայց սահմանումը յստակ չէ, ու կարելի է սխալ համարել, որովհետեւ անոնցմէ շատեր արդէն կ՚ուզեն բացայայտել իրենց ինքնութիւնը: Եկայ նաեւ մասնակցելու «Հրանդ Տինք» հիմնարկին կողմէ կազմակերպուած «Իսլամացուած հայերուն» նուիրուած համագումարին:***

- Ե՞րբ լոյս պիտի տեսնէ գիրքը, եւ ի՞նչ տեսակէտէ մօտեցած ես:

***- Գիրքը լոյս պիտի տեսնէ յառաջիկայ 2014 տարուան Մարտին: Այն ամբողջութեամբ նուիրուած է այն հայերու պատումներուն, որոնք եղեռնէն յետոյ մնացին մեր պատմական հողերուն վրայ ու շատ անգամ ապրեցան այլակերպուած ու փոխուած: Անոնց պատումները գաղտնի էին ու ես փորձած եմ բացայայտել այդ թաքուն կեանքը:***

- Իսկ նպատա՞կը:

***- Նպատակը հայութեան ոգին ներկայացնելն է: Ու յատկապէս այն ոգին, որմով անոնք գոյատեւեցին յետ եղեռնեան շրջանին: Անոնց հայ ըլլալու յիշողութեան նուիրուած է այս գիրքը, ուր փորձած եմ ներկայացնել, թէ ինչպէս անոնք յաջողեցան գաղտնի կերպով իրենց կեանքը շարունակել մեր պատմական հողերուն վրայ: Ի հարկէ հոն կան տարբեր խաւեր: Անոնցմէ շատերը ամբողջութեամբ իսլամացուած են, կան ուրիշներ որոնք արմատականօրէն իսլամացուած են: Իսկ շատերու մօտ չեշտուած չէ կրօնական երեսը: Նաեւ պէտք է նկատի ունենալ որ անոնցմէ շատեր թաքուն կերպով քրիստոնեայ են եւ կ՚ուզեն վերադառնալ հայ եկեղեցւոյ ծիրին: Իսկ անոնցմէ մէկ այլ կարեւոր հատուած համայնավար է ու ապակրօնացուած: Վերադառնալով նպատակին՝ ըսեմ, որ գիրքը քարոզչական բնոյթ չի կրեր եւ այս գիրքով ես բնաւ չեմ փորձած, ոչ ալ ուզած եմ համոզել որ անոնք իրենց ազգութեան ծիրին վերադառնան: Ի վերջոյ ես ազատութեան հաւատացող եմ ու կը կարծեմ որ ամէն մարդ ազատ է ընտրելու իր ազգութիւնը եւ իր կեանքին ուղղութիւն տալու: Ես կ՚ուզեմ աս գիրքով լոյսին բերել անոնց կեանքը, որոնք արդէն երեք սերունդէ ի վեր տարբեր պայմաններու մէջ մեծցած են պահելով իրենց արմատներն ու ինքնութիւնը:***

***Ես կը կարծեմ, որ մենք պէտք է յարգենք ու միանգամայն լսենք զիրենք:***

***Բացի անկէ, պէտք է արձանագրել ու լոյսին բերել անոնց պատումները:***

***Պատկերացուցէք, որ արդէն հարիւր տարուան պարապ մը կայ, որ պէտք է լրացուի ու այս կարեւոր նիւթին մասին մինչեւ օրս մենք ոչ մէկ առիթով խօսած ենք: Հոն թաքուն ապրուած կեանքի մը փորձառութիւնները եւ մանրամասնութիւնները կան: Այս բոլորը, վստահ եմ, կարեւոր են մեզի համար: Լոյսին բերել այն կեանքը, որ եղեռնէն յետոյ շարունակուեցաւ***

***Սասունի, Մուշի, Սեբաստիոյ, Ամասիայի եւ այլ շրջաններու մէջ: Այդ կեանքը ճիշդ է՝ տարբեր ձեւաչափեր ստացաւ, բայց փաստ է, որ շարունակուեցաւ:***

***Իսլամացուած հայեր. տարբեր մօտեցումներ եւ մէկ ճշմարտութիւն:***

- Վերջերս ամերիկահայ գրող Գէորգ Պետիկեան Իսլամացուած Հայերու նիւթին անդրադարձած էր յօդուածով մը, որուն շուրջ շատ լայն քննարկում եղաւ յատկապէս ընկերային ցանցերուն վրայ: Խնդիրն այն է որ այս նիւթը կը շարունակէ թապու մնալ հայութեան գրեթէ բոլոր հատուածներուն համար, ու երեւելի է նաեւ եկեղեցիին դերը, որ բաւական զգուշաւոր ու վերապահ է այս նիւթին շուրջ: Ի՞նչ կարելի է ըսել այս ուղղութեամբ:

***- Իմ անձնական մօտեցումս բնաւ ալ կարեւոր չէ: Կարեւորը, ըստ իս, այս մարդոց հանդէպ յարգանքի բաժինն է ու անոնց ականջ տալը: Այս առումով ըսեմ նաեւ, թէ իմ կարծիքս ցարդ ամբողջական չէ ու ես ալ իմ վերջնական կարծիքս չեմ կրցած եզրակացութեան մը հասցընել:Ու տակաւին փաստ է, որ ամէն օր նոր տեղեկութիւններ կ՚իմանամ անոնց մասին: Տեղեկութիւնները կ՚օգնեն, որ յարգենք ու լսենք զիրենք, որպէսզի հասկնանք անոնց խնդիրները: Ինչպէս վերը ըսի՝ տակաւին իմ մօտեցումս մշակուելու հունին մէջ է:Ես ամէն օր նոր կերպով կը բացայայտեմ այս խնդիրները: Ըսեմ նաեւ, որ ինծի համար հայ ըլլալու խնդիրը կրօնական դաւանումէն վեր էր մինչեւ այն պահը, երբ ես ականատես եղայ օրինակ հայու մը, որ նամազ կ՚ընէ կամ հայ մը, որ ինքզինք միաժամանակ հայ եւ մահմետական կը զգայ, եւ իր***

*Շար.ը էջ 18*



# ԹՈՒՐՔԻԱՆ ԸՆՏՐՈՒԱԾ Է ՄԱԿ-Ի ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ «ԳԱՅԼԸ՝ ՊԱՀԱՊԱՆ ՈՉԽԱՐԻՆ»

*ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ*
*«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր*

Այս տարուան սկիզբը գրած էի յօդուած մը, ուր ներկայացուցած էի Թուրքիոյ կառավարութեան կոշտ մարտավարութիւնը՝ եւրոպական եւ ամերիկեան թանգարաններէն հին իրերը վերադարձնելու առնչութեամբ: Հեգնական է, որ Թուրքիան՝ այլ ազգերու մշակութային ժառանգութեան մեծագոյն կողոպտիչներէն եւ աւազակներէն մէկը, կրնայ այդպէս, բուռն յարձակման անցնելով, պահանջել այդ հնութիւնները:

Սպառնալիքներով յաջողութեան չհասնելէ ետք, Թուրքիան անցեալ ամիս նախաձեռնեց նոր քայլի մը՝ կաշառքի: Թուրքիոյ կրթութեան նախարար Նապի Աւճըն Նոյեմբեր 10ին յայտարարեց. «Թուրքիան կրկնապատկած է իր ներդրումը ՄԱԿ-ի կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութեան (ԵՈՒՆԵՍՔՕ) մէջ, որ կը գտնուի տնտեսական ճգնաժամի մէջ, որովհետեւ Միացեալ Նահանգներ եւ Իսրայէլ իրենց անդամավճարները վճարելու անկարող են»:

Նախարար Աւճըն նոյնիսկ չէ փորձած ծածկել Թուրքիոյ առատաձեռնութեան բուն պատճառը: Ան բացայայտած է, որ՝ «Թուրքիոյ թեկնածութեան հարցով էական յառաջընթաց արձանագրուած է ԵՈՒՆԵՍՔՕ-ի Համաշխարհային ժառանգութեան յանձնաժողովի ընտրութիւններուն, որոնք տեղի պիտի ունենան Նոյեմբեր 19-ին»: Իրօք, Թուրք նախարարին կանխատեսումը իրականացաւ, երբ իր երկիրը Համաշխարհային ժառանգութեան յանձնաժողովի 21-րդ անդամ ընտրուեցաւ յառաջիկայ չորս տարիներուն համար:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը անմիջապէս յայտարարեց, թէ որպէս այդ Յանձնաժողովի անդամ՝ «Թուրքիան մտադիր է կիսել իր փորձառութիւնն ու գիտելիքները միջազգային մակարդակով, որ կուտակած է համաշխարհային ժառանգութեան իր սեփական 11 շրջաններու կառավարման եւ պաշտպանութեան ընթացքին, որոնք կը ներկայացնեն անատոլիական քաղաքակրթութեան տարբեր շերտերը, որոնց շարքին՝ նէոլիթեան, հելլենիստական, հռոմէական, բիւզանդական, սելճուկեան եւ օսմանեան դարաշրջանները»:

Թուրքիոյ ընտրութիւնը մարմինի մը մէջ, որ կոչուած է պահպանելու մշակութային արժէքները, համազօր է ոչխարը գայլին պահպանութեան յանձնելուն: Թուրքիա պէտք չէ իրաւունք ունենայ ծառայելու ԵՈՒՆԵՍՔՕ-ի յանձնաժողովին մէջ կամ ՄԱԿ-ի այդ յանձնաժողովի մէջ՝ իբրեւ մարդու իրաւունքներու մեծագոյն խախտող եւ դրացի երկիրներու խաղաղութեան եւ անվտանգութեան հիմնական սպառնալիք հանդիսացող երկիր ըլլալու իր երկարամեայ հանգամանքին բերումով:

Զարմանալի չէ, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ որեւէ յիշատակութիւն չէ եղած հայկական բազմաթիւ կրօնական եւ մշակութային կոթողներուն մասին, որոնք կը գտնուին ժամանակակից Թուրքիոյ տարածքին: Միայն վերջերս, մտադիր ըլլալով դիւրացնել Եւրոմիութեան թեկնածութեան իր ճանապարհը, ինչպէս նաեւ՝ օտար զբօսաշրջիկներէն եկամուտ ապահովելու նպատակով, Թուրքիոյ կառավարութիւնը վերանորոգած է քանի մը հայկական եւ յունական եկեղեցիներ՝ տասնամեակներով զանոնք անուշադրութեան մատնելէ, պարբերաբար սրբապղծելէ եւ ոչնչացնելէ ետք:

Այժմ, երբ Թուրքիան անարժան կերպով կ'անդամակցի Համաշխարհային ժառանգութեան յանձնաժողովին, ԵՈՒՆԵՍՔՕ-ի մէջ Հայաստանի ներկայացուցիչը կարելիութիւն ունի յառաջիկայ չորս տարիներու ընթացքին իւրաքանչիւր հանդիպման ժամանակ մատնանշելու այն զաւեշտալի իրավիճակը, որուն դէմ յանդիման պիտի ըլլայ Թուրքիան՝ ունենալով մշակութային կոթողներու պահպանութեան յանձնարարականը եւ շարունակելով մնալ իբրեւ այլ ազգերու մշակութային ժառանգութեան մեծագոյն բռնագրաւողներէն մէկը:

Թուրքիոյ մշակութային ժա-

*Շար.ը էջ 17*

# ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ

*ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ*

Անառարկելի է, որ առանց Ուկրաինայի Ռուսաստանն այլ երկիր է, Ուկրաինայի հետ բոլորովին այլ է նրա ներուժը, ինչի պատճառով էլ ուկրաինական թեման գերիշխող էր Վիլնիուսում աւարտուած արեւելեան գործընկերութեան երկրների գագաթնաժողովում:

Մինչեւ վերջին պահը Եւրամիութեան պաշտօնեաները յոյս ունէին, որ Յանուկովիչը հնարաւոր է՝ փոխի Ուկրաինայի եւրաինտեգրումը կասեցնելու որոշումը, եւ շարունակում էին կրկնել, որ ԵՄ-ի դռները բաց են Ուկրաինայի համար: Սակայն Եւրամայդանի բազմամարդ ու երկարատեւ ցոյցերի չնչառութիւնն անգամ չմտափոխեց Ուկրաինայի նախագահին, ով անդրդուելի, գուցէ եւ ճարահատեալ էր իր որոշման մէջ, դրանով իսկ հարցականի տակ դնելով արեւելեան գործընկերութեան նախագծի ողջ ապագան: Ուկրաինայի նախագահը միաժամանակ եռակողմ բանակցութիւններ էր առաջարկում Եւրամիութեան, Ռուսաստանի եւ Ուկրաինայի մասնակցութեամբ, փորձելով հարթել կողմերի միջեւ առաջացած սուր անկիւնները, որին, հասկանալի պատճառներով, Եւրամիութիւնը դէմ եղաւ, քանի որ դրանով գրոյացւում էր գործընթացի հիմնական նպատակը՝ Ուկրաինային Ռուսաստանի ազդեցութեան գօտուց հանելը, ինչը փաստացի ձախողուեց:

Շատերը ենթադրում էին, որ Եւրամայդանում ընդդիմադիրներին կը յաջողուի Ուկրաինայի քաղաքական ու տնտեսական ղեկը թեքել Եւրամիութեան կողմը, սակայն ներկայ ընդվզումն առայժմ ոստիկանական ուժերին բախուելով է փորձում հաստատել ժողովրդի կամքի հաստատումը:

Գագաթնաժողովում բոլորովին այլ մթնոլորտ էր արեւելեան գործընկերութեան միւս երկրների միջավայրում: Մոլդովան ու Վրաստանը, ինչպէս եւ սպասւում էր, նախաստորագրեցին ասոցացման համաձայնագիրը: Եթէ Վրաստանն այս առումով կարծես լուծել է իր խնդիրները, քանի որ ինչը պիտի կորցնէր, արդէն կորցրել է (Հարաւային Օսիան եւ Աբխազիան), ապա բոլորովին այլ է Մոլդովայի ներքին իրավիճակը: Այստեղ եվրաինտեգրմանը դէմ են կոմունիստները: Երկրում յաջորդ տարի ընտրութիւններ են, եւ կոմունիստների յաղթելու դէպքում դժուար է իրադարձութիւնների ընթացքը կռահել: Չի լուծուած Մերձդնեստրի հարցը: Միւս կողմից էլ, գագաուզներն են յայտարարում, որ Մոլդովայի եւրաինտեգրման պարագայում կարող են անջատուել Մոլդովայից: Այնպէս որ, չնայեած Քիշնեւի բարձր տրամադրութեանը, այս երկիրը դեռ խնդիրներ ունի լուծելու:

Ինչեւիցէ, յիշեալ երկրները՝ իրադարձութիւնների բարեյաջող ընթացքի դէպքում, յոյս ունեն ասոցացման պայմանագիրը ստորագրել 2014թ. աշնանը: Այլ է Ատրպէյճանի պարագան: Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նովրուզ Մամեդովը յայտարարել էր, թէ Պաքուն մտադիր չէ ԵՄ-ի ասոցացուած անդամ դառնալ: Նման յայտարարութիւնը տարօրինակ էր այնքանով, որ աւագ եղբայրը՝ Թուրքիան, որի քայլերը Պաքուն կրկնօրինակում է առանց խմբագրումների, փորձում է ամէն գնով Եւրամիութիւնում յայտնուել: Պաքուի հրաժարումը թերեւս պայմանաւորուած է Եւրամիութեան պահանջների եւ բռնապետական ռեժիմի մահացու հակասութեամբ, ինչն էլ խստիւ հակացուցուած է ալիեւեան կլանին:

Միւս կողմից էլ, ըստ մի շարք քաղաքագէտների, Պաքուի մասնակցութիւնը Եւրամիութեան նախագծերին այնքան էլ ցանկալի չէ եւ Ատրպէյճանին ոչ մի լաւ բան չեն խոստանում: Այդուհանդերձ, վիլնիուսեան գագաթնաժողովում Ատրպէյճանն ու ԵՄ-ը հասցրեցին վիզային ռեժիմի ազատականացման մասին համաձայնագիր ստորագրել, ինչը Պաքւում անպայմանօրէն եւրոպական կառոյցներին ինտեգրուելու հերթական քայլ է ներկայացուելու:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա գագաթնաժողովի հռչակագրում ասուած է. «Եւրամիութիւնն ու Հայաստանն այսօր վերահաստատել են իրենց հաստատակամութիւնը.՝ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր ոլորտներում համագործակցութիւնն աւելի զարգացնելու եւ խորացնելու

*Շար.ը էջ 19*

Նոր Սերունդ Մշակութային Միութիւն

ՊԱՐԱՅԻՆ ՀԱՄՈՅԹ

Կատարողութեամբ՝
Ն.Ս.Մ.Միութեան Պարախումբին
Տեղի կ'ունենայ Շաբաթ, Յունուար 11, 2014
երեկոյեան ժամը ճիշդ 7-ին

3700 E. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107

Տոմսերու համար հեռաձայնել՝ Արմինէ Լաչինեան (626) 372-4662

$20.00

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
## Ներսէս Պետրոս ԺԹ.
### Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

*Սուրբ Ծննդեան աստուածապարգեւ տօնին առիթով, ձեզի կը փոխանցենք ցնծութեան եւ յոյսի Հայրապետական պատգամը սիրեցեալ Առաջնորդներ, պատուարժան հովիւներ եւ կրօնաւորներ, սարկաւագներ, կուսաններ եւ ի Սփիւռս աշխարհի գտնուող բարեպաշտ հաւատացեալներ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ:*



*Ս. Ղուկասի Աւետարանին մէջ կը կարդանք հրեշտակին խօսքը Բեթղեհէմի հովիւներուն. «Ահա ձեզի կ'աւետեմ մեծ ուրախութիւն մը, որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ:*

*Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ, ձեզի Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Ղկ 2, 10-11):*

*Վերոյիշեալ Ս. Աւետմանին խօսքը մեզի ոչ միայն ուրախութիւն կը պատճառէ, այլ մանաւանդ մեզի նոր յոյս մը կը ներշնչէ, որ կը յաղթէ մեզ շրջապատող բոլոր դժուարութիւններուն եւ կը փարատէ մեր բոլոր մտահոգութիւնները:*

*Եթէ առօրեայ լուրերուն հետեւինք, միեւնոյն անկայուն վիճակ մը եւ անապահով մթնոլորտ մը կը գտնենք, որ մեզի անհանգստութիւն եւ անձկութիւն կը պատճառեն, եւ որ մօտ կամ հեռաւոր ապագայի վրայ լոյս կամ յոյս չեն սփռեր:*

*Մենք մեզի կը հարցնենք. Արդեօք մեր Հայր Աստուածը չի՞ տեսներ մեր ցաւերն ու նեղութիւնները, եւ միջոց չունի՞ արդեօք մեզի օգնութեան հասնելու:*

*Արդե՞օք մեր Հայր Աստուածը լուծում չունի տալու, 3 տարիէ ի վեր տառապող ժողովուրդներուն, արաբ երկիրներուն մէջ տիրապետող պայքարներուն պատճառով, անոնց վերջ տալու համար:*

*Մեր Հայր Աստուածը կարողութիւն չունի՞ արդեօք կեցնելու գաղթականութեան հոսքը եւ ստեղծուած անարդար կացութիւնը, որուն զոհ կ'երթան հարիւր հազարաւոր անմեղ ընտանիքներ:*

*Արդե՞օք մեր Հօր Աստուծոյ ձեռքը չի հասնիր վերջ տալու համար քրիստոնեաներու ցաւերուն, որոնք կը թալանուին, կը սպաննուին եւ երբեմն ալ կը նահատակուին՝ իրենց քրիստոնեայ հաւատքին հաւատարիմ մնալու համար:*

*Սիրելիներ, մեր Հայր Աստուածը ամէն բան կը տեսնէ եւ դարերու ընթացքին միշտ պատասխան տուած է նման տմարդի եւ անարդար դէպքերուն:*

*Նախ եւ առաջ, մեր Հայր Աստուածը մեզի աւետեց եւ յատուկէն այսօր կը շարունակէ մեզի աւետել փրկչին ծնունդը՝ Յիսուս Քրիստոսը, որ աշխարհ եկաւ մարդիկ Աստուծոյ զաւակ դարձնելու եւ իրարու հանդէպ սիրող եւ ներող եղբայրներ եւ քոյրեր վերադարձնելու համար: Ցիրաւի, Ս. Պատարագին ընթացքին կ'երգենք. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, թշնամութիւնն հեռացաւ, սէրն ընդ հանուրս սփռեցաւ:*

*Յաճախ կը սպասենք որ մեր Հայր Աստուածը ամբարտաւանքներուն դէմ նոյն բռնակալ միջոցները գործածէ, անօրէններուն դաս տայ եւ չարին վերջակէտ մը դնէ: Այս մտածելա- կերպը, սիրելի եղբայրներ եւ քոյրեր, կը նշանակէ որ մենք Աստուծոյ ծրագիրները չենք հասկցած տակաւին: Կը նշանակէ որ Սուրբ Գիրքը չենք կարդար, ըմբռնելու համար Աստուծոյ իմաստուն ծրագիրները եւ անցեալին մէջ Անոր կատարած փրկարար գործերը:*

*Այս մտածելու ձեւը կը նշանակէ որ մենք տակաւին աշխարհիկ մտայնութեամբ կ'ապրինք, եւ ասոր համար կը գայթակղինք Աստուծոյ ընթացքէն, ինչպէս առաքեալները գայթակղեցան Յիսուսի չարչարանքներուն, խաչելութեան ու մահուան առջեւ:*

*Բայց առաքեալները, Յիսուսի յարութենէն ետք, հասկցան Աստուծոյ ծրագիրը, որ կ'ուզէ աշխարհը փրկել սիրով եւ ոչ ուժով: Անոնք պատրաստ եղան այս բարի լուրը աւետել բոլոր մարդոց եւ իրենց կեանքն իսկ զոհել Աստուծոյ սիրոյ ծրագիրը իրագործելու համար:*

*Եւ ահա այսօր երկնքին մէջ բիւրաւոր սուրբեր եւ Քրիստոսի վկաներ ունինք, որոնք Աստուծոյ փրկարար գործը հասկցան եւ չվարանեցան ամէն զոհողութիւն յանձն առնել՝ մարդոց աւետելու համար այս բարի լուրը, եւ դարձան իսկական առաքեալներ իրենց սերունդէն ու միջավայրէն ներս:*

*Անոնք հասկցան Աստուծոյ սիրոյ ծրագիրը եւ զայն ապրեցան ու քարոզեցին:*

*Անոնք ուրախ կեանք մ'ունեցան եւ հազարներ ուրախացուցին իրենց բարի օրինակովը:*

*Անոնք յոյսով ապրեցան եւ իրենց շրջանակին մէջ բիւրաւոր մարդոց յոյս սփռեցին:*

*Անոնք իմաստ տուին աշխարհի ելեւէջներուն եւ իրենց կեանքի վկայութեամբը համոզեցին շատերը, որ կարելի չէ չարով չարին յաղթել, այլ միայն՝ ներողամտութեամբ եւ սիրով: Այս է քրիստոնեայ սկզբունքը:*

*Այս նիւթին առընչութեամբ, Ս. Պօղոս յստակ կերպով կը բացատրէ հռոմէյացիներուն այս վիճակը, երբ կ'ըսէ. «Եթէ թշնամիդ անօթի է, կերցո՛ւր անոր, եթէ ծարաւի է, խմցո՛ւր անոր. այսպէս ընելով՝ հրաբորբոք կայծեր կը կուտակես անոր գլխուն վրայ»: Այսինքն, քու այս ընթացքովդ, մեղաւորը՝ բարի գործերդ տեսնելով խղճի խայթ պիտի ունենայ, որ զինք պիտի մղէ դարձի գալու: Եւ Ս. Պօղոս կը շարունակէ իր խօսքը ըսելով. «Մի՛ յաղթահարուիր չարէն, այլ՝ բարիով յաղթէ չարին» (Հռ. 12,20-21):*

*Այս իմաստով է որ, սիրելիներ, Յիսուսի Ծնունդը յոյսի տօն մըն է մեզի համար, որովհետեւ ան կը յաղթէ մեր յուսահատութեան: Այսպէս կ'արտայայտուի Նորին Սրբութիւն Ֆրանչիսկոս Սրբ. Պապը, երբ կ'ըսէ. Յիսուսի ծննդեան տօնը մեզի կը յիշեցնէ որ Աստուած մեզի հետ է եւ թէ Աստուած մեր վրայ իր վստահութիւնը դրած է: Աստուծոյ Որդին մարդացաւ որպէսզի միշտ բնակի մեր մէջ՝ թէ մեր ուրախութիւններուն եւ թէ մեր ցաւերուն ատեն: Ուստի, աշխարհը արցունքներուն հովիտ մը չէ այլեւս եւ բնաւ պիտի չըլլայ ասկէ վերջ, քանի Աստուծոյ Միածին Որդին բնակեցաւ անոր մէջ, եւ ուզեց մարդոց կեանքին բաժնեկից դառնալ: Արդարեւ, Յիսուս չծնաւ իտէալական աշխարհի մը մէջ, այլ՝ իրական աշխարհի մը մէջ ուր, լաւ կողմերուն առընթեր, կային նաեւ չարութիւններ, խեղճութիւններ եւ պատերազմներ: Յիսուս ապրեցաւ այս տեսակ աշխարհին մէջ՝ իր սահմաններով եւ իր ցաւերով:*

*Սիրելիներ, Յիսուս միշտ մեզի հետ է: Արդեօք կը հաւատա՞ք այս խօսքին: Յիսուս մեզի հետ է իր ծննդեան օրէն ի վեր, եւ միշտ մեզի հետ պիտի մնայ մեր պատմութեան ընթացքին, որպէսզի մեզ վերցնէ մեր դժուարութիւններէն եւ մեր մեղքերէն: Այս է մեծ նուէրը որ Մանուկ Յիսուսը մեզի կը շնորհէ այսօր: Ան մեզի նոր թափ մը կու տայ, որպէսզի չընկճուինք մեր յուսալքումներուն եւ մեր տխրութիւններուն ծանրութեան տակ: Որովհետեւ, նոր թափը որ Յիսուս մեզի տուաւ, կը ջերմացնէ մեր սիրտը եւ զայն կը փոխէ: Ուստի, Յիսուսի Ծննդեան տօնը մեզի բարի լուր մը կը բերէ՝ որ մենք անձնապէս եւ մեծապէս Աստուծմէ սիրուած ենք: Աստուած չի պատմեր միայն իր սէրը մեզի, այլ՝ այդ սէրը մեզի հայրաբար կը փոխանցէ: Ասոր համար, ներկայ մեր ցաւերուն եւ նեղութիւններուն մէկտեղ, Ծննդեան տօնը մեզի կը շնորհէ յոյսի եւ ուրախութեան նշաններ: Յիսուսի Ծնունդը մեզմէ ամէն մէկուն սփոփանք, զօրակ-ցութիւն եւ մխիթարութիւն կու տայ: Յուժ սիրելիներ, մեր վստահութիւնը դնենք Աստուածա-մօր բարեխօսութեան վրայ, Ան որ եղած է Յիսուսին մայրը եւ մեր երկնաւոր մայրը, որպէսզի այս Ծննդեան տօնին առիթով, Ան մեզի օգնէ կարենալ ճանչնալու համար մեր ընկերոջ դէմքին վրայ, մանաւանդ ամենատկարին մօտ, ճանչնալու Մարդացած Յիսուսին դէմքը. ամէն:*

*Յիսուս ծնաւ եւ յայտնեցաւ*
*Օրհնեալ է Յիսուսին Ծնունդը:*

## Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ
## ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՂՄԷ

*Ծնունդի եղանակը արդէն հասած է: Երփներանգ լոյսերով, արծաթաշող ու ոսկեփայլ զարդերով, եւ արուեստական ճիւղերու կամ ծաղիկներու կամարներով նորէն պճնուած են քաղաքներու մեծ պողոտաները: Խանութներ ու վաճառատուններ իրենց ցուցափեղկերը փարթամօրէն զարդարեր են գունագեղ առարկաներու, բազմատեսակ ապրանքներու ճոխութեամբ, հրապուրելու մարդիկ Ս. Ծնունդի առթիւ իրենց ընծայելիք նուէրները գնելու համար: Բայց թերեւս անոնցմէ շատ քիչեր կը յիշեն, թէ որո՛ւն ծնունդն է որ կը տօնեն:*

*Յովհաննէս Առաքեալ կը յիշեցնէ մեզի, որ Ս. Ծնունդը՝ մարմնացեալ եւ մարդացեալ Աստուածորդիին հրաշափառ ծննդեան տարեդարձն է, որ կ'ոգեկոչենք: «Եւ Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ անոր փառքը տեսանք, Հօրմէն Միածնին փառքին պէս» (Յովհ. 1:14):*

*Ինչո՞ւ մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ:*

*Մարդեղութեան այս մեծ եւ սքանչելի խորհուրդին նպատակը լիակատար Աստուածայայտնութիւնն էր: Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ Աստուծոյ էութեան բուն պատկերը յայտնելու համար: Ան եկաւ ցոյց տալու Աստուծոյ անսահման սէրն ու կարեկից հոգին հանդէպ իր ստեղծած մարդոց: Ան իր «անձը խոնարհեցուց ու նոյնիսկ ծառայի կերպարանք առաւ» փորձառաբար հետամուտ ըլլալու մարդկային տկարութիւններուն, կարօտութիւններուն եւ կարիքներուն: Առաքեալին խօսքով, «Ան որ հարուստ էր, մեզի համար աղքատացաւ, որպէս զի անոր աղքատանալով մենք հարստանանք»:*

*Քրիստոսի Աստուածայայտնութեան մեծ եւ սքանչելի Խորհուրդին վսեմագոյն նպատակն էր մեղաւոր եւ մոլորեալ մարդիկը Իրեն հետ հաշտեցնել: Յիսուս եկաւ որպէս «Խաղաղութեան Իշխան», որպէս զի Աստուծոյ մեղաւոր արարածները իրենց Արարիչին ու Երկնաւոր Հօրը հետ հաշտեցնէ:*

*Մարդացեալ Աստուածորդին, Յիսուս Քրիստոսը, որպէս Փրկիչ ընդունելով է, որ մարդիկ կրնան խաղաղութիւն ունենալ Աստուծոյ հետ եւ ատկէ ետք բարեհաճութիւն եւ բարեացակամութիւն ունենալ իրենց նմաններուն հետ: Այ՛դ է պայմանաւոր ազդակը իրականացնելու՝ Բեթլեհէմի հովիւներուն լսած հրեշտակաց աւետիսը «Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն եւ մարդոց մէջ հաճութիւն»:*

*Խաղաղութեան ծարաւի մարդիկ իրենց անօգուտ որոնումներէն հրաժարէին եւ իմաստութիւն ունենային երթալու «խաղաղութեան Իշխան»ին եւ Անոր «ամէն մտքէ վեր եղող» խաղաղութիւնը ստանալու:*

*Թող Աստուած երկնային շնորհ եւ աստուածային իմաստութիւն շնորհէ բոլոր անոնց, որպէսզի այդ խաղաղութեան տիրանան:*

*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզի մեզի մեծ աւետիս:*

*Աղօթարար,*

**Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան,**
**Գործադիր Տնօրէն**
**Հայ Աւետարանական**
**Համաշխարհային Խորհուրդի**

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌԱԴԻՈ ԺԱՄ
Ամէն Կիրակի
Երեկոյեան ժամը 10:00-էն 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանէն

# Massis Weekly

Volume 33, No. 48 Saturday, December 28, 2013


## ‘Roadmap’ to Armenia’s Accession to the Customs Union Approved



President Serzh Sarkissian takes part in signing of “roadmap” agreement

MOSCOW -- The presidents of Russia, Belarus and Kazakhstan approved on Tuesday a “roadmap” to Armenia’s accession to their Customs Union which a senior Russian official said should be completed by next May.

Speaking at the Supreme Eurasian Economic Council summit held in Moscow, Kazakh President Nursultan Nazarbayev at the same time expressed reservations about Armenian membership related to the unresolved Nagorno-Karabakh conflict.

“The question of the Custom Union’s border, where it will pass in Armenia, remains open. Therefore, we will sign the roadmap with the colleagues but with a special opinion that will be reported [to the Armenian side],” Nazarbayev said.

Nazarbayev referred to Armenia’s border with the Nagorno-Karabakh Republic and the absence of any Armenian customs posts there. Armenian leaders have assured the domestic public that they will not tax goods coming from Karabakh even after joining the Russian-led trade bloc. Some of them have implied that Moscow has promised to turn a blind eye to what would be a breach of the union’s common trade rules.

Nazarbayev clearly feels more strongly about Azerbaijan’s territorial integrity. As recently as on August 16, he backed a Karabakh settlement “within Azerbaijan’s internationally recognized borders” in a joint declaration adopted at a summit of Turkic-speaking states in Azerbaijan.

The Kazakh leader did not clarify whether putting customs checkpoints on Armenian roads leading to Karabakh is a necessary condition for Armenian entry into the Customs Union.

The heads of the union’s three member states were joined by President Serzh Sarkisian, his Kyrgyz counterpart Almazbek Atambayev and Ukraine’s Prime Minister Mykola Azarov at a separate session held later in the day. Putin did not comment on the sensitive Karabakh issue as he

Continued on page 3

## Parliament Ratifies Russian-Armenian Gas Deal Amid Opposition Boycott



Pro-government lawmakers vote by hand to Ratify Russian-Armenian Gas Deal

YEREVAN (RFE/RL) -- The pro-government majority in the Armenian parliament ratified on Monday a highly controversial gas agreement with Russia in a vote which was denounced as invalid by Armenia’s leading opposition forces and sparked fresh street protests.

The deal, which critics consider a serious blow to Armenia’s sovereignty, was backed by 77 members of the 131-seat National Assembly mainly representing President Serzh Sarkisian’s Republican Party of Armenia (HHK). Just before the vote deputies from the three opposition parties represented in the assembly as well as the opposition-leaning Prosperous Armenia Party (BHK) walked out of the main parliament auditorium in protest.

The pro-government lawmakers decided to vote by hand, instead of using the customary electronic voting system, after it emerged that some of them had their plastic magnetic cards taken away by one of their outspoken opposition colleagues, Zaruhi Postanjian of the Zharangutyun (Heritage).

The parliament minority leaders seized upon this fact to declare the vote null and void. In a joint statement, they cited the National Assembly’s statutes stipulating that if the electronic system is not used votes should

Continued on page 4

## PACE Vice-President Condemns ECHR’s Verdict on Perinçek’s Case



PACE Vice-President Rene Rouquet

PARIS -- French parliamentarian, PACE Vice-President, Chairman of the Armenia-France friendship group Rene Rouquet expressed his concerns over the verdict of the European Court of Human Rights (ECHR) on Doðu Perinçek’s case. Rene Rouquet stated that this verdict is a blow to all those people, who are working for the restoration of the just memory of the Armenian people.

The PACE Vice-President raised a number of questions. First of all he emphasized that Switzerland can appeal the verdict within three months in the Grand Chamber of the European Court of Human Rights. Among other things Rene Rouquet underscored: “In this respect the verdict is not final and the Grand Chamber can fulfill its function of protecting the human rights and fundamental freedoms in accordance with the article 44 of the European Convention on Human Rights.”

Continued on page 4

## Armenia to Deepen Military Ties With U.S.



YEREVAN — Armenia will deepen its military ties with the United States despite planning to join new Russian-led alliances of former Soviet republics, First Deputy Defense Minister Davit Tonoyan said on Thursday after two-day U.S.-Armenian “defense consultations.”

“Our president, defense minister and foreign minister have repeatedly stated that there are no obstacles, no changes in our military and security cooperation,” he said. “Joining one or another economic bloc does not inhibit Armenia. On the contrary, our defense cooperation with the United States will develop and deepen further.”

Tonoyan argued that that cooperation is regarded by the Armenian leadership as “one of the important factors” of national security. He insisted that Russia, which has a close military alliance with Armenia, does not object to it.

Continued on page 4

# Turkey Again Named World's Leading Jailer of Journalists




NEW YORK -- Turkey has been named the world's number one jailer of journalists for the second consecutive year, followed closely by Iran and China, a U.S.-based watchdog said Dec. 18.

The number of journalists behind bars in Turkey is 40; down from the 61 recorded in October 2012, and less than the 49 on Dec. 1, 2012, according to the New York-based Committee to Protect Journalists (CPJ), reports the Hurriyet Daily News.

The number of journalists killed and imprisoned fell in 2013 but despite this decrease it was still the second worst year on record for reporters in prison, and Turkey still had the world record in number of jailed journalists, holding more in custody than Iran, China, or Eritrea.

"As a NATO member and a regional leader, Turkey should not belong in the list of top press jailers. But from the failure to reform its legislation in a meaningful way to the crackdown on its journalists in the aftermath of the Gezi Park protests, Turkey has grown increasingly repressive despite the modest decline in the number of media workers behind bars," said the CPJ in a statement on its website.

"Jailing journalists for their work is the hallmark of an intolerant, repressive society," said CPJ executive director Joel Simon.

The CPJ said it had contacted Turkish officials over the issue in September and was informed by the Justice Ministry that there were 54 journalists jailed on different charges. The CPJ found, however, that out of 54 jailed journalists, 40 of them were jailed for their work, and further concluded that there was not sufficient information to determine that the imprisonments in the other 14 cases were work-related and continued its investigation over these cases.

Together, Turkey, Iran and China accounted for more than half of the 211 journalists imprisoned around the world in 2013, making it the second worst year since records began in 1990, Agence France-Presse reported. In 2012, there were 232 jailed journalists.

Meanwhile, so far this year, 52 journalists have been killed around the world as a direct result of their work, down from 73 last year, the CPJ said.

Syria, due to its civil war which has killed more than 126,000 people and created 2.4 million refugees, was the deadliest country for journalists for a second year running.

CPJ said 21 reporters were killed in Syria, six in Egypt, five in Pakistan, four in Somalia, three in Brazil and another three in Iraq. In Mali and Russia, two were killed.

One journalist was killed each in Turkey, Bangladesh, Colombia, Philippines, India and Libya.

# Lebanese Expert: South Caucasus Countries Should Strengthen Regional Cooperation Instead of Relying on Superpowers

YEREVAN (Arka.am). Abdel Halim Fadlullah, director of Lebanon's Institute of Strategic Studies, thinks South Caucasus countries should try to strengthen regional cooperation instead of seeking support from the biggest international players.

"Arab region's experience proves that development can't be ensured individually by outside support," he is quoted by Novosti-Armenia as saying today at an international conference focused on security and cooperation in the South Caucasus region. "Relations with the West should be based on collective interests, not on individual concessions and sacrifices which have adverse impacts on South Caucasus."

The expert pointed out some similarities between the South Caucasus and the Middle East, particularly the lack of a stable regional system for settling conflicts ensuring security and mobilizing resources, rich natural and human resources and important geopolitical location. He also said that both regions are stages for collision of superpowers' ambitions to establish dominance here.

«Cooperation in both regions has always been based on short-term interests, and few countries had been involved in it. This led to conflicts and separation. An additional destabilizing factor is the importance of the regions in terms of energy security and transit of energy resources to the West and international markets.»

Abdel Halim Fadlull stressed that some influential countries are present on the international arena now, but there are no regional unions and non-governmental players.

«If our countries want to participate in world developments, they should take the road of regional solidarity, and this needs a regional system with common rules of cooperation,» he added.

# Armenian, Turkish and Kurdish Organizations Participate in Peace and Democracy Conference in Hamburg

HAMBURG -- On December 19, 2013, Armenian Council of Europe (ACE) representative Mr. Toros Sarian, participated in a peace and democracy conference in Hamburg, Germany along with several Turkish and Kurdish organizations and parties, including; DIDIF (Federation of Democratic Worker Societies), the ATIF (Federation of Workers from Turkey in Europe), Yekkom (Kurdish Workers Organization), ÖDP (Party for Freedom and Solidarity Party in Turkey), KKP (Communist Party of Kurdistan), ADHK (Confederation of Democratic People's Organizations in Europe), Hevkar Kurdistan Workers' Association in Hamburg, and Alevi organizations.

The participants agreed on the common efforts and to continue organizing conferences and seminars throughout Europe.




**Toros Sarian addressing to the conference**

In his address to the conference, Mr. Toros Sarian congratulated the conference organizers and expressed the Armenian Council of Europe's gratitude and support of every initiative and effort for the establishment of peace and democracy. He outlined the importance of the implementation of human and minority rights in Turkey.

# Construction of Vardenis-Martakert Highway to Start in January 2014




Hayastan-All Armenian Fund has signed contracts for procurement of Vardenis–Martakert road construction with firms having won the tender carried out on December 9 and 10.

According to the contracts, firms undertaking the construction projects, will start the road earthwork and engineering works /first stage/ in January 2014.

Contracts specify the same time period for implementation of the works on the road with a total length of about 116km, Press Service of the Hayastan Fund reports.

The Vardenis-Martakert Highway will be of key economic and humanitarian importance. By functioning as a direct road link, the highway will become a second lifeline between northern Armenia and northern Artsakh, significantly cutting down travel times, boosting the economies of scores of Artsakh communities along its path, stimulating inter-community ties, and vastly improving geographic access for implementing local development initiatives.

Currently the only land-travel link between Artsakh and Armenia is the Berdzor community, through which passes the Goris-Stepanakert Highway.

The Vardenis-Martakert Highway will bring economic benefits to communities located within up to 20 kilometers on either side of the route.

# Mother See of Holy Etchmiadzin Donates $100 Thousand to Syrian Armenian Schools

The situation in Syria and the hard condition of Syrian Armenians remain in the focus of attention of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the Mother See of Holy Etchmiadzin.

The Dioceses of the Armenian Apostolic Church permanently provide assistance to Syrian Armenians through the Mother See.

On the occasion of Christmas, the Mother See of Holy Etchmiadzin has transferred $100 thousand to the Armenian Diocese in Damascus in aid to Armenian schools in Syria.

## Distinguished Scholars Speak on Survivor Meaning




**Professor Peter Balakian recounting the story of his grandmother Nafina's escape during the Armenian Genocide**

**By Taleen Babayan**

A symposium on survivor meaning, which featured reputable leaders in the field of study, including Peter Balakian, Jay Lifton and Marianne Hirsch, was held at Columbia University on Wednesday evening, December 4, in an event hosted by the Armenian Center at Columbia University.

Titled "Survivor Meaning: After the Armenian Genocide, the Holocaust, and Hiroshima," the panel delved into the aftermath of the survivors of these human catastrophes as they searched for an understanding of their tragic experiences.

Acclaimed poet and prize winning author, Balakian was introduced by Marianne Hirsch, the William Peterfield Trent Professor of English and Comparative Literature at Columbia University, who served as the moderator of the panel and who has written several important books on trauma and memory and the Holocaust.

Balakian presented a personal and inherited familial narrative, which was the case of his grandmother Nafina, a survivor of the Armenian Genocide as a "way of engaging conversation in survivor experience."

A resident of Diyarbekir during the time of the Armenian Genocide, her family's homes and properties were looted and confiscated and she was witness to the massacre of her family and community. Nafina survived a forced march, in which everyone in her family was killed.

Having arrived in Aleppo in the Fall of 1915, she began to compile affidavits for what would be a human rights suit of the Turkish government for all the losses endured by her family. Balakian read his grandmother's insurance claim from his New York Times bestselling memoir, *Black Dog of Fate*. He said the claim, which she filed when she arrived in the United States, "contributed to the understanding of a survivor in the immediate aftermath of an enormous encounter with mass killing, rape, starvation, famine and death."

"She was witness to the truth," said Balakian, who is the Donald M. and Constance H. Rebar Professor of the Humanities at Colgate University and the Ordjanian Visiting Professor in Armenian Studies at Columbia University.

Scholar, psychiatrist and historian, Robert Jay Lifton, who has written over 20 books on trauma, survival and violence, defined a survivor as someone who has in some way encountered death, witnessed it, and at the same time remained alive.

"There's a triumph in surviving because one stays alive," said Lifton, Distinguished Professor Emeritus at CUNY/Graduate Center and John Jay College for Criminal Justice. "It's necessary to give meaning to that catastrophe if one is to find meaning in the rest of one's life."

He said survivors of the bombing in Hiroshima, Japan after World War II experienced a lifetime of "death haunted imagery" from the encounter itself to the effects of the tragedy that carried over to the next generation.

"From survivor meaning comes a survivor mission which one carries out in order to assert that meaning," said Lifton, who concluded his presentation by returning to Nefina's story. "There was a heroic struggle by this woman who sought to oppose the forces of destruction in her life. I don't think there could be a better moral principle in which to base our world."

Following Balakian's and Lifton's presentations, Hirsch posed follow up questions, including why Nafina "chose a legal claim, not to seek repair but to voice the wrong and to commemorate the dead."

"It's a stay against being expunged or annihilated," said Balakian, who remarked that nothing came of the claim and that the document remained in a dresser drawer for 60 years until he himself found it. "In cases of mass killings and genocides, the survivors end up taking the ethical role and family is essential. This claim has a graveyard dimension to it."

Lifton observed that it was a series of bearing witness since Nafina experienced the catastrophe and retold the story through the means of her legal claim. "What is unsuccessful in a legal sense, starts legal ramifications of the witness, and there's something moving about that. "

Lifton noted that calamities like the Holocaust, Hiroshima and the Armenian Genocide annihilate meaning along with human beings and structures.

"As human beings, we are meaning hungry creatures," said Lifton. "That's why the struggle for meaning is so difficult and poignant and painful – but it always goes on because that's how we function mentally. We must recreate all that we perceive."

The presentation was followed by lively audience questions and the aftermath conversations went on well into the evening in what was the conclusion to a memorable semester of events hosted by the Armenian Center at Columbia.

## Aram Khachaturian's Legacy Digitized



YEREVAN (ArmRadio.am) -- Aram Khachaturian's legacy has been digitized thanks to joint efforts of VivaCEll MTS, the Armenian Ministry of Culture, the Public Radio of Armenia and the "Prolighting" Company. The collection of 9 CDs, 1 DVD and a booklet has been created on the basis of the records kept in the archive of the Public Radio and the materials provided by Aram Khachatiruan House-Museum.

The Public Radio of Armenia in cooperation with the Ministry of Culture has been digitizing the records of the "Golden Fund" since 2009. As a result, 65 CDs including invaluable cultural values have been created.

Speaking to reporters today, Executive Director of Public Radio of Armenia Armen Amiryan stressed the importance of this cooperation.

"These records are the product of our everyday work. When the Ministry of Culture shows interest and when the other organizations combine efforts, they become the property of the whole art-loving community," he said.

"Time moves forward… technologies develop, suggesting new solutions to the new generations, while the enduring values continue to shine irrespective of times. Aram Khachaturian's legacy is one one of those values. We are proud to have contributed to this initiative," VivaCell MTS Director General Ralph Yirikian said.

The events dedicated to Aram Khachaturian's 110th birthday were among the most significant cultural events in 2013.

## "Armenophobia in Azerbaijan" Book Presented in Yerevan



YEREVAN -- The "Armenophobia in Azerbaijan" book by Head of the "Initiative for Prevention of Xenophobia" NGO Armine Adibekyan and PhD in Political Science Anzhela Elibegova was presented to the public in Yerevan. In the course of five years the authors have studied the Azerbaijani websites, the children's and educational literature. The book has been released with the support of the Department of Public Relations and Mass Media of the Office to the President of the Republic of Armenia.

The authors try to prove that sooner or later peace between the two peoples will be established. "We think it's unacceptable that pieces of children's and educational literature present Armenians as monsters, offend Armenians, thus shaping an attitude among the children. Even if a peace treaty is signed by miracle, we'll face a society filled with deep hatred," co-author of the book Armine Adibekyan said.

The Azerbaijani propaganda often asserts there are 30 thousand Armenians living in Azerbaijan today, whose rights are not violated. However, one of the chapters of the book titled "Armenians in Baku" provides facts to refute this, Anzhela Elibegova said.

The English edition of the book is expected to be released next year.

## 'Roadmap' to Armenia's Accession

**Continued from page 1**

spoke at that meeting. He praised instead "the high degree of preparedness of our Armenian partners for the adoption of obligations within the framework of our integration project."

"The presidents signed the roadmap to Armenia's accession to the Customs Union and determined time frames," Russia's First Deputy Prime Minister Igor Shuvalov told reporters afterwards. "Armenia stated that it will be seeking to shorten those time frames."

"We believe we will need half a year to conduct all inspections and see how prepared Armenia's institutions are for this reorganization and receive a guarantee that they are adequate Customs Union institutions," Shuvalov said.

Dozens of Armenian economic laws and regulations are due to be amended and brought into conformity with the union's legislation as a result. This process should be complete in time for the trade bloc's transformation into a Eurasian Economic Union of ex-Soviet states seen by Kremlin critics as an attempt to recreate the Soviet Union. Sarkisian plans to make Armenia part of that union as well.

Putin announced on Tuesday that he, Nazarbayev and Lukashenko worked out "the key principles" of the Eurasian Union's founding treaty and plan to sign it by May 1, 2014. "The treaty will then be submitted to the parliaments of our countries for ratification so that the Eurasian Economic Union can start functioning in full from January 1, 2015," he said.

## AAMS Awards Ten Scholarships During its Annual Christmas Celebration



GLENDALE -- A joyous and festive evening was had by all at the annual Armenian American Medical Society (AAMS) Christmas Celebration and Scholarship Awards Ceremony on Thursday, December 5, 2013 at the Impressions Banquet Hall in Glendale.

With over 250 AAMS members in attendance, everyone enjoyed a sumptuous dinner and danced until midnight to amazing musical entertainment. The evening also included a brief Continuing Medical Education (CME) lecture on "Sports Injuries and Prevention: Healthy Joints Matter" presented by AAMS Members and Orthopedic Surgeons Vahan Cepkinian, MD, and Michael Abdulian, MD.

Each year, the AAMS awards scholarships to Armenian American medical and allied health care students to assist them in their education. During the evening's Scholarship Awards Ceremony, the AAMS presented 10 - $1,000 scholarships for the 2013-2014 academic year. Awardees of the AAMS Scholarships included: Babken Asatryan, Rupena Atmajian, Sona Bekmezian, Artin Galoosian, Dana Malajian, and Laura Patakfalvi. The AAMS Ladies Auxiliary Scholarships went to Arabo Aghazarian and Jennifer Ann Khoshafian. In addition, Vartan Tashjian received the Dr. Norick Boghossian Memorial Scholarship and Ara Rostamian was awarded the Aznive Kalenian and Garo Bardakjian Memorial Scholarship.

The AAMS also welcomed its new 2013-2014 Board of Directors who were elected at the General Assembly on October 23, 2013. The new Board Members include: Serineh V. Melidonian, MD, President; Manuel P. Momjian, MD, Vice President; Armond Kotikian, DDS, MD, FACS, Secretary; Silva Gasparian, PharmD, Treasurer; Evelyn Baghdasraian Barkhoudarian, MD, FAAP, Parliamentarian; Vicken Sepilian, MD, FACOG, Membership Chair; Harry Balian, MD, FACC, FSCAI, Advisor; Alex Jawharjian, PharmD, MPH, Advisor; and Raffi Tachdjian, MD, MPH, Advisor.

"I am extremely honored to be serving as the new AAMS President," commented Serineh Melidonian, MD. "Our new board will strive to build on past successes and to promote the growth of the AAMS in the coming year."

For more information on AAMS projects, events and scholarships, please visit our website at www.aamsc.com.

## Parliament Ratifies Russian-Armenian Gas Deal

**Continued from page 1**

be counted by a special parliamentary commission. They argued that the vote count was done instead by parliament speaker Hovik Abrahamian and his two deputies.

"The treaty has not been ratified," read the statement signed by Postanjian, BHK's Naira Zohrabian, Levon Zurabian, the parliamentary leader of the Armenian National Congress (HAK), and Armen Rustamian of the Armenian Revolutionary Federation (Dashnaktsutyun).

"The Russian Federation, the outside world must be aware that the agreement has not been ratified," Nikol Pashinian, another opposition deputy not affiliated with any of these four parties, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am).

"If anybody transfers any assets of the Republic of Armenia to somebody else on the basis of this non-ratified agreement, we will deal with that somebody in a proper manner," warned Pashinian.

The deal in question, which was signed during Russian President Vladimir Putin's recent visit to Armenia, formalizes the sale of the Armenian government's 20 percent share in the domestic gas distribution network to Russia's Gazprom monopoly. In return, Gazprom will write off a $300 million which the government has incurred as a result of secretly subsidizing the price of Russian natural gas supplied to Armenia since 2011.

More importantly, the deal stipulates that the current and future Armenian governments cannot raise taxes or make any other changes in the regulatory environment for the Gazprom-owned network until January 2044. The Armenian side is also obliged to ensure that domestic gas tariffs in the country are high enough for Gazprom to recoup 9 percent of its capital investments in the network annually.

These unprecedented privileges have prompted vehement objections from opposition members and anti-government activists opposed to Armenia's planned accession to a Russian-led customs union. Hundreds of them demonstrated outside the parliament building in Yerevan on Monday.

## LA Galaxy to Face Armenian Champion FC Shirak in Preseason game

LOS ANGELES -- The Los Angeles Galaxy said Monday it plans to play FC Shirak, the reigning champion in the Armenian Premier League, in a preseason game at StubHub Center on Feb. 8, the Los Angeles Times reports.

This would be the first meeting between the two clubs and the first time that the Galaxy has hosted a team from the Armenian Premier League, the Galaxy said.

FC Shirak is based in Gyumri, in northwest Armenia, and the club is in second place through the first half of the 2013-14 Premier League season there.

The Armenian club is led by Ivorian midfielder Serge Deble, who is tied for the league lead in goals with nine, the Galaxy said.

## Armenia to Deepen Military Ties With U.S.

**Continued from page 1**

Tonoyan spoke at a joint news conference with Evelyn Farkas, the U.S. deputy assistant secretary of defense for Russia and Eurasia who headed a delegation of U.S. military officials during the consultations. Farkas held separate talks with Defense Minister Seyran Ohanian and Foreign Minister Edward Nalbandian on Wednesday.

"Armenia is a significant partner to the United States in many ways," Farkas told reporters. "As a partner in the Caucasus region, as a partner with NATO in the Partnership for Peace [program,] as a partner with the U.S. European Command in promoting regional stability, and as a partner with the Kansas National Guard."

Armenia has become a partner country in the U.S. Government-funded Global Peace Operations Initiative. Under this initiative, the U.S. expects to provide approximately $1.5 million over two years to support the development of Armenia's peacekeeping capabilities. The initiative aims to improve the capabilities of partner countries like Armenia to contribute to UN and regional peace operations. This new partnership is a strong signal of the close cooperation between the U.S. and Armenia, and is recognition of Armenia's commitment to international peace operations such as those in Kosovo, Afghanistan, and Lebanon.

"These bilateral defense consultations are an opportunity for us to talk about how we can continue to expand and deepen our defense relationship," the Pentagon official said. She added that the two sides concentrated on continued U.S. assistance to an Armenian army unit providing troops to ongoing NATO-led missions in Afghanistan and Kosovo.

It was announced that the Pentagon will allocate $1.5 million in fresh aid designed to expand Armenia's "peacekeeping capabilities" in 2014-2015. Tonoyan clarified that it will be spent on exercises and training programs that will facilitate Armenians deployments in other trouble spots.

In particular, Yerevan plans to contribute 60 troops to a United Nations peacekeeping force in Lebanon next year. Around 200 Armenian soldiers currently serve in Afghanistan and Kosovo.

Farkas lavished praise on those servicemen, saying that they have turned Armenia into a "net exporter of security." "That allows Armenia to continue to elevate its stature internationally," she said.

"This visit [by Farkas] highlights the strong and expanding cooperation between the United States and Armenia in the area of defense," the U.S. Embassy in Yerevan said in a statement issued earlier this week.

## PACE Vice-President Condemns

**Continued from page 1**

In addition the PACE Vice-President emphasized: "After this verdict I am more than convinced that the denialism has no place at least on the European level. We must struggle till the final triumph on the international level. This is our sacred duty before the memory of the victims of the first Genocide of the 20th century."

Previously it was reported that the European Court of Human Rights (ECHR) announced an ambiguous verdict on Doðu Perinçek's case, particularly taking into consideration the fact that two of the seven judges cast their vote against the verdict. The Minister of Justice of the Republic of Armenia Hrayr Tovmasyan underscored that while announcing the verdict ECHR laid a heavy emphasis on the fact that Doðu\ Perinçek is a historian and scientist.

# ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻԻ (ԹՕՍՈՒՆԵԱՆ) ՄԱՀՈՎ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՍՆՑՈՒՑ ՀՈԳԵԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՀՍԿԱՅ ՄԸ ԵՒՍ



*Հայութիւնը խոր ցաւով իմացաւ Ժիրայր Նայիրիի մահուան գոյժը: Ռատիօ Սեւանի կայանը իր հաղորդումներու ընթացքին գուժեց մահը՝ «Լիբանանահայ գաղութը կորսնցուց իր արժանաւոր զաւակներէն հրապարակագիր, 1929ին ծնած Ժիրայր Նայիրին, բուն անունով Ժիրայր Թօսունեան»:*

*Մէկ տարի եւս եթէ ապրէր, պիտի նշէինք իր ծննդեան 85 ամեակը, հասարակական անսակարկ ծառայութեան 65 ամեակը եւ իր թերթին՝ «Նայիրի»ի 20 ամեակը:*

*Այսօր, անխառն հպարտութեամբ, կրնանք ըսել որ 65 երկար տարիներու ընթացքին, ճանչցանք Ժիրայր Նայիրին՝ իբրեւ խմբագիր, կուսակցական ընկեր ու ղեկավար, ծանօթացանք իր մտածելակերպին ու գաղափարական սկզբունքներուն մէկ խօսքով, իր վաստակին՝ մեր կազմակերպութեան ու ազգին:*

*Մշտապէս պատնէշի վրայ մնալու եւ ընթերցողներու հետ հետեւողականօրէն հաղորդակցելու իր յանձնառութեան դիմաց, երբ կը կարդանք «Նայիրի»ին, «Զրոյց ընթերցողիս հետ» իր թանկագին խորհուրդները, յարգանքով կ՚ընդունինք զանոնք: Իր խմբագրականներով նուաճած էր տասնեակ հազարներու սէրը՝ լոյս աշխարհ բերած էր ճշմարտութեան անլռելի ձայնը, իր գրիչովը սատարած էր՝ հաւատքի, յոյսի ու լոյսի... ազատագրական հաւաքական պայքարին, հայ դատին: Արցախը իր սիրտն էր, իր ոգին, իր արիւնը: Գիտակից էր որ ազգեր կ՚ապրին ու կը գոյատեւեն միայն հայրենիքով: Ան պատկերն էր Մայր-Հայրենիքին: Այնքան ազնիւ, այնքան բարի: Իր ամենաթանկարժէք սեփականութիւնը անկեղծութիւնն էր: Յանդուգն ու յախուռն էր հայեացքով ու կեցուածքով: Կանգնած էր ժայռի կատարին, բարձր, բարձր: Հպա՛րտ էր իր հայութեամբ հայոց բարձր սարերու պէս: Իմացական բարձր կարողութեան տէր հեղինակութիւն մըն էր ան:*

*Դասախօսութեան ընթացքին հարցերը կը վերլուծէր իր եղանակով: Մօտեցումը գիտական էր, հանգրուանային հարցը կը բաժնէր մասերու, ապա՝ ենթաբաժանումներու եւ իւրաքանչիւր բաժին սպառիչ կերպով կը վերլուծէր, առանց ճապաղելու, իրար խառնելու: Կը մնար միշտ կիզակէտին վրայ: Ժամեր շարունակ, ոտքի վրայ, կը խօսէր, կը լուսաբանէր ու կը պատասխանէր: Կը մագնիսացնէր քեզ: Ո՛չ մէկ տատամսում: Հրապարակախօսի ելոյթներու իսկական բանաւոր մարդն էր ան:*

*Հայութեան եւ ամբողջ մարդկութեան հանդէպ իր ունեցած սէրը յաւերժական աղօթք էր առ Աստուած:*

*Ամէն ինչ անցաւ: Բայց... ամէն ինչ չէ, որ մոռցուեցաւ... Իր սիրած ամսուան՝ Նոյեմբերին, փակեց իր աչքերը այս երկրի վրայ, ծառայութեան պատնէշի վրայ... իր կեանքը գոհաբերող մարտիկը Նոր Տարուան «Նայիրի»ի բացառիկը կը սրբագրէր: Գրիչը դեռ թաց է մինչ հիմա: Իր թանկ կեանքը սիրենք մեր հայրենի երգերու պէս, նոյնիսկ բաժանումէն յետոյ: Ան կը շարունակէ ապրիլ յաւիտենական կեանքով մեր սրտերուն մէջ...*

*Սրտիս անթիւ աչքերուն մէջ իր աչքերն են դեռ... Հոգիիս անթիւ ականջներուն մէջ իր ջերմ խօսքերն են դեռ... մեր հեզնաւ Սեւանի պէս... սիրտս կ՚ուտեն յուշերն մեր... մեր օրերը հին... կը վերակենդանանան անցեալի քաղցր յիշատակներով:*

*Ժիրայր Նայիրիի գերեզմանով, գերեզման չ՚իջաւ իր աշխարհն ու երազները եւ վերանորոգ կեանքի կոչուեցաւ անոր սէրը, ծառայութիւնն ու պայքարը հայրենիքին համար, համայն մարդկութեան բարօրութեան համար:*

*Հայրենասէր, մարդասէր, եզակի անձնաւորութիւն:*

*Եղբայրութեան դաշտեր ակօսող Ժիրայր Նայիրին արժանացած է զանազան պարգեւներու, մրցանակներու, շքանշաններու եւ այլն:*

*Չորս գիրքեր հեղինակած է՝ «Հայրենի Կտուրի Տակ», «Հայուն Արեւմուտքը», «Յիսնամեակ վերածնութեան եւ փառքի» «Հնչակեան Կուսակցութիւնը եւ Հայկական հողային Դատը»: Այս վերջինը սպաներէնի թարգմանուելով լոյս ընծայուած է 1969ին, Արժանթինի մէջ:*

*Ժիրայր Նայիրի հաւասարապէս կը ծառայէր արժէքներու՝ Հայաստանին ու հայ ժողովուրդին, ապա նաեւ իր կուսակցութեան ու հայութեան, մնալով անզիջող իր Հնչակեանի կրակով վարակուած սկզբունքներով ղեկավարուելու վարքագծին: Հայ ժողովուրդին ու հայրենիքին գերագոյն շահերը ամէն բանէ առա՛ջ ու ամէն բանէ վե՛ր նկատած էր: Հպարտօրէն կառչած էր հայ մշակութային արժէքներուն հայ մշակոյթը իր էութիւնն էր: Ճշմարիտ գործի, հաւատքի, որակաւոր գործի մարդն էր: Մեծ էր ան, մեծ էր ու անզին: Այնքան ազնիւ, այնքան բարի:*

*Իմաստուն հայր էր... կիրթ ու քաղաքավարի: Լերան նման ամուր եւ հաւատարիմ էր իր ընտանիքին, քարերու աշխարհ Հայաստանին: Իր երեք զաւակներուն՝ Եւփիմէին, Մարալին եւ Յակոբին ջամբած էր բարձր կրթութիւն, մասնագիտութիւն: Ամուսնացուցած էր եւ թոռներուն հետ միասին կապած էր մեր ժողովուրդի արժէքներուն հետ՝ գեղեցկօրէն մարդկայնօրէն, ներշնչելով, յոյս, հաւատք եւ զանոնք դարձնելով իսկական հայ:*

*Մարդկային վեհագոյն սկզբունքներու տէր այս մարդը՝ Ժիրայր Նայիրին ամբողջ իր գիտակցական կեանքի ընթացքին սիրեց իր կողակիցին՝ իմ մէկհատիկ քրոջս Մարիին, արժանացուց զայն յարգանքի ու անոր հետ միասին կառուցել իրարհասկացողութեան ու համերաշխութեան տաճարը:*

*Միշտ կ՚ըսեն. որքան բարի է հոգին, այնքան աւելի բարդ է ճակատագիրը: Ցաւալի է այսպիսի բաժանումը: Կ՚աղօթենք, որ Բարձրեալն Աստուած այրի Մարիին եւ զաւակներուն պարգեւէ քաջառողջութիւն, եւ Սուրբ Հոգւոյն միջոցով մխիթարէ զանոնք: Թող հանգուցեալի յիշատակը վառ մնայ հոգիներուն մէջ:*

*Ժիրայր Նայիրին մեռած է, բայց չէ մահացած:*

*Մեծութիւնները կը մեռնին, բայց չեն մահանար:*

*Կը հայցենք Ամենաբարին Աստուծմէ, որ Երկնային Երանական խաղաղութեան մէջ ընդունի Ժիրայր Նայիրիի (Թօսունեան) հոգին եւ զինք յաւիտենական կեանքի արժանացնէ:*

*Եղբայրական սիրոյ ողջոյնով եւ վշտակցութեամբ,*

*ԺԻՐԱՅՐ ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ*




ԱՅՆԹԱՊՑԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՅԱՏՈՒԿ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Տեղի կ՚ունենայ՝

Կիրակի, Յունուար 12, 2014

երեկոյեան ժամը 6:00-ին

Brandview Ballroom

109 E. Harvard St., Glendale, CA 91205

Պատի Մեծարուին՝

Տիկ. Հերմինէ Վարդանեան Ֆերմանեան

եւ Պրն. Մասիս Արարատեան

Հանդիսավարութեամբ՝

Տիկ. Թագուհի Արզումանեանի

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ՅԱՅՏՆԱԳԻՐ

Տոմսեր ապահովելու համար հեռաձայնեցէք՝

Անտոնիա Տէմիրճեան (818) 783-7368

Աստղիկ Խաճճեան (626) 355-3897

Բրյա Գօթոյեան (818) 548-8318

Յարութիւն Նարապետեան (818) 817-1619

Մուտքի Նուէր $50

# ՄԵՐ ՍՐՏԵՐԸ ԻՐԱՐ ԿԱՊՈՂ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

Թաթախման գիշեր է, ինչպես ընդունուած է ասել նաեւ՝ խթման: Տնեցիները պատրաստութիւն են տեսել հայկական խոհանոցային կերակրատեսակներ՝ Ջրօհրնէքին յատուկ: Նախքան սեղանի շուրջը անցնելու յիշում եմ մօրս բարեպաշտական այն սովորութիւնը, որ իւրաքանչիւր Թաթախման գիշեր խունկ էր ծխում յիշելով կեանքից հեռացած հարազատներին, իւրաքանչիւրի անունը խորհրդաւոր զգայնութեամբ արտաբերելով խունկ էր դնում կեծ կարմիր կրակի վրայ ծրագալոյցի պատարագից տուն վերադարձին: Ահա ես էլ նոյն սովորութեան հետքերով անցնում եմ գործի: Մեծ Թոռս՝ հինգ տարեկան Նազեհն, հետաքրքրուած հարց է տալիս.

-Ապապա ի՞նչ ես անում, էս ծակծակ Թիթեղը ինչի՞ համար է:

Ջանանում եմ նրա բոլոր հարցերին համբերութեամբ պատասխանել, որպէսզի մեր խօսակցական լեզուին վարժուի:

-Այս Թիթեղի վրայ վառած ածուխ եմ շարելու, յետոյ կը տեսնես, ինչ եմ անելու, նախ գնանք, կրակ վառենք:

Նրա ձեռքը բռնած բակում դրուած կրակարանին ենք մօտենում, այդ միջոցին կնոջս հետ մեր մօտ է գալիս աւելի փոքր Թոռնիկս՝ Յօղիկը, նա էլ հետաքրքրութիւնից մղուած հարցեր է ուղղում Թոթովախօս բառերով, նա երեք տարեկանի սեմին է, բայց դեռ կակազում է, նա ստանալով պատասխան՝ կանգնում է կողքիս անդադար խառնուելով գործին:

Տօնական հաճելի գիշեր է, դրանով հանդերձ որ ձմռան եղանակ է, սակայն գարնան գաղջ երեկոյի տպաւորութիւն է Թողնում, ոչ սրթսրթացնող: Գրեթէ լիալուսնի սկաւառակը էն ծիրկաթնի մօտից իր արծաթէ ջինջ լոյսն է արձակել մութը մեղմացնելու նպատակով, անհամար աստղերի զարդարանքը եւս երկնքում իրենց կախարդական շէկ պլպլոցով լուսնի մէջքին կանգնած մունջ օգնում են նրան առատահոս լոյսի տարածման՝ առաւել շուք ու փայլ տալու Մեսիայի Ծննդեան երեկոյին, այսպէս՝ երկինք ու երկիր տօն են բռնել Յիսուսի Ծննդեան առիթով:

Կրակարանի հուրհրացող բոցին հսկում եմ, որ շատ չբոցկլտայ, հարեւանների բողոքի ալիքից զգուշանալով, քանի որ շրջապատը փայտ է եւ բռնկուելու վտանգը հաւանական: Ես այնքան էլ փայտաշէն բնակարանի հետ սէր չունեմ, նա ժամանակաւոր տպաւորութիւն է Թողնում տարբեր վտանգի փլուզման եւ քայքայման ենթակայ՝ հրդեհի, երկրաշարժի, փտման եւ այլն:

Այստեղ Թող յիշեմ մի դէպք կրակի հետ կապուող, որը մտահոգիչ դարձաւ, սակայն բարեբախտաբար պատժիչ հետեւանք չունեցաւ: Մեր վարձու կառոյցի համալիրում յարմար խորովածի օջախ չի նախատեսուել, հարկադրուած կնոջս հետ խորովելիք միսն ու պատկանելիք առարկանները վերցրած Գլենդէլի Վերդուգօ զբօսայգին գնացինք, մեր տարած կրակարանը դրինք փարքի կրակարանի վրայ եւ մօտակայ Թափթփած չոր փայտերը հաւաքելով կրակ վառեցինք, կրակի ծուխն ու բոցը երկինք էր բարձրացել, մենք էլ միամիտ միսը շամփուրին ենք քաշում, լոլիկը, սոխը, գետնախնձորը, բիբարը եւ սմբուկն էլ պատրաստում ու սպասում ենք, որ հուրհրացող բոցէ լեզուները կրակարանի երախում հանգչեն, այդ միջոցին հրշէջ մեքենան մի կողմից եւ փարքի պատասխանատուները միւս կողմից կրակի շուրջը օղակելով բոցկլտացող խոշոր փայտերը մարել տուին կրակարանում Թողնելով ածխացած կրակը, ինձ նկատողութիւն անելով Թարգմանի միջոցով, կրակ անելու մասին օրէնքը բացատրեցին, ապա ինքնութեանս տեղեկութիւնները առնելով Թողին հեռացան: Իմ անզգոյշ արարքը մեզ մտահոգութեան եւ անհանգստութեան մատնեց հետագայ պատասխանատուութիւնից եւ տուգանքից: Եղած կրակով կիսատ-պռատ բաներ խորովելով տուն մեկնեցինք:

Ուր էլ լինենք, պէտք է որ օրէնքը յարգել եւ խուսափել խախտումներից:

Ամերիկայում, հասարակութեան աչքի առջեւը, մարդկանց արարքները, ըստ օրինաց՝ ձեւուած ու չափուած պիտի լինեն տարբեր տեսակէտից, որպէսզի մարդ չտուգանուի, այն էլ ինչ բարձր տուգանք, որի պատճառով զգուշութիւն եւ կարգ ու կանոն է տիրում՝ այն էլ մի խայտաբղէտ ժողովուրդների երկրում: Ես համաձայն եմ այս տեսակ օրէնսդրութեան հետ, կարգ ու կանոնի նկատմամբ խստութիւնը ապահով եւ խաղաղ կեանքի, հանգստութեան եւ յառաջդիմութեան երաշխիք է: Յոյսով մեր Հայաստան աշխարհում եւս կարգ ու կանոնի եւ օրէնքի խստութիւնը տիրակալ կը լինի:

Պզտիկները սեւեռուած կրակին ուրախութեան ճիչեր են արձակում, մերթ մօտենում են, մերթ նահանջում բղաւելով.

-Վա՜յ, էս ինչ տաք է:

Սեւաթուխ ածուխը դարձաւ վառվռուն բոսորաթոյր, շարում եմ Թիթեղի վրայ, այն առածը Թէ՝ սեւին սապոնը ինչ կանի, խեւին՝ խրատը, սակայն մենք սեւին դարձրինք վառ կարմիր ջերմացնող եւ այրող կրակ:

Թոռներս կրակի շուրջը ակնդէտ շարժումներիս են հետեւում: Խունկն եմ բերում, որ կրակի վրայ ծխեցնեմ, Նազեհն ձեռքը մեկնում է դէպի խունկը ափի մէջ առնելով մի քանի հատիկներ անուշ բառերով հարցնում է.

-Ապապա ի՞նչ է սա:

-Սրան ասում են խունկ, անուշաբոյր ծառի խէժից է ստացւում:

-Ինչ են անում սրան:

-Կրակի վրայ ծխեցնում են, որ անուշ հոտ տարածուի, մի քանի յատկութիւններ ունի:

-Ի՞նչ է նշանակում յատկութիւն:

-Այստեղ այսինքն՝ գործածութեան տեսակ, օրինակ, առաջին՝ հոտաւութեան անուշ հոտ է տարածում շուրջը, երկրորդ՝ օդում մանրէներին-միկրոբներին սպանում է, հականեխիչ յատկութիւն ունի, երրորդը՝ խորհրդաւոր մթնոլորտ է առաջացնում աղօթքի համար, հասկացա՞ր, ինչ որ ասացի.

-Հա՛, հասկացայ:

-Հա չեն ասի, կասեն՝ այո՛: խունկը գործ է ածւում եկեղեցում, գերեզմանատնում եւ այսպիսի առիթներով: Եկեղեցում խունկի անուշաբոյր ծուխը տարածւում է եկեղեցական սպաս ՝ բուրվառով:

Նախքան խունկը կրակի վրայ դնելով խաչակնքում եմ, «Հայր Մեր» եմ ասում, ապա յիշում եմ ծնողներիս եւ հարազատ ննջեցեալների անուններ նրանց հոգուն խաղաղութիւն հայցելով:

Մեռեալներին յիշելով կապուած ենք մնում մեր անցեալին, երախտապարտ նրանց արածին, խրախուսիչ գալիք սերունդներին:

Մեծ Թոռս մաքուր հայերէն

Շար.ը էջ 18

ARGENTBANK



We are open for business, and here to wish you happy holidays!

Concetta Smarius
Avo Markarian
700 N. Central Ave., Ste. 340
Glendale, CA 91203
818-844-2555

Donna Owen
Gary Ketenchian
16501 Ventura Blvd., Ste. 607
Encino, CA 91436
747-233-3500

Stacey Peterson
Richard Glass
2801 N Ventura Blvd. Bldg G
Oxnard, CA 93036
805-973-8540

BankWithArgent.com

MEMBER FDIC

EQUAL HOUSING LENDER

# ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ




*Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան կենտրոնատեղիում Շաբաթ, Դեկտեմբերի 14-ին տեղի ունեցաւ գրքի ներկայացում Միութեան գրական շրջանակի միջոցով: Ներկայացուեց Աւետիս Նազարեանի՝ «Ապրած եւ չապրած տարիներ» գիրքը, որը հրատարակուել է վերջերս, Լոս Անջելըսում, պարունակում է 281 էջ գարդարուած ընտանիքի եւ հարազատների նկարներով:*

*Բացման եւ շնորհաւորանքի խօսքեր ասաց հաւաքի պատասխանատու՝ տիկ. Հիլդա Աֆթանդիլեանը: Անուանի թատերագիր եւ արձակագիր Խորէն Արամունին ներկայացրեց գիրքը եւ որոշ մեկնաբանութիւններ կատարեց ու գնահատեց հեղինակի եռանդն ու նուիրումը յուշերը գրի առնելու եւ ներկայացնելու համար: Խ. Արամունին գրքի հրատարակիչ եւ խմբագիրն է:*

*Գովասանքի եւ շնորհաւորանքի արտայայտութիւն ունեցաւ բանաստեղծ եւ երգիծագիր Ներսէս Տէր Մեսրոպեանը:*

*Վաստակաւոր ուսուցիչ եւ արձակագիր Ռուբէն Կորիւնը հակիրճ բառերով ներկայացրեց գիրքը, գնահատեց յուշագրութիւնը եւ հեղինակի քերթուածների հայրենասիրական, ազգային եւ եկեղեցասէր ոգին, պարզ ու անկեղծ զգացումները: Նա գրքից կարդաց մի քանի բանաստեղծութիւններ:*

*Ներկաներից ոմանք իրենց խօսքերով շնորհաւորեցին եւ արժեւորեցին Աւետիս Նազարեանի երրորդ գիրքը, որը յուշագրութիւն է իր ծննդավայր Քալաւա գիւղի մասին, որի գիւղապետն է եղել երկար տարիներ:*

*Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ գրքի վաճառք:*

*Ն. Տ. Մ.*

# ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆՈՒՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ 127ՐԴ ԱՄԵԱԿԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ «ԲԱԺԱԿԻ ՊԱՀ»ՈՒ ԽՐԱԽՃԱՆՔԸ



***ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ***

*Պոլսահայ Միութեան Կեդրոնական Վարժարանի Սանուց Յանձնախումբի անդամներն ու համակիրները այս տարի ալ իրենց սիրելի վարժարանին պատմութիւնը վերապրեցան եւ անոնց հոգիներուն մէջ ծալք առ ծալք բացուեցան իրենց դպրոցական հին օրերու աշխարհը, Կիրակի Դեկտեմբեր 15, 2013ի գիշերը, Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» սրահին մէջ, տօնակատարելով վարժարանին 127րդ ամեակի «Բաժակի Պահ»ը:*

*Ձեռնարկը հանդիսավարեց Տիար Յակոբ Ծերունեան, բոլորին ողջունելով եւ բարի երեկոյ մաղթելով, նաեւ իր ուրախութիւնը յայտնելով որ ձեռնարկը հանդիսավարելու պատիւը ընծայուեցաւ իրեն:*

*Ներկաները ճաշակեցին համադամ աղանդերներն ու ճաշերը DJ Մհերի մեղմիկ մեղեդիներու ունկնդրութեամբ: Ապա ամպիոն հրաւիրուեցաւ Կեդրոնական Վարժարանի Սանուց Յանձնախումբի ատենապետ՝ Տիար Աւետիս Թէքօլեանը որ ներկաներուն ծանօթացուց իր Յանձնախումբի անդամները, բարի գալուստ մաղթեց այդ գիշեր ներկայ եղող Միութեան Հոգաբարձութեան Պատուոյ ատենապետ՝ Տիար Կարապետ Ազբուլաթին, Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տիար Ռաֆֆի Մարուքեանին, Հիմնադիր անդամ՝ Տիար Կիւլպէնկ Մովսէսեանին,* The Armenian Observer *շաբաթաթերթի Տէր եւ Տնօրէն՝ Փրոֆ. Օշին Քէչիշեանին եւ Քոյր յանձնախումբերու ատենապետներուն եւ ատենապետուհիներուն: Շնորհակալութիւն յայտնեց Հոգաբարձութեան եւ Գործադիր Յանձնախումբին, որոնք սրահը տրամադրեցին այդ գիշեր, հանդիսավար Տիար Ծերունեանին եւ վերջին բաժնով բարի գալուստ մաղթեց նախկին ատենապետներուն՝ Տոքթ. Արթօ Էրսան Խաչերեանին, Տիար Գրիգոր Սուրիին, Տիար Յակոբ Գալֆային եւ Տիար Սիմոն Աճիլաչօղլուին իրենց ներկայութեան համար:*

*Ապա հրաւիրեց Միութեան Գործադիր յանձնախումբի ատենապետ՝ Տիար Ռաֆֆի Մարուքեանը, որ բարի գալուստ մաղթեց բոլորին եւ խօսեցաւ Միութեան մէջ կատարուելիք եւ իրագործուելիք իր ջանքերուն եւ ապագայ ծրագիրներուն մասին, որպէսզի այս միութիւնը ըլլայ հայկական ամենափայլուն կեդրոններէն մին:*

*Հանդիսավարը հակիրճ տեղեկութիւն տուաւ վարժարանին պիւտճէին, մատակարարներուն եւ բարերարներուն, ինչպէս նաեւ ուսանողութեան թիւին մասին:*

*Ապա ատենապետ Աւետիս Թէքօլեան բացատրութիւն տուաւ թէ յիսուն տարի եւ աւելի շրջանաւարտ եղող անձերուն յիշատակի գիրեր պիտի բաժնուին, հետեւաբար հրաւիրեց երկու հոգի՝ Տեարք Կարպիս Երեւլէկ եւ Սուրէն Կիւզէլմօրայ, որոնք ատենապետին ձեռամբ ստացան յիսուն տարի եւ աւելի շրջանաւարտութեան իրենց յիշատակի գիրերը:*

*Տիար Ծերունեան յայտնեց թէ Կեդրոնական Ազգային Վարժարանը Պոլսահայ համայնքին մաս կը կազմէ եւ բոլորիս աւանդ ձգուած է նուիրեալ եւ ծառայասէր հայորդիներու կողմէ: Ան հրաւիրեց բոլորը յարգանքի տուրք մատուցանելու Վարժարանին ծառայող հարիւրաւոր անձերուն խնկելի յիշատակին, սկսելով Երջանկայիշատակ Ներսէս Արք. Վարժապետեան Պատրիարքէն, բոլոր հիմնադիրներուն, բարերարներուն, նուիրատուներուն, տնօրէններուն, ուսուցիչ-ուսուցչուհիներուն, աշակերտ-աշակերտուհիներուն եւ այն բոլոր ծառայող յանձնախումբերուն անդամներուն, որոնք տարիներու ընթացքին մեզմէ անդարձ բաժնուած են:*

*Գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցան Լիլիա Պարախումբի անդամները խմբային եւ մենապարով:*

*Հրաւիրուեցան երիցագոյն անդամք՝ Տիար Արամ Տուհանճըօղլուն եւ Կարպիս Երեւլէկը եւ կրտսերագոյն անդամ՝ Տիար Գառնիկ Օհանեանը եւ բոլորը միասին բաժակները բարձրացնելով գոչեցին «Ապրի՛ Կեդրոնականը, Ապրի՛ Կեդրոնականցին»:*

*Յանձնախումբի անդամները իրար մօտ գալով հատեցին 127րդ ամեակի կարկանդակը վարժարանին շէնքը խորհրդանշող, պատրաստուած եւ նուիրուած՝ Տիար Ժիրայր Արսլանի դստեր՝ Տիկին Նիրվա Տէմիրի կողմէ: Տեղի ունեցաւ խմբային յիշատակի լուսանկարահանում:*

*Կատարուեցան նաեւ սրտաբուխ նուիրատուութիւններ:*

*Գիշերը հասաւ իր աւարտին, ակնյայտ էր թէ Կեդրոնական վարժարանը բոլորին անձերուն հարազատ ցոլացումն է, անոնց հոգիներուն մէջ փորագրուած եւ ոչ թէ անուն մը լոկ դուրսէն գրուած:*

# ԸՆԿԵՐԱԼԵԶՈՒԱԲԱՆ՝ ԴՈԿՏ. ԱՐՏԱ ՃԵՊԷՃԵԱՆ ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,
Կը ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն
Եւ բորեանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ազատ:

Մուշեղ Իշխան



***ՃՈՐՃ ԱՐԱՊԱԹԼԵԱՆ***

*Մեր ոսկեղենիկ լեզուին մասին շատ են գրուած ու ըսուած խօսքերը: Շատեր հիւսած են անոր գովքն ու կարեւորած անոր դերն ու նշանակութիւնը: Հայերէնը աշխարհի հնագոյն լեզուներէն է: Որպէս հաղորդակցութեան կարեւոր միջոց եւ մշակոյթի ձեւ՝ հայոց լեզուն հայ ժողովուրդի ամենահին եւ ամենանուիրական ժառանգութիւնն է, անոր կեանքի կենդանի յիշատակարանը: Անոր մէջ արտացոլուած է մեր ժողովուրդի հազարամեայ պատմութիւնը՝ հնագոյն ժամանակներէն մինչեւ մեր օրերը:*

*Հայոց լեզուի հարստութիւններէն պէտք է համարել անոր երկու ճիւղերը՝ արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը: Դարէ մը աւելի երկարող պատմութեամբ Հայոց լեզուի երկու ենթաճիւղերը ապահովեցին հայ ժողովուրդի հոգեւոր սնունդը:*

*Մեծարենցներ, Սիամանթօներ, Վարուժաններ եւ Դուրեաններ հասցուցած արեւմտահայերէնը, սակայն, այսօր կը դիմագրաւէ դժուարին փորձութիւն մը: Քանզի, համաձայն* Unesco*-ի տուեալներուն՝ արեւմեահայերէնը աշխարհի վտանգուած լեզուներուն մաս կը կազմէ:*

*Հետեւաբար, ընդառաջելով Հայոց Ցեղասպանութեան Քուէյթի 100 ամեակի Յանձնախումբի առաջարկին, ընկերալեզուաբան Դոկտ. Արտա Պօյնէրեան-Ճէպէճեան, Երկուշաբթի, 9 Դեկտեմբերին, Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ հանդէս եկաւ «Հայ լեզուի պահպանումի մարտահրաւէրը սփիւռքեան իրականութեան մէջ» դասախօսութեամբ, որուն ընթացքին ներկայացուց վտանգուած լեզուներու մա-*

*Շար.ը էջ 18*

# «ՄՈՐՄՈՔՈՂ ԱՆՑԵԱԼԻ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ»
## (Հեղինակ՝ Մինաս Գոճայեան)

*ԶԵՆՈՐ ՔՀՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ*




*Բազմավաստակ ուսուցիչ, դաստիարակ, բանախօս, բազմաթիւ յօդուածներու հեղինակ՝ Մինաս Գոճայեան, տարիներէ ի վեր կը վայելէ յարգանքը եւ հիացմունքը համայն հայութեան ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի՝ իր տասնեակ տարիներու մտաւորական անդուլ ու բազմաբեղուն աշխատանքներուն համար: Պրն. Գոճայեանին ճաշակաւոր ու պատկերազարդ գիրքը՝ «Մորմոքող Անցեալի Արահետներով», որ լոյս տեսաւ վերջերս, մեծ հետաքրքրութիւն եւ ոգեւորութիւն յառաջացուց հայութեան մէջ, որովհետեւ ան կը պարփակէ պատմական Հայաստան կատարուած ուխտագնացութեան մը յուշերն ու տպաւորութիւնները եւ հայ ինքնութեան ամրապնդման ուղղութեամբ մարտահրաւէր մը համայն հայութեան՝ հայ մտքի լուսարձակը բաց ու արթուն պահելու քաղաքական տեսադաշտէն ներս:*

*Այս գիրքը, սովորական իմաստով յուշագրութիւն չէ, վասնզի անոր կ՚ընկերանան պատմագիտական արժէքաւոր տեղեկութիւններ, խիստ հետաքրքրական մանրամասնութիւններ, անձնական դատողութիւններ, խորհրդածութիւններ, որոնք կու գան լուսաբանելու ընթերցողին միտքը եւ հարստացնելու անոր գիտելիքները մեր պատմական տեղեաց մասին: Միշտ չէ որ այս բացառիկ հոգեկան վայելքը կը մատուցուի ընթերցողին:*

*Նախքան հանգամանօրէն անդրադառնալը գրքի հարուստ բովանդակութեան եւ կատարելու անոր լիարժէք գնահատումը, կ՚արժէ մէջբերել այն հետաքրքրական հատուածը ուր Մինաս Գոճայեան իր գրքի վերջաբանին մէջ կը գրէ. «Գլխաւոր հարցումը որ տրուեցաւ ինծի, սա եղաւ՝ ինչո՞ւ գացիր շատերու համար կորսուած նկատուող Պատմական Հայաստան կոչուած երկիրը»: Ան իր պատասխանը կու տայ հետեւեալ ձեւով. «Գացի իմ արմատներուս մնունդ տուած հողը տեսնելու: Գացի կորուստիս ահաւորութիւնը չափելու: Գացի աւելի լաւ ճանչնալու այն մարդը, որ այսօր կ՚ապրի հոն եւ ինքզինք տէրը կը նկատէ այդ հողերուն, զոր մենք կը կոչենք պարզապէս Հայաստան կամ Մեծ ու Փոքր Հայք եւ Կիլիկիա: Ես ուխտի գացի այն վայրերը, որոնք էութեանս ու դաստիարակութեանս անբաժանելի մասը կազմած են այն պահէն, երբ տակաւին մանուկ հասակիս իմ մեծ հայրերս ու մայրերս խօսած են իրարու հետ մղկտալով ու անիծելով այն սեւ ձեռքերը, որոնք օր մը գիրենք բարեկարգ վիճակէն նետեցին Թիթեղաշէն տանիքներու տակ, Հալէպի ու Պէյրութի արուարձաններու տարածքին: ... Երկու անգամ գացի ու գրեցի այս մասին, որպէսզի հայութիւնը եւ իր պետութիւնը յարգը գիտնան այսօրուայ պատառիկ մը հողին, որ կը կոչուի Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւն»:*

*Այս խօսքերը, արդարեւ, ծանրակշիռ են ու աւելի քան համոզիչ: Մի՞թէ իւրաքանչիւրս նոյն զգացումները պէտք չէ ունենանք, երբ խնդրոյ առարկան մեր ժողովուրդի պատմութիւնն է, անոր անցեալը, ներկան եւ ապագան: Պէտք է անկեղծօրէն խոստովանիլ, որ այսօր շատեր կը կատարեն նման ուղեւորութիւն դէպի Պատմական Հայաստան պարզապէս տեսած ըլլալու համար վայրերը եւ ոչ անպայման վերստին մկրտուելու հայութեան աւազանին մէջ, եւ մանաւանդ՝ յարգը գիտնալու մեզի ներկայիս վիճակուած աննշան հողին:*

*Մինաս Գոճայեան ընթերցողին ուշքն ու երեւակայութիւնը կը գրաւէ իր այս գիրքով եւ զայն ճանապարհորդակից կը դարձնէ քայլ առ քայլ բոլոր պատմական հանգրուաններուն, ուղեւորական արկածախնդրութիւններուն եւ պատահարներուն: Ընթերցողը կ՚ապրի գոհունակ պահեր, երբ իր հոգեկան աչքերով կը տեսնէ իր պապերուն երկիրը, ուր դարերով անոնք ապրած, աղօթած, աշխատած ու մեր տոհմիկ աւանդութիւնները եւ սրբութիւնները պահած են: Հեղինակը լայնօրէն պատմականը կը կատարէ իւրաքանչիւր քաղաքի, աւանի, գիւղի՝ բերելով առատ օրինակներ գործող դէմքերու ու ճշգրիտ թուականներու: Ան մեզ կ՚առաջնորդէ նարնջենիներու եւ կեռասենիներու այգիները, եւ կ՚անցընէ արմաւենիներու ու վարդենիներու ծառուղիներով: Մեր երեւակայութիւնը կը բորբոքէ հեքիաթային բնութիւնը իր բարձրաբերձ լեռներով, անդնդախոր ձորերով, կիրճերով, գետերով ու առուակներով, աղբիւրներով ու զուլալ ջուրերով: Իր տեսակին մէջ այս յուշագրութիւնը դարձած է համայնագիտական տեղեկութիւններով լի եզակի աշխատութիւն: Ան շարքով Անտիոքէն մեզ կը տանի Վագըֆ գիւղ, ապա՝ Կիլիկիա, Զորք Մարզպան, Սիս, Ատանա, Կապադովկիա, Զէյթուն, Մարաշ, Մեծ Հայք, Ծովք լիճ, Բալու, Մուշ, Մանազկերտ, Պայազետ, Անի, Բերկրի, Վան, Տիարպեքիր, Եդեսիա, Այնթապ ու Հռոմկլա: Ան մեծ վարպետութեամբ կը նկարագրէ իւրաքանչիւր վայր, գովքը կը հիւսէ չքնաղ բնութեան ու հիանալի եղանակին, առատ բերքին: Տխրութեամբ կը յիշատակէ որ հայաթափ այս քաղաքները վերաբնակեցուած են ոչ հայ տարրերով, որոնք քաջ տեղեակ են անցեալի պատմութեան, խառն ու անբաղձալի փորձառութեան, եւ լաւ կը ճանչնան անոնց բուն տէրերը: Ամենէն դիպուկ արտայայտութիւնը այս ուղղութեամբ՝ «Բարի եկած էք ձեր տունը, հազար բարի», «Նորէն հրամեցէք», «Ձեր տունն է ասիկա» խօսքերն են, զորս այժմու բնակիչներ տարբեր առիթներով արտասանած են: Այդ բնակիչներէն ոմանք նոյնիսկ հրաւէր կ՚ուղղեն հայութեան վերադառնալու եւ շէնցնելու ամայացած վայրերը:*

*Հեղինակի հիմնախնդիրները, որոնք ամէնուրեք ի յայտ կու գան, են Հայաստան պատմական հողերու ահաւոր կորուստը, հայաբնիկ բնակչութեան տեղահանումը եւ կոտորումը սարսափելի ու անպատում պայմաններու տակ, նիւթական անհաշիւ ու անհամար վնասները, որոնք ցայսօր կը մնան անլոյծ, եւ անշուշտ՝ Հայ Դատը:*

*Յարգելի հեղինակը շատ ուժեղ կը գիտակցի որ անհայրենիք ժողովուրդ մը դատապարտուած է մահուան, չքացման: Շատ մը հին ազգեր ներկայ քարտէսէն անհետացած են վասնզի չունէին հարկ եղած ենթահողը եւ կենսական պայմանները:*

*Մինաս Գոճայեանի սիրտը կը մղկտայ ի տես իր նախնիներու բերրի հողերուն ամայացման, որբացման: Անոնց լքուած ու անփառունակ վիճակը, անտարակոյս, հեղինակին խորին թախիծ կը պատ-*

*Շար.ը էջ 19*

# ԿԱՄԱՒՈՐԸ

*ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ*

*Ինքնաշարժիս մէջ նստած կը դիտեմ զինք, երկար ձողի մը վրայ կարմիր դոյլ մը կախած եւ փոքրիկ զանգակ մը աջ ձեռքին, «Սիրգ»ի դրան առջեւ կանգնած կ՚ողջունէ իւրաքանչիւր յաճախորդ, մեծ կամ պզտիկ, որոնք եկած են տօնական այս օրերուն գնումներ կատարելու ամերիկեան այս հանրածանօթ հաստատութենէն:*

*- Մէրի Քրիսմըս... Մէրի Քրիսմըս..., ու զանգը հնչեցնելով, ուրախութեան ժպիտ մը կ՚ուրուագծուէր դէմքին վրայ, երբ ամէն անգամ անծանօթ մը տոլար մը դնէր թոյլին մէջ, եւ ողջունէր զինք նոյնպէս Մէրի Քրիսմըս ըսելով:*

*«Սիրգ»ի կանգառը՝ ինքնաշարժիս մէջ տաքուկ նստած, կը դիտեմ սա անծանօթ կամաւորը, որուն հագուած համազգեստէն կը կռահեմ որ «Սալվէյշըն Արմի» կոչուած բարեսիրական կազմակերպութեան մէկ անդամն է, որ տուն տեղ թողած, Դեկտեմբերի այս ցուրտ եղանակին չքաւոր ընտանիքներու օգտակար հանդիսանալու, կամ ծնողազուրկ երախայի մը ուրախացնելու գոհունակութիւնը սրտին մէջ, եկած է այստեղ իր ձեռքի փոքրիկ զանգակով մարդոց խիղճին խօսելու... Մէրի Քրիսմըս... կրկնելով քանի մը անգամ, եւ ինչ փոյթ եթէ իր ողջոյնները քանի՜... քանի՜... անգամներ փախին խուլ ականջներու:*

*Եօթանասուն գարուններ բոլորած, կեանքի տաք ու պաղ օրերը տեսած մարդ մը կ՚երեւի սա անծանօթ կամաւորը, որ ուշադրութիւնս գրաւած է հիմա: Կը նայիմ զինք, ու կը հիանամ իր այդ տարիքին իսկ, այն հաւատքին վրայ որ բերած է զինք այստեղ փոքրիկ ճերմակ զանգակը հնչեցնելու իր արդէն իսկ դողդղացող ձեռքով:*

*Ու յանկարծ... Մէրի Քրիսմըս բառին հետ հայերէն բառեր... Շնորհաւոր Սուրբ Ծնո՜ւնդ:*

*Հայ աղջիկներ պահ մը կանգ կ՚առնեն, կը նային զիրենք ողջունող ծերունիին, ու ժպտալով կ՚անցնին... կը հեռանան, մինչ ծերունին կը շարունակէ «սիրգ» մտնող նոր յաճախորդները ողջունել:*

*- Մէրի Քրիսմըս... Մէրի Քրիսմըս... ու զանգակը անդադար կը հնչէ մարդոց խիղճին...*

*Հայերէն բառերը պահ մը ուշադրութիւնս կը գրաւեն: Արդեօք հա՞յ է սա կամաւորը, թէ պարզապէս գիտնալով որ Կլենտէյլը հայաշատ հայ համայնք մը ունի, հայերէն ողջոյնը հիմա շրթներուն կը շնորհաւորէ հայ յաճախորդներուն Ս. Ծնունդը:*

*Կինս որ տակաւ կ՚ուշանայ «Սիրգ»էն ներս, հետաքրքրութիւնս կը մղէ զիս ծերունիին մօտենալու:*

*Լուման ձեռքիս, կը մօտենամ թոյլին...*

*- Մէրի Քրիսմըս... Թէնք եու սըր... ըսելով կ՚ողջունէ զիս ծերունին:*

*- Շնորհաւոր Ս. Ծնունդ, հայերէնով կ՚ողջունեմ ես այս անգամ:*

*- Հա՞յ... շնորհաւոր Ս. Ծնունդ:*

*- Ինքնաշարժիս մէջէն ձեզ կը դիտէի եւ կը հիանայի ձեր նուիրումին վրայ:*

*- Էրսուն տարի աւել, էս «Սալվէյշըն Արմի»... էս գործ կ՚ընեմ: Աղքատներ, չօճուխներ, «հոմլըս»ներ կ՚օգնէ, տաք կերակուր, խաղալիք բաժնէ:*

*- Ինչպէս եղաւ որ ամերիկեան այս հաստատութեան կը ծառայես:*

*- Էս ամըրքացի եմ, Ֆիլատելֆիա ծնել: Մամա, Պապա Խարբըրդցի: Ճէնոսայտ, տեսնէ... ինծի պատմէ Պապա: Իմ կին՝ ամըրքացի «Սալվէյշըն Արմի» մէմպըր: Էս ալ մէմպըր էղայ...:*

*Մենք հայերս երկու մեծ բարեսիրական միութիւններ ունինք, Հայ Օգնութեան Միութիւնը եւ Բարեգործական Միութիւնը, ծանօ՞թ ես անոնց:*

*- Օ այո: Եու նօ, շատ տարի առաջ, էս ուզեմ հայ էկեղեցի առաջ օգնէ... հայերի օգնէ...*

*Ու լռեց...: Յուզում մը եկաւ յանկարծ աչքերուն, փորձեց զսպել շրթները խածնելով... ու քիչ ետք խեղդուած ձայնով ըսաւ.*

*- Էս զանգակ չի սիրեցին...*

*Լռելեայն լումաս կը նետեմ դոյլին մէջ, ու շնորհաւորելով ծերունիին կ՚երթամ ինքնաշարժս: Կրկին կը դիտեմ սա հայորդին ու կը խորհրդածեմ հայրենիքի, Ջաւախքի, Իրաքահայութեան, Արցախի, սահմանամերձ հայ գիւղերու հազարաւոր կարօտեալներուն մասին: Եւ հիմա՝ Խաղաղականի սա հանգստաւէտ ափերուն վրայ, տօնական այս օրերուն, «Սիրգ»ի դրան առջեւ «Սալվէյշըն Արմի»ի զանգակը հնչեցնող եւ ամերիկեան գեղեցիկ սովորութիւնը որդեգրած սա ծերունի հայ կամաւորը, որքա՜ն ուրախ պիտի ըլլար եթէ ՀՕՄ-ի կամ Բարեգործական զանգակը հնչեցնէր, հայ եկեղեցիներու կամ հայ առեւտրական հաստատութիւններու առջեւ:*

*Ու զանգակը կրկին կը հնչէ... «Սալվէյշըն Արմի»ին համար:*

*Եղեռնէն ճողոպրած սերունդի մը զաւակը՝ չքաւորի մը օգնելու, անտունիի մը ուրախացնելու, որբի մը արցունքը սրբելու համար փողոց է իջած, ու ծանօթին եւ անծանօթին կ՚ողջունէ Քրիստոսի Սուրբ Ծնունդը, իր գիտցած ամերիկեան սովորութեամբ ու մշակոյթով, ինչ փոյթ եթէ «էս զանգակը չի սիրեցին...»:*

*Բայց զանգակը կը շարունակէ խօսիլ մարդկութեան խղճին, մինչ... թոյլը կը լեցուի բարութեամբ:*

## ԿԻՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՅԱՍՈՒՆՈՒԹԻՒՆԸ ԱՒԵԼԻ ԿԱՆՈՒԽ ԸՆԹԱՑՔ Կ'ԱՌՆԷ

*Բազմաթիւ գիտական փորձարկումներ ցոյց տուած են թէ կիներու եւ տղամարդոց ուղեղները որոշ չափով տարբեր են իրարմէ: Այս տարբերութիւնները յաճախ կը բացատրուին հորմոններու միջոցով: Սակայն, ֆիզիքական աշխատանքները եւս կը հաստատեն կարգ մը տարբերութիւններ երկու սեռերուն միջեւ:*

Newscastle *համալսարանի գիտնականները յայտնաբերած են ուղեղի նոր կապեր, որոնք առընչուած են մտքի եւ զգացական հասունութեան հետ: Հետազօտողները նաեւ յայտնաբերած են թէ ուղեղի այս կապերը աւելի կանուխ կը սկսին կազմաւորուիլ իգական սեռին քան տղամարդոց մօտ եւ այս պատճառով է, որ աղջիկները պատանեկութեան ընթացքին աւելի արագ կը հասուննան քան տղաները:*

*Այս երկարատեւ ուսումնասիրութեան մաս կազմած են 4-էն 40 տարեկան 121 անձեր: Մասնակիցներէն ոմանք ախտաճանաչուած են* autism*-ով, լուսնոտութեամբ (*epilepsy*) եւ* schizophrenia*-ով, որոնց պարագաներուն եւս յայտնուած են ուղեղային կապերու տարբերութիւններ:*

## ԱՂՔԱՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Psychological Science *ամսաթերթին մէջ հրատարակուած յօդուածի մը համաձայն՝ աղքատ երկիրներու բնակիչները ունին հետաքրքրական առաւելութիւններ: Թէեւ անոնց մօտ ընդհանուր կեանքի գոհունակութիւնը աւելի նուազ է քան հարուստ երկիրներու բնակիչներու մօտ, աղքատ երկիրներու ժողովուրդները աւելի կ'իմաստաւորեն իրենց կեանքը:*

*Այս յօդուածին համաձայն, զարգացող երկիրներու ժողովուրդները ունին հաւատք եւ յոյս, որոնք մեծապէս կ'իմաստաւորեն իրենց կեանքը եւ առիթ կու տան որ մարդիկ դիմագրաւեն իրենց դժուարութիւնները:*

*Հարուստ կամ զարգացած երկիրներու պարագային, մարդիկ նուազ ուշադրութիւն կը դարձնեն կրօնքի եւ հետեւաբար կը կորսնցնեն իրենց դրականութիւնը:*

*Անշուշտ կարելի չէ ընդհանրացնել այս յօդուածին տեսութիւնները, որովհետեւ բազմաթիւ զարգացած երկիրներ տակաւին կ'արժեւորեն կրօնքը եւ իրենց արժանիքները կը ստանան անկէ:*

*Այս գծով ուսումնասիրութիւններ կատարած են Իլինոյզի համալսարանի հետազօտական խումբերը մասնակցութեամբ աւելի քան 140 հազար կամաւորներու: Ուսումնասիրութեան մէջ նկատի առնուած են 132 երկիրներ:*

## ԸՆԿՃՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՍՐՏԻ ԿԱԹՈՒԱԾԻ ՎՏԱՆԳԸ

*Ամերիկեան նոր ուսումնասիրութեան մը շնորհիւ գիտնականներ յաջողած են յայտնաբերել ճնշուածութեան հետ կապուած ծինի մը վտանգաւոր հետեւանքներէն մէկը:* British Heart Foundation*-ի կողմէ կատարուած հետազօտութեան համաձայն՝ ճնշուածութեան հետ կապուած ծինը կրնայ բարձրացնել սրտի կաթուածէ տառապելու հաւանականութիւնը:* Plos one *ամսաթերթին համաձայն այս ծինը ունեցող մարդոց մօտ կրնայ մինչեւ 38 առ հարիւր համեմատութեամբ բարձրացնել սրտի կաթուած դիմագրաւելու հաւանականութիւնը: Ըստ գիտնականներուն, այս յարաբերակցութեան մէջ մեծ դեր ունին նաեւ անձի մը առողջապահական ընթացքը, սննդականոնը եւ քնանալու սովորութիւնները:*

## ՅԵՏԱՁՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐՎԵԿԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*Ընդհանրացած համոզում մըն է, որ թուաբանութեան մէջ յաջող աշակերտներ կամ չափահասներ ի ծնէ թուաբանական յատուկ կարողութիւններով օժտուած են: Սակայն, գիտութիւնը ցոյց կու տայ թէ ծինային գործօնները բաւարար չեն այս գծով:*

*Գիտութեան եւ Արհեստագիտութեան Նորվէկիոյ հա մալսարանի գիտնականներ վերջերս թուաբանութեան մէջ յառաջդիմելու գաղտնիքները յայտնաբերելու նպատակով կատարած են հետաքրքրական փորձարկում ներ: Այս ուսումնասիրութեան մաս կազմած են աւելի քան եօթանասուն նախակրթարանի աշակերտներ, որոնց միջին տարիքը 10.5 է:*

*Ուսումնասիրութեան արդիւնքները, որոնց մասին գրուած է* Psychological Reports *ամսաթերթին մէջ, ցոյց կու տան թէ թուաբանութեան ծիրին մէջ յաջողութիւնը մեծապէս կախեալ է այս ուղղութեամբ փորձեր կատարելէն եւ ոչ՝ ի ծնէ կարողութիւններէն:*

*Ուսումնասիրութեան հեղինակներէն՝ Սիկմընտսոն կ'ըսէ թէ եթէ աշակերտներ կը փափաքին յառաջդիմել թուաբանութեան մէջ, լաւ կ'ըլլայ, որ ջանք թափեն յաւելեալ վարժութիւններ կատարելու, որովհետեւ միայն փորձառութեամբ է, որ մարդիկ կրնան փայլիլ թուաբանութեան ճիւղին մէջ:*




## ՎԵՐՋԻՆԸ

*Դեկտեմբեր է՝ տարուան վերջին ամիսը: Բնականաբար «վերջինը» ըլլալով ինքնին կը պարտադրէ: Վերջին հանգրուանները, որքան ալ դրական փոփոխութիւններ բերեն յետագային, ներկայ ժամանակին մէջ դժուարութեամբ կ'ընկալուին: «Վերջին»ները դժուար են, որովհետեւ վերջ կը դնեն ներկայ ընթացքին եւ կը խախտեն մեր ժամանակի յարաբերականութեան մասին ըմբռնումները, ինչպէս նաեւ որոշ չափով մեզ կ'անջատեն մեր ներկայ ժամանակէն: Երբ կորսնցնենք մեր կեանքի ամէնէն կայուն եւ ամէնէն շատ գոյութիւն ունեցող գործօնը՝ ներկան, ի՞նչ կը մնայ մեզի:*

*«Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ»: Եթէ այս խօսքը նկատի ունենանք հոգեբանական շրջագիծէն ներս, կրնանք յայտնաբերել շատ մը նմանութիւններ մարդոց միջեւ: Ձեզ կարծեր, որ կայ անձ մը որ չէ մտածած ժամանակի, կեանքի ընթացքին եւ «վերջին»ին մասին: Սակայն մարդոց միջեւ հիմնական տարբերութիւնը մտածումներու խորքն է: Ոմանք կը հասնին յատակին, իսկ ուրիշներ կը ստեղծեն յատակ մը առաստաղին վրայ: Ոմանք քիչով կը բաւարարուին, իսկ ուրիշներ ամէն գնով կը նետուին մտածումներու ովկիանոսին մէջ: Հաւանաբար, երկու պարագաներուն ալ հարցումներուն մեծ մասը կը մնան անպատասխան, կամ պատասխանները կ'ըլլան ոչ-առարկայական եւ ոչ-ամբողջական:*

*Նոյն տրամաբանութեամբ՝ կեանքն ալ կրնայ աւարտիլ առանց ամբողջանալու: Երազները կը մնան երազ, խօսքերը կը մնան խօսք, զգացումները կը մնան անյայտ եւ մտածումները՝ կիսաւարտ: Եւ... կ'աւարտի կեանքը: Ահա թէ ինչու սարսափելի է «վերջին»ը:*

*Բայց կեանքին իսկական աւարտը այս չէ: Կեանքը կ'աւարտի այն պահուն երբ անոր աւարտը կը դառնայ նպատակ: Ո՞ւր պիտի հասնինք, ո՞ւր պէտք է հասնինք, ո՞ւր պէտք է կանգնեցնենք մեր «նաւակ»ը: Եւ մեր ամբողջ կեանքը կը վատնենք հասնելու «վերջին»ին, ուր կը կարծենք, որ մեծ ընդունելութիւն պիտի ունենան մեր «նաւակները»: Կեանքը իսկապէս կ'աւարտի այն պահուն, երբ «վերջինին» մէջ յայտնաբերենք խաբկանքը: Երբ այս պատրանքը դառնայ նպատակ՝ կ'աւարտի կեանքը:*

*Այս տարուան Դեկտեմբերը թող ըլլայ կամուրջ եւ ոչ աւարտ:*

*Կամուրջ՝ թեւակոխելու նոր տարի, նոր հանգրուան: Կեանքը հանգրուաններու հոսանք մըն է, որ ունի ոչ սկիզբ եւ ոչ ալ աւարտ, այլ ունի կամուրջներ, անվերջ կամուրջներ, որոնք կրնան ըլլալ ամուր կամ դիւրաբեկ: Կեանքը ընթացք է, իսկ ընթացքին մէջ նպատակ փնտռելը պատրանք է:*

*Երբ կորսնցնենք մեր ներկան, մեզի կը մնայ ստեղծել նոր ներկաներ, որոնք ներկայ ժամանակին մէջ ոչինչ են, ոչինչ կ'արժեն բայց ծնունդ կու տան անխուսափելի ապագային:*

## ԹՈՒՐՔԻԱՆ ԸՆՏՐՈՒԱԾ Է

*Շարունակուած էջ 7-էն*

*ռանգութեան եւ թանգարաններու գլխաւոր տնօրէն Մուրատ Սուալուն առանց դէմքի արտայայտութիւն ունենալու՝ «Նիւ Եորք Թայմզ» թերթին ըսած է. «Մենք միայն կը փափաքինք վերադարձնել այն, ինչ որ արդարօրէն մերն է: Եթէ դուք գաք իմ տունս եւ ինձմէ գողնաք արժէքաւոր իրեր, արդեօք ես իրաւունք չէ՞մ ունենար զանոնք վերադարձնելու»: Մ. Սուալուին, որ կը պնդէ, թէ գողութիւնն ու կողոպուտը սխալ են, անկախ անկէ, թէատոնք երբ տեղի ունեցած են, պէտք է յիշեցնել, որ Թուրքիան պահանջներ կրնայ ներկայացնել միայն այն ատեն երբ ալեւիներուն, ասորիներուն, արաբներուն, կիպրացիներուն, հայերուն, յոյներուն եւ քիւրտերուն վերադարձնէ ամէն ինչ, որ արդարօրէն անոնց կը պատկանի:*

*Նոյնքան զաւեշտալի էր Թուրքիոյ մշակոյթի նախարար Էրթուղրուլ Կիւնայի յայտարարութիւնը, որ ան կատարած է «Տի Իքոնիմիսթ» շաբաթաթերթին. «Ես անկեղծօրէն կը հաւատամ, որ իւրաքանչիւր հնութիւն աշխարհի որեւէ մասին մէջ ի վերջոյ պէտք է վերադառնայ իր հայրենիքը: Թէկուզ այդ իրերը պատրաստուած են քարէ, ինչպէս որ մարդիկ, այնպէս ալ անասունները, բոյսերն ու յուշարձանները հոգի ունին: Յուշարձանի մը հեռացնելը կ'ապակայունացնէ աշխարհը եւ անյարգալից վերաբերմունք է պատմութեան հանդէպ»:*

*Թուրք պաշտօնեաները իրենց երկիրը իբրեւ թալանի զոհ ներկայացնելու փոխարէն՝ պէտք է գիտակցին, որ իրենք իւրացուցած են բազմաթիւ հնութիւններ, որոնք իրենց օսմանեան նախնիները բռնագաւթած են աւելի քան տասնեակ մը դրացի երկիրներու գրաւման ատեն: Օրինակ մըն է Աղեքսանդր Մակեդոնացիի սարկոֆագը, որ 1887 թուականին յայտնաբերուած է Լիբանանի մէջ, Սիտոնի մերձակայքը, սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի հրամանով առաքուած է Պոլսոյ հնագիտական թանգարան, ուր ան կը պահուին մինչեւ այսօր իբրեւ թանգարանի ունեցուածքին ամենաթանկարժէք նմուշներէն մէկը: Այժմ Լիբանան կրնայ Թուրքիայէն ետ պահանջել այս արժէքաւոր մշակութային գանձը: Սէուտական Արաբիան եւս իրաւունք ունի պահանջելու բազմաթիւ իսլամական սուրբ մասունքներ, որոնք օսմանեան իշխանութիւններու կողմէ 19-րդ դարուն տեղափոխուած են Մեքքայէ:*

*Թուրքիոյ անդամակցութիւնը ԵՈՒՆԵՍՔՕ-ի Համաշխարհային ժառանգութեան յանձնաժողովին բացառիկ կարելիութիւն կ'ընձեռէ հայ ժողովուրդին եւ այլ ազգերու՝ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու թրքական կառավարութեան կողմէ իրենց մշակութային ժառանգութեան ապօրինի բռնագաւթման վրայ եւ պահանջելու անոնց անյապաղ վերադարձը:*

**Թարգմանեց՝**
**ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ**
**Արեւմտահայերէնի վերածեց՝**
**«Եռագոյն» կայքը**

HayastanInfo.net

## ԻՍԼԱՄԱՑՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՄԵՐ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻՆ

*Շարունակուած էջ 6-էն*

*ազգութիւնը կը գերադասէ: Ահա այսպիսի երեւոյթներու առջեւ է, որ մեր աւանդական ըմբռնումները փորձաքարի կը զարնուին: Բայց նորէն դուն քեզի հարց կու տաս, թէ ուրիշ ի՞նչ կրնային ընել այս մարդիկ՝ վերապրելու համար: Անոնց մեծ մասը աղջիկներ էին, որ բռնի կերպով ամուսնացուեցան այս երկրի բնիկներուն հետ, բացի Համշէնցիներէն:*

- Իսկ ազատ իսլամացում եղա՞ծ է:

***- Բնաւ:** Ազատ իսլամացում չէ եղած այս երկրին մէջ (Նկատի ունի Թուրքիան Ս.):*

*Ա.):Պարզապէս փրկուելու եւ աւելի խաղաղ կեանք մը ապրելու համար անոնք դարձած են իսլամներ: Ազատ որոշում մը չէր այդ մէկը այլ փրկուելու միջոց մը: Ըսեմ նաեւ որ կան անհատներ նաեւ որ իսլամացած են ազատ կամքով, բայց ատոնք կարելի չէ դնել 1915 -ին իսլամացուածներուն շարքին:Այդ օրերու պայմանները այնքան անտանելի եղած են, որ մարդիկ իրենց ապրուստին եւ գոյատեւումին յանուն ընդունած են իսլամը:*

*«Իսլամացուած Հայեր» նիւթով համաժողով*

- Վերը ըսիք որ Պոլիս եկած էք նաեւ մասնակցելու »Հրանդ Տինք« հիմնարկին կողմէ կազմակերպուած համագումարին. ի՞նչ կարելի է ըսել այս ուղղութեամբ:

***-** Այս համագումարին շնորհիւ է, որ իսլամացուած հայերէն շատեր իրենց ինքնութիւնը վերագտան ու բացայայտ կերպով յայտարարեցին, թէ իրենք հայեր են: Իհարկէ այս համագումարը կարելի է որպէս սկիզբ համարել:*

*Ըսեմ նաեւ, որ Պոլսոյ մէջ շատ մը գրողներ, այս համագումարին մասին խօսելով, ըսին որ համագումարը կը համարեն յեղափոխական: Ըսեմ, որ համագումարին ուշագրաւ ելոյթով հանդէս եկան Ֆէթհիյէ Չէթին (որ Տինք ընտանիքի փաստաբանն է, եւ եղած է այն անձնաւորութիւնը, որ առաջին անգամ ըլլալով, գրած է իսլամացուած հայերու նիւթին մասին: Անոր գիրքը կը կոչուի «Մեծ Մայրս» (Հայերէնի թարգմանուած Սալբի Գասպարեանի կողմէ.-Ս. Ա.) եւ Այշէ Կիւլ Ալթընայ, որուն գրած գիրքը ձեւով մը շարունակութիւնն է Չէթինի «Մեծ մայրիկս» գիրքին եւ կը կրէ՝ «Թոռնիկներս» խորագիրը: Համագումարի մասնակիցներուն համար չափազանց հետաքրքրական էր Նէւին Կըլտըզ Թահինճիօղլուլի ելոյթը, որ պատմած է բռնի կերպով թրքացուած հայուհիներու մասին եւ իր խօսքի աւարտին յայտնած է որ այդ բռնութիւնը գործողներն իր մեծ հայրերն են: Աւելի պակաս հետաքրքրական չէին ակադեմիկոս Իշխան Չիֆթճեանի ու պատմաբան Վահէ Թաշճեանի ելոյթները:*

*Անոնց թիւը Միլիոններու կը հասնի*

- Իսկ մանրամասն տուեալներ կա՞ն իսլամացուած հայերու թիւերուն մասին:

***-** Անկարելի է որ իսլամացուած հայերուն թիւը ճշդել, բայց, իմ կարծիքով, այն հայերը, որոնք պայմաններու բերումով իսլամացուած են անոնց թիւը կը հասնի միլիոններու:*

- Չէ՞ք չափազանցեր:

***- Ո՛չ: Երբե՛ք:**Բայց ըսեմ որ բաւական դժուար է անոնց թիւերուն մասին ճշգրիտ տուեալներ ներկայացնել, պարզ անոր համար, որ անոնք կազմակերպուած կեանք մը չեն վարեր:*

- Ի՞նչ կարելի է ըսել Պոլսահայ համայնքին մասին:

***-** Ըստ իս, Պոլսահայ համայնքը արժանի է շատ խոր յարգանքի, որովհետեւ անոնք մեծ փորձառութեամբ ու դժուարին պայմաններէ անցնելով՝ հասած են այսօրուան իրավիճակին: Յարգանք, որովհետեւ պոլսահայերը կարողացած են ճիշդ գնահատել, թէ ո՞ւր կ՚ապրին եւ ի՞նչ պայմաններով շրջապատուած են:*

- Խօսելով իսլամացուած հայերուն մասին՝ ձեր շփումներուն եւ հանդիպումներէն ետք ի՞նչ կարելի է ըսել անոնց մասին:Արդեօ՞ք անոնց համար կարեւոր է հայութեան միւս հատուածներուն կեցուածքն ու կարծիքը:

***-** Մինչեւ օրս իսլամացուած հայերը ոչ մէկ ձեւով փորձած են առնչուիլ ըսենք Պոլսահայ համայնքի անդամներուն հետ:Անոնք մինչեւ օրս կը խուսափէին, որովհետեւ վախ մը ունէին, որ կրնան չընդունուիլ հայերու կողմէ:*

*Միշտ վախ մը կը հալածէր զիրենք, ու այս համագումարը կարծէք առիթ մը եղաւ, որպէսզի իրենք եւս լաւ զգան ու հասկնան, որ պիտի ընդունուին որպէս հայութեան լիարժէք մէկ մասնիկը, որ պայմաններու բերումով իսլամացուած է: Այս համագումարը դուները լայն բացաւ, որ անոնք ալ մօտենան մեզի ու ճանաչումը ըլլայ փոխադարձ: Պատկերացուցէք, որ հարիւր տարուան պարապ մը կայ, ու այդ պարապը միասին պէտք է լեցնենք:*

*Մօտենանք առանց քարոզչական նպատակներու*

- Աւարտին, ձեր կարծիքով ի՞նչ պէտք է ըլլայ հայութեան տարբեր հատուածներուն մօտեցումը իսլամացուած հայերու նիւթին:

***-** Իմ կարծիքով հայութիւնը եւ յատկապէս Սփիւռքի հայութիւնը պէտք չէ քարոզչական մօտեցում ցուցաբերէն իսլամացուած հայերուն հանդէպ, որովհետեւ պատմական փորձէն ելլելով շատ յստակ դարձած է, որ անոնք աւելի լաւ գիտեն իրենց միջավայրը ու այդ գիտակցումով է, որ կրնան իրենց ճակատագիրը ճշդել:Մեզի կը մնայ յարգել զանոնք, լսել անոնց խնդիրները եւ յարմար ժամանակին միայն իրենց խնդրանքին անսալով օժանդակութեան ձեռք երկարել: Անոնք, որ արժանի են մեր ուշադրութեան:*

*Ես վստահ եմ:*

***Յ.Գ.** Յայտնեմ որ յառաջիկայ 2014 տարուան Մարտին Աւետիս Հաճեանի աշխատասիրութեամբ անգլերէնով լոյս տեսնելիք գիրքը խորագրուած է՝ A Secret Nation: The Hidden Armenians of Turkey*

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## ՄԵՐ ՍՐՏԵՐԸ ԻՐԱՐ ԿԱՊՈՂ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Շարունակուած էջ 14-էն*

*է խօսում սովորելով մեզանից եւ յաճախած մանկամսուրի տնօրէն՝ հայաստանցի յարգելի տիկնոջից: Նրա բնակարանը նաեւ օգտագործւում է որպէս մանկամսուր, նոր է, ունի քիչ թւով աշակերտներ, որոնք լաւապէս վարժւում են հայերէն լեզուին՝ հայաստանեան ոճով եւ առոգանութեամբ: Թոռս չի համբերում եւ իր հարցումն է ուղղում.*

*-Ապապա՛, էս ի՞նչ արեցիր եւ ի՞նչ ասացիր:*

*-Այսպիսի ժամանակ խաչակնքում ենք, «Հայր Մեր» ենք ասում եւ ննջեցեալների համար հոգու խաղաղութիւն ենք խնդրում:*

*Ելեկտրական դեղնաւուն լոյսի տակ խնկի հոտաւէտ ծուխը սփռւում է մեր շուրջ բոլորը եւ մուտք է գործում բնակարանից ներս հոգեպարար մթնոլորտ ստեղծելով: Տնեցիները մէկ-մէկ մօտենում են կրակին եւ խունկ են աւելացնում, կապտաւուն ծուխը լոյսից դէպի վեր դէպի աստղաբոյլ երկինքն է սաւառնում մեր աղօթքների հետ միասին եւ անհետանում տեսողութիւնից:*

*Խնկածխումը աւարտելով պատրաստւում ենք ընթրիքի համար: Յարկաբաժնում խատուտիկ տօնածառը իր երփներանգ ճրագներով ու շարիկներով տօնական շքեղութիւն եւ գեղեցկութիւն է պարգեւել բնակարանին եւ ուրախութիւն բնակիչների սրտերին ի մասնաւորի երեխաներին: Խտասալիկով հայերէն երգեր են սփռւում՝ ուրախ պար ու երաժշտութիւն: Ընթրիքի սեղանը պատրաստ է: Խաչակնքումով եւ «Հայր Մեր» Տէրունական աղօթքով նշխարքը մանրացնում եմ բաժակով գինու մէջ ի նշան Վերջին Ընթրիքի, բաժանում եմ ընտանեկան կազմի անդամների մէջ շնորհաւորելով Յիսուսի Ծնունդը, ապա կենացներ եւ մաղթանքներ:*

*Իսկապէս ինչ գեղեցիկ եւ տպաւորիչ է տօնական սեղանի շուրջ հաւաքուեն ընտանիքի բոլոր անդամները եւ միաբանաբար մէկ սիրտ ու մէկ հոգի դարձած նշեն մեր տօները հայկական սովորութիւններով: Այս սովորութիւնների պահպանումը անհրաժեշտութիւն է մանաւանդ հայրենիքից հեռու օտար ափերում:*

*Թող մեր երիտասարդ ծնողները շատ առիթ տան երեխաներին առաւել շփուեն եւ հաղորդուեն իրենց պապիկ-տատիկների հետ, նրանք ընտանիքի արմատն են, նրանցով են փոխանցւում մեր սովորութիւնները, նրանցով են բալիկները սնւում հայկականութեամբ: Պապիկն ու տատիկը սերնդաշաղկապն ու վստահելի երաշխիքն են՝ առհաւատչեան:*

## ԸՆԿԵՐԱԼԵԶՈՒԱԲԱՆ՝ ԴՈԿՏ. ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*սին unesco-ի կատարած սահմանումներն ու Պէյրութի մէջ իր կատարած հայոց լեզուի մասին հարցախոյզի արդիւնքները:*

*Դասախօսութենէն առաջ, Քուէյթի 100 ամեակի Յանձնախումբի ատենապետ Պրն. Տիգրան Պայաթեան հակիրճ կերպով ներկայացուց Տիկ. Արտա Պօյնէրեան-Ճէպէճեանի կենսագրութիւնն ու մասնագիտական ուղին, ինչպէս նաեւ անոր մատուցելիք դասախօսութեան նիւթը:*

*Շուրջ մէկ ժամուան տեւողութեան ընթացքին Տիկ. Արտա ոչ միայն դիտել տուաւ արեւմտահայերէնին սպառնացող վտանգները, այլեւ որպէս ընկերալեզուաբան եւ հայ մարդ, առաջարկեց միջոցներ, դէմ կանգնելու այդ վտանգին եւ զարգացնելու մեր լեզուն: Միջոցներ, որոնք կ՚ենթադրեն աշակերտներ-ծնող համաձայնութիւն եւ գիտակցութիւն: Ան կարեւորութեամբ նշեց նաեւ, որ արեւմտահայերէնին տիրող վիճակը արդիւնք է համաշխարհայնացման եւ օտարին բարքերը ընդունելու մեր երիտասարդներու բուռն փափաքին: Հետեւաբար կոչ ըրաւ բոլոր ծնողներուն ըլլալ առաւել զգօն ու զգաստ, որպէսզի հետագայ սերունդը պահպանէ իր արմատները եւ չդառնայ աշխարհաքաղաքացի:*

*Արդարօրէն, Տիկ. Արտան, իր անմիջականութեամբ եւ ներկայացման իւրայատուկ ոճով տարբեր ուղղուածութեամբ մտածողներուն մօտ մտահոգութեան եւ հետաքրքրութեան ալիք բարձրացուց: Եւ դասախօսութեան աւարտին, մեծ սիրով ու անկեղծութեամբ լսեց անոնց կարծիքներն ու պատասխանեց հարցերուն:*

*Աւարտին խօսք առաւ Քուէյթի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Արտակ Քհնյ. Քէհեայեան, նշելով, որ բոլոր վտանգները, որոնք կը դիմագրաւենք, արդիւնք են մեր անտարբերութեան եւ սխալ վարմունքին: Հետեւաբար, Քահանայ Հայրը իր հերթին յորդորեց ըլլալ միասնական եւ դէմ կանգնիլ մեր ինքնութիւնը խաթարող բոլոր սպառնալիքներուն դէմ:*

*Նշենք նաեւ, որ Դիկտ. Արտա Պօյնէրեան-Ճէպէճեան նոյն նիւթով երկու դասախօսութեամբ հանդէս եկաւ Ազգային Վարժարանէն ներս, իր միտքերն ու մտահոգութիւնները կիսելով Վարժարանի երկրորդական բաժնի եւ 9-րդ դասարանի աշակերտութեան հետ:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՄԱՀԱԶԴ



ՎԱՆԱ ԱՐԱՔՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ
(Ծնեալ՝ Փետր. 20, 2006ին, Կլենտէյլ)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրելի զաւկին, քրոջ եւ եղբօր զաւկին՝ ՎԱՆԱ ԱՐԱՔՍԻ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ վաղահաս մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Դեկտեմբեր 18, 2013ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, Դեկտեմբեր 27, 2013, առաւօտեան ժամը 11:00ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, 5300 White Oak Avenue, Encino, CA որմէ ետք հանգուցեալի մարմինը պիտի փոխադրուի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատուն:

Սգակիրներ՝
Ծնողքը՝ Վարդան եւ Մարիա Գասպարեան
ԵՕ□այրը՝ Շանթ Գասպարեան
Հօրաքոյրները՝ Վարդուհի եւ Վազգէն Բաշայեան եւ զաւակները
Լուսին եւ Ճորճ Գալուստեան եւ զաւակները
Մարօ եւ Ասմէմ Էս-Սաիտ եւ զաւակները
Մօրաքոյրները՝ Յասմիկ եւ Պերճ Պիթար եւ զաւակները (Հալէպ)
Անի Հալլաճեան եւ զաւակները (Հալէպ)
Սոնա եւ Գօգօ Մատարեան եւ զաւակները (Հալէպ)
Կնքահայրը՝ Գէորգ եւ Լենա Գորթոշեան եւ զաւակները

Եւ համայն Գասպարեան, Քէօսէյեան, Գորթոշեան, Բաշայեան, Գալուստեան, Էսսաիտ, Պիթար, Հալլաճեան, Մատարեան, Անուշեան, Վարդանեան, Սահակեան, Գրաճեան, Շաքարեան, Թաշճեան, Զերենցեան, Տէօքմէճեան, Եյլտիզ, Գոզայա, Պոսնոյեան, Մոմընի, Կրով, Պէյլի, Ղազարեան, Եփրեմեան, Սէմէրճեան, Քիւրտօղլեան, Պարոյեան, Յարութիւնեան, Սիմիտեան, Մելիքեան եւ Ալ Հալու ընտանիքները, ընկերներն ու ընկերուհիները, հարազատներն ու բարեկամները

Թաղման արարողութենէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Էնսինոյի «Աւետիսեան» սրահին մէջ, 5300 White Oak Ave.

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել ՀՕՄի «Անահիտ» մասնաճիւղի Շաբաթօրեայ վարժարանին, ՀՄԸՄի «Մասիս» մասնաճիւղին կամ Համազգայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «Նայիրի» պարախումբին:

# ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՎԱՆԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ-ի վաղահաս մահուան տխուր առիթով, «Մասիս» Շաբաթաթերթի անձնակազմը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս հօրաքրոջ՝ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Լուսին Գալուստեաններին:

# ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ

Շարունակուած էջ 7-էն

վերաբերեալ՝ շեշտելով իրենց յարաբերութիւնների ներկայիս հիմքերը վերանայելու եւ թարմացնելու անհրաժեշտութիւնը»:

Միաժամանակ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Եւրոպական միութիւնը հանդէս են եկել համատեղ յայտարարութեամբ, որում մասնաւորապէս ընդգծւում է այն միտքը, որ «Եւրոպական միութիւնն ու Հայաստանը ունեն սերտ կապեր եւ վերահաստատում են իրենց յանձնառութիւնը աւելի զարգացնել եւ ամրապնդել արեւելեան գործընկերութեան շրջանակներում փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցութիւնը: Յենուելով ընդհանուր արժէքների վրայ՝ երկու կողմերը յանձնառու են զարգացնել համագործակցութիւնը՝ ուղղուած ժողովրդավարական հաստատութիւնների եւ դատական համակարգի շարունակական բարելաւմանը, մարդու իրաւունքների եւ օրէնքի գերակայութեան խթանմանը, արդիւնաւէտ կառավարմանը, կոռուպցիայի դէմ պայքարին, քաղաքացիական հասարակութեան ամրապնդմանը, առեւտրի ու ներդրումների ընդլայնման համար միջավայրի յետագայ կատարելագործմանը, գործընկերութեան շարունակական իրականացմանը եւ ոլորտային համագործակցութեան ընդլայնմանը»:

Մնում է յուսալ, որ յայտարարութեան դրոյթներն իրենց զարգացումները կ՚ունենան ոչ թէ հռետորաբանութեան, այլ կոնկրետ գործողութիւնների տիրոյթում: Ինչ վերաբերում է գագաթնաժողովին, ապա, ըստ էութեան, այն չկարողացաւ սպասուած առաջընթացն արձանագրել, քանի որ շատ հարցականներ չգտան իրենց պատասխանը: Գագաթնաժողովն աւարտուեց, սակայն հարցականները մնացին ու շարունակւում են:

# «ՄՈՐՄՈՔՈՂ ԱՆՑԵԱԼԻ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ»

Շարունակուած էջ 16-էն

ճառէ, վասնզի հողը կեանք է: Առանց հողի չկայ հայրենիք, ժողովուրդ, ազգ, ինքնատիպ մշակոյթ:

Մինաս Գոճայեան լայն կը բանայ կարկինը, երբ խնդրոյ առարկան մեր իրաւունքներն են: Հեղինակը անյուսօրէն չ՚ողբար անվերադարձ կորուստ մը, այլ յոյս կը յայտնէ որ քաղաքական բանակցութեամբ, ժամանակի համբերութեամբ եւ անվերջ պահանջատիրութեամբ, միշտ ալ կարելիութիւն կայ հասնելու մեր երազին վերատիրացման: Յիշել է պէտք Գուրգէն Մահարիի մէկ նշանաւոր խօսքը՝ «Անյոյս մարդուն միակ յոյսը կրկին ու կրկին յոյսն է»: Եւ մի՞թէ այդպէս ցոյց չի տար աշխարհի ազգերու պատմութիւնը, որ լի է անակնկալներով ու զարմանահրաշ դէպքերով: Հետեւաբար, էականը այն է, որ չընկրկինք ու յուսահատութեան ալեաց մէջ չընկղմինք, այլ՝ ընդհակառակը, աշխատինք միատեղ, միասիրտ, աննկուն ուժով, անկոտրում կամքով ու անտեղիտալի յանձնառումով: Մեր անտէրունչ հողերը իրենց հարազատ տէրերուն կը սպասեն անձկութեամբ: Ժամանակի խնդիր է: Պատմութիւնը փոփոխական է, ոչինչ կայ անլոյծ: Հին Յոյները ճիշդ ըսած են՝ կեանքի մէջ ամէն ինչ կը հոսի…:

Հպանցիկ ակնարկ մը ձգելով մեր անցեալի արիւնալի պատմութեան վրայ, կը տեսնենք թէ ինչքա՜ն դասեր կան առնելիք այնտեղ մեր ապագայի ու մեր կորուսեալ հողերու ձեռքբերման ուղղութեամբ: Դասերէն գերագոյնը թերեւս այն է, ինչպէս շատ իմաստունօրէն կը նշէ հեղինակը, որ մեր ժողովուրդը յետ այսու պէտք չէ երբեք ապաւինի օտար ազգերու միջամտութեան, ողորմութեան, աջակցութեան, կամ թէկուզ՝ մեր հարցերու բարւոք լուծման հարեւանցի մասնակցութեան:

Հեղինակը խորին ընդվզումով ու ցասումով կ՚արտայայտուի պատմական խեղաթիւրումներու մասին: Բնական է, որ ըլլան անգրագէտ զանգուածներ որ հաւատան իրենց տրուած բոլոր սխալ տեղեկութիւններուն: Բայց ինչպէ՞ս պայքարիլ այն գիտակից տարրին դէմ (հնագէտ, պատմագէտ, մտաւորական, ուսուցիչ, պետութիւն), որ դիտումնաւոր կերպով պատմական փաստերը կ՚այլափոխէ, կ՚աղաւաղէ՝ ի նպաստ իր ազգին ու ի պատիւ իր մշակոյթին: Եթէ պարկեշտութիւնը առ յաւէտ աներեւութացած է, այս զանգուածային պայքար պէտք է շղթայազերծուի անոր դէմ եւ առաջքը առնուի այս անուղղայ ընթացքին:

Պատմութեան դասին մէջ կը մտնէ նաեւ մեր ժողովուրդի ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը: Մինաս Գոճայեան յաճախակի կը վկայակոչէ պատմական սխրալի դէպքեր, ուր մեր անվեհեր մարտիկները կ՚առճակատեն դարաւոր ոսոխի դէմ եւ ապշեցուցիչ արդիւնքներու կը հասնին՝ փրկելով իրենց պատիւը եւ ազգի զաւակները: Ընթերցողը խորին հպարտութեամբ կը կարդայ այն տողերը, թէ մեր քաջարի կռուողները անհաւասար մարտեր մղած են եւ արդարութիւն պահանջած:

Տխրութեամբ ու մեծ ցաւով կ՚ընթերցուին այն հատուածները, ուր հայութիւնը կը յանձնուի թշնամիին գութին ու… եաթաղանին: Արդար զայրոյթով կը կարդացուին հայ մատնիչներու, դաւաճաններու մասին, որոնց սեւ ու նենգ արարքներով, հայութիւնը մեծ կորուստներ կու տայ: Ռազմունակ ժողովուրդ մը երբեք պէտք չէ գլանայ իմաստախոհութեամբ պաշտպանելու ինքզինք՝ ամեհի հարուածներով ետ մղելու ամէն գրոհ, ոտնձգութիւն եւ թշնամական արարք: Միաբանութիւն եւ հաւաքական զոհողութիւն է հարկաւոր: Ֆրանսացիք ինչքա՜ն ճիշդ ըսած են՝ « On ne fait pas d'omelette sans casser des oeuf», որ է՝ առանց հաւկիթ կոտրելու ձուածեղ չի շինուիր: Այլ խօսքով, արդիւնքի հասնելու համար զոհողութիւն է պէտք:

Մինաս Գոճայեանին ոճը գեղեցիկ է, իսկ լեզուն՝ մաքուր, հարուստ, պատկերաւոր: Ան լայնօրէն օգտուած է մեր հարուստ բառամթերքէն եւ իր գործը դարձուած գերընտիր: Հեղինակին յատուկ զուարթախօսութիւնները առաւել եւս կը համեմեն անոր պատմողական ոճը ու գիրքը կը դարձնեն գրաւիչ: Գիրքը օժտուած է գունաւոր նկարներով, որոնք կու գան առանձնակի փայլք մը տալու հրատարակութեան: Զմոռնանք որ տեղադրուած նկարները խօսուն վկաներն են մեր անցեալի փառքին, պայծառ օրերուն ու նուաճումներուն:

Ներկայիս, յուսադրիչ են կարգ մը հին ու աւերակ դարձած եկեղեցիներու վերանորոգութիւնն ու վերստին գործածութիւնը, անդին սակայն, բաւական մորմոքիչ է ու սրտաբեկութիւն պատճառող՝ զանազան եկեղեցիներու անպատկառօրէն մզկիթի վերածումը: Ազգեր պէտք է սորվին զիրար յարգելու եւ նուիրականութիւնները ամէն բանէ վեր դասելու տարրական դասը: Նման ոտնահարումներ ոչ ոքի պատիւ կը բերեն: Ազգերու գոյավիճակը կարելի է բարելաւել միայն ու միայն փոխադարձ յարգանքով:

Ներկայ Հայաստանը մեծագոյն պարգեւն է հայութեան, որ պէտք է պահուի, պահպանուի իբրեւ գբիբ ական: Պատմութեան մատուցած դասերը անփոխարինելի են: Գուրգուրանք մեր պատառիկ մը հողին վրայ եւ զայն սիրէն: Մեր ամենաջերմ շնորհաւորութիւնները սիրելի Մինասին՝ հանրութեան մատուցած իր այս գեղեցիկ հատորին համար: Կը մաղթենք որ անոր եռանդը եւ կորովը անպակաս ըլլան, որպէսզի ան շարունակէ նման օգտակար աշխատութիւններ գրել:

Գրիգոր Դալար, պատուական եղբայր:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձերով
Հեռաձայնել՝ (626) 398-0506

## ԾՆՈՒՆԴ HAPPY CHRISTMAS

**ՊՕՂՈՍ ԱՐՄԷՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ**

Մինչեւ Յիսուսի Ծնունդի տօնը, արեւելքի ժողովուրդները եւ Եւրոպացիները բազում դարեր առաջ տօնախմբել են լոյսի ծնունդը: Ձմեռային արեւադարձին, հին աշխարհի երկրագործ ժողովուրդները ուրախացել էին, որ անցնում էին ցուրտ օրերը, լոյսի երկար օրեր էին լինելու:

Եւրոպայի հիւսիսային կողմի երկրների մարդիկ, Դեկտեմբերի 21-ից սկսել էին տօնախմբել «Ծնունդ Տեառն» տօնը, իսկ ձմեռային արեւադարձը Յունուարի ընթացքում:Այն տօնախմբելու ժամանակ, խարոյկներ վառելու համար անտառից կոճղեր էին բերել: Ամերիկայի Միացեալ Նահանգներում նման արարողութիւն կատարւում է նոյնիսկ մինչեւ հիմա էլ: Մինչեւ խարոյկի լրիւ վառուելը, 12 օրեր շարունակ խնճոյքներ կատարել, հաւատացել էին, որ նրանից ժայթքող կայծերի ցայտքերը խորհրդանշում էին մի նոր հորթի կամ խոճկորի ծնունդը:

Նախկինում, Հռովմէացիները Դեկտեմբերի ձմեռային արեւադարձը տօնախմբել էին երկրագործութեան աստուած՝ «Սատուրն»-ի ծնունդի տօնը, որը անուանել էին «Սատուրնալիա»: Այն տօնախմբել էին երկար օրեր տեւող համաժողովրդային խրախճանքներով: Այդ ընթացքում ստրուկները դարձել էին ազատներ, իսկ գիւղական բնակիչները տնօրինել էին քաղաքները:

Յետագային, Հռովմէացիները Դեկտեբերի 25-ի ձմեռային արեւադարձին տօնախմբել էին արեւի աստուած Միթրայի ծնունդը: Նրանց համար Միթրան եղել է լոյսի խորհրդանիշը՝ երկնքում հուրհուրացող արեւը: Միթրա՝ Միհր-Մհերը, հազար-հազար տարիներ առաջ եղել է Արմէն-հայերի արեւ աստուածը, իրենց համարել էին արեւից ծնուած՝ արեւորդիներ: Միհր աստուծոյ պաշտամունքի հիման վրայ Արմինա-Հայաստանում ստեղծուել է Միհրականութիւնը: Հայկական Լեռնաշխարհից արեւելք-արեւմուտք-հարաւ գնացած արարչական արի մարդիկ, որոնց յետագային Հնդեւրոպական ժողովուրդ էին անուանելու, իրենց հետ տարել էին նաեւ Միհրի պաշտամունքը՝ Միհրականութեան հաւատքը:Նրա պաշտամունքը հասել է Հռովմ, որի կայսրերը հովանաւորել էին այն: Քրիստոնէութեան հաւատքի ընդունումից յետոյ Միհրականութիւնը դադարել է գոյատեւել: Միթրա, Մհերի Պարսկերէն լեզուի ձեւափոխուած անուանումն է, որի պաշտամունքը իրենք նաեւ տարել էին Արմինայից: Ըստ Պատմահայր Մովսէս Խորենացու վկայութեան, Արմէն-հայերը Պարսկաստանից շատ աւելի վաղ էին դիցաբանութիւն ունեցել: Մեր թուարկութեան 67-ին, Տրդատ Ա. թագաւորի կողմից կառուցուել է Գառնիի տաճարը,այն նուիրուել Արեւ աստուած Միհրին:

Նոր թուարկութիւն, Յունուարի վեց, Դաւիթի ցեղից Յովակիմի ու Աննայի դուստր Մարիամը եւ նրա նշանած Յովսէփը, Նազարէթից Երուսաղէմ էին գնում Հռովմէացիների կազմակերպած մարդահամարին մասնակցելու: Երուսաղէմ գնալու ճանապարհի Բեթլեհէմ քաղաքի մի քարայրի մսուրում Մարիամը մանչ զաւակ է ծնել, Եբրայեցիներին խոստացուած Մեսիան, Փրկիչն էր, Յիսուս են անուանել Նրան: Աւետաբեր հրեշտակները աւետել էին Նրա ծնունդը, այցի եկած հովիւները գառնուկներ նուիրել նրան: Արեւելքից, հայեացքները երկինք յառած երեք մոգերգնում էինԲեթլեհէմ, Նրանց էլ աւետել էին Մեսիայի ծնունդը: Մոգերը գնացել մսուր, երկրպագել մանչին:

Իսկ ո՞վքեր էին «Նոր Կտակարանում» յիշատակուած այդ մոգերը: Արեւելքից ճամբորդող քուրմեր էին նրանք, որոնք հետեւում էին երկնակամարով անցնող մի լուսաւոր աստղի երթին:Իրենց հաւատքի աստուածների սպասաւորներ լինելուց բացի, նրանք գիտութիւններով, մշակոյթով ու մասնաւորպէս աստղագիտութեամբ էին զբաղուել: Նրանց գալուստը այսպէս է մեկնաբանել Արմէն մտաւորական Յովհաննէս Շահմարանեանը:

Այդ մոգեր-քուրմերը Իսրայելի երկրի հիւսիսային կողմըԱրմինա լեռնաշխարհի արեւորդի Արմէն ցեղի մարդիկ էին: Արեւելքի նրանց դրախտիկ երկրում էր խիստ զարգացած աստղագիտութիւնը, որտեղ գործում էին բազում աստղադիտարաններ, մասնաւորապէս Սիւնեաց աշխարհի Քարահունչ աւանի «Զօրաց Քարեր» աստղադիտարանը: Նրանք Պարսիկներ լինել չէին կարող, քանզի Իսրայելը գաւթած հռովմէացիները իրենց թշնամի երկրի մարդկանց չէին արտօնի այդտեղով ճամբորդել: Յետագայում, մոգերից Բաղտասարը թաղուել է Արմինա երկրի Մոկք գաւառում, որտեղից «ք» յոգնակի նշան է, իսկ «Մոկ(ք) բառի «կ-գ» տառերի փոփոխութիւնը հնչիւնափոխութեան օրինաչափութեան երեւոյթ է:

Պատմաբանների ու տարբեր արձանագրութիւնների վկայութիւններով Արմինա-Հայաստան երկրում խիստ զարգացած է եղել մշակոյթը, գիտութիւնները, բարեպաշտ աստուածների իմաստնութիւնը: Նրանց ցեղից բազում իմաստուն մարդիկ աշխարհներ են լուսաւորել: Տուէ՛ք այդ ցեղին խաղաղութիւն, Նրանց հանճարներից «աստուածներ» կը յառնեն: Այդ արարչական մարդկանց հոգիներին աստուածները բարեպաշտութիւն են հոսել, հաւատացին թշնամու խօսքին, խաբեցին նրանց, խաբուեցին, եթէ իրենց աստուածների ոգին ու ապրելու կամքը չլինէր . . . ոչ եւս էին: Թագաւորի սպառնալիքի ահից, Մեսիա աւետուած այդ Մանչին ո՞ւր պիտի տանէին, եթէ ոչ հիւսիսի լեռնաշխարհի իմաստունների երկիր՝ Արմինա-Հայաստան: Երեսուն տարի յետոյ ետ եկաւ, Աստուծոյ որդի կոչեցին Նրան, այնպէս ինչպէս այն երկրի աստուած Միհրն էր Արա աստուծոյ որդի: Յիսուս (Փրկիչ) անուանեցին, յետոյ էլ երկնային լոյսով օծուելով «Քրիստոս» կոչեցին: Այնտեղ ուսանած բարեպաշտութեան, սիրոյ, լոյսի, հաւատքի, խաղաղութեան իմաստնութեան ուսմունքը քարոզեց, հիւանդներին հաւատքովուժով բժշկեց: Իր իմաստնութեան հրավառ լոյսի, իր անեղծ տիեզերական հաւատքի համար գամեցին խաչափայտին:

Վաղ Քրիստոնեաները, Յիսուսի Ծնունդը չէին տօնել, հիմնականում Զատիկն էին տօնախմբել: Քրիստոնէական եկեղեցու պաշտօնատարները, 431 թուականի Եփեսոսի տիեզերական ժողովին, Յունուարի 6-ը հաստատել են որպէս Յիսուսի Ծննդեան օր, քանի որ Աստղագէտների հաշուարկներով Յիսուսի Ծննդեան ժամանակ խոշոր աստղի երկնակամար յայտնուելը, կարող էր պատահած լինէր ժամանակի այդ հատուածում: Աստուածաշնչում յիշատակուած չի եղեղ Յիսուսի Ծննդեան թուականը:

Մաքրակրօն-Puritans, աղանդի հետեւորդները ժխտում են Յունուարի 6-ը Յիսուսի Ծննդեան տօն համարելը, ըստ նրանց այն կարող էր պատահած լինէր գարնանը, քանի որ հովիւները իրենց անասունների հօտերը արածացնում են ոչ թէ ձմռանը, այլ գարնանը:

Հռովմի Յուլիոս Ա. Պապը, հրահանգել էր Դեկտեմբերի 25-ը համարել Յիսուսի Ծննդեան օր, որը համընկել էր իրենց նախկին հեթանոս հաւատքի արեւ աստուած Միթրա-Միհրի տօնախմբութիւնների օրուան: Այն անուանել էին՝ «Տօն Ծննդեան»: Հռովմի եկեղեցու այդ որոշման նպատակը եղել է հեթանոս աստուած Միթրա-Միհրի յիշողութիւնը մարելը:Անգլիայում նման տօն օր սկսել էին կատարել 6-րդ դարից, իսկ Սկանտինաւեան երկրներում 8-րդ դարից: Յունական ու Ռուսական ուղղափառ եկեղեցիները շարունակել են Յիսուսի Ծնունդը կատարել Յունուարի 6-ին, իսկ մկրտութիւնը եօթին: Հայկական Առաքելական, Ասորի, Ղպտի եւ Հաբէշ արեւելեան եկեղեցիները հաւատարիմ էին մնացել Եփեսոսի տիեզերական ժողովի որոշմանը, Յիսուսի Ծնունդը եւ մկրտութիւնը միասին կատարել Յունուարի 6-ի օրը:

Յիսուսի Ծնունդը փառաբանելու համար կրօնական ու աշխահիկ երգեր էին յօրինել: Փոքրերը, արարողական զգեստներ հագած, մոմեր վառած տներ են այցելել, Յիսուսի Ծնունդը երգերով աւետելու համար: Այդ հմայիչ, քաղցրահունչ անուշ երգերը գովերգել էին բարեգործութիւնը, որոնք բարի կամքի ուժեղ ազդեցութիւն էին գործել հասարակութեան վրայ: Ամերիկեան յեղափոխութիւնից յետոյ երկրում անգլիական սովորութիւնները նախընտրելի չէին համարուել, նոյնիսկ Յիսուսի Ծնունդը: 1789 թուականի Դեկտեմբերի 25-ին, ամերիկեան սահմանադրութեան հաստատման նիստի օրը պատահաբար համընկել էր Յիսուսի Ծննդեան օրուան: Մինչեւ 1870թուականի Յունուարի վեցը, Յիսուսի Ծննդեան տօնը յայտարարուած չէր եղել որպէս դաշնակցային պաշտօնական տօն՝ Christmas Day, որը Ամերիկայի Միացեալ Նահանգներում ինչպիսի շքեղութեամբ է այժմ տօնախմբւում:




www.massispost.com
daily news updates

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com